ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

ПЕРСИДСКИЕ УКАЗЫ МАТЕНАДАРАНА

فرامین فارسی ماتناداران

I

ГОСУДАРСТВЕННОЕ ХРАНИЛИЩЕ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР
(МАТЕНАДАРАН)

ПЕРСИДСКИЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА

I

УКАЗЫ

ВЫПУСК ПЕРВЫЙ

(XV—XVI вв.)

Составил
А. Д. ПАПАЗЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

9(47.925)
Պ-94

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

I

ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

(ԺԵ—ԺԶ դդ.)

Կազմեց
Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

1309
ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека
ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

Այս առաջին պրակով հիմք է դրվում Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հրատարակությանը, որը զգալի չափով կարող է նպաստել ԺԵ—ԺԹ դարերի Հայաստանի և մերձակա երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պատմության բազմաթիվ մութ և մինչ այժմ չլուսաբանված հարցերի ուսումնասիրության գործին:

Սույն պրակի մեջ ամփոփված են ԺԵ—ԺԶ դարերի 23 պարսկերեն հրովարտակներ:

Պարսկերեն բնագրերը վերծանել և պատրաստել է հրատարակության, թարգմանել է հայերենի, գրել է առաջաբան և ծանոթագրություններ, տալով նաև հարկային, վարչական, սոցիալական ու այլ տերմինների բացատրություններ՝ Հ. Դ. Փափազյանը:

Գտնելով, որ հրատարակվող վավերագրերը գիտական մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն հայ ժողովրդի համապատասխան դարերի պատմության, այլ նաև Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրության համար, անհրաժեշտ համարվեց պրակին կցել նաև վավերագրերի, առաջաբանի, ծանոթագրությունների և տերմինների բացատրության ռուսերեն թարգմանությունը, որը կատարել է Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը:

«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի հաջորդ՝ Բ. պրակը կընդգրկի ԺԷ դարի առաջին կեսի հրովարտակները:

Մատենադարան

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) արխիվային ֆոնդերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արաբատառ (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) վավերագրերի ֆոնդը, որտեղ պահվող շուրջ 1500 վավերագրերը հարուստ և բազմազան նյութ են մատակարարում ոչ միայն Հայաստանի և Անդրկովկասի, այլ ամբողջ Առաջավոր Ասիայի ԺԶ—ԺԹ դդ. սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար։

Այդ վավերագրերը իրենց մեծ մասով վերաբերում են Արևելյան Հայաստանի վանքերին և տարբեր ժամանակներում հավաքվել են ու կենտրոնացվել Էջմիածնի արխիվում։ Այստեղ մենք գտնում ենք վավերագրեր բերված Գանձասարից, Տաթևից, Հավուց-Թառից, Հովհաննավանքից, Սաղմոսավանքից, Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքից, Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի կամ Մաղարդա վանքից, Մակվի Թադևոս Առաքյալի վանքից և հեռու կամ մոտիկ այլ վանքերից։ Արաբատառ վավերագրերի ֆոնդում տեղ են գտել նաև մի շարք անձնական բնույթի փաստաթղթեր, որոնց մի մասը զանազան տնտեսական գործարքների ժամանակ տրվել է Էջմիածնի վանքին ի պահ, իսկ մյուս մասը հավաքվել ու պահպանվել է սոսկ որպես պատմական արժեք ներկայացնող փաստաթուղթ։

Մի կողմ թողնելով անձնական բնույթի փաստաթղթերը (անձնական նամակներ և այլ գրություններ), որոնք իրենց հերթին առանձին արժեք են ներկայացնում և կարևոր են, ինչպես քաղաքական, այնպես նաև քաղաքացիական պատմության ուսումնասիրության համար, այս ֆոնդի պարսկերեն վավերագրերը կարելի է բաժանել երեք խմբի։

Առաջին մեծ խմբի մեջ են մտնում շահերի կողմից տրըված հրովարտակներն ու հրամանագրերը (ֆերմաններ և հոքմեր), տեղական խաների ու այլ բարձրաստիճան անձնավորու-

թյունների կողմից տրված հրամանագրերը (հոքմեր, թաալիքաներ և վասիքաներ) և մուսուլմանական կրոնական առաջնորդների՝ սադրի, շեյխ-ուլ-իսլամի կամ մուֆթիի կողմից զանազան վիճելի հարցերի մասին տրված վճիռները (ֆաթվաներ և միսալներ):

Երկրորդ, ոչ պակաս մեծ խմբի մեջ մտնում են միայն շարիաթական-նոտարական գրասենյակներում կամ Շար՛ի մեջլիսներում կազմված արձանագրությունները, որոնք վերաբերում են հողի կամ այլ ստացվածքների առուծախին, նվիրատվությանը, վարձակալման և այլ գործարքների (ղաբալեներ, վակֆնամեներ, իջարենամեներ և այլն):

Երրորդ, համեմատաբար ավելի փոքր խմբի մեջ են մտնում այն բոլոր ոչ շարիաթական-նոտարական բնույթի համաձայնագրերը, պայմանագրերը, համախոսական գրությունները ու այս կարգի այլ փաստաթղթերը, որոնք վերաբերում են առանձին քաղաքացիների միջև տեղի ունեցած ժառանգական վեճերին, տարբեր գյուղական համայնքների միջև սահմանային և ոռոգման հարցերի շուրջ առաջացած տարաձայնություններին և ռայաթների կողմից հողային սեփականության և հողօգտագործման իրավունքի մասին տրված վկայություններին (սնուրնամեներ, շհադաթնամեներ, հոջջաթնամեներ և այլն):

Վերջին երկու խմբերի վավերագրերը, կարելի է ասել, որ իրենց մեծ մասով վերաբերում են տնտեսական և հատկապես ագրարային հարցերին: Մուլքային գյուղերի, ինչպես ամբողջությամբ, այնպես նաև առանձին դանգերով կամ կես ու քառորդ դանգով վաճառման, պարտքի դիմաց գրավ դրվելու, նվիրատվության և այլ կարգի օտարումների մասին են խոսում Շար՛ի նոտարական գրասենյակներում կազմված բազմաթիվ «ղաբալեներն» ու «վակֆնամեները»: Դրանք մուլքային ժառանգական հողատիրության էությունը ցույց տվող հիանալի փաստաթղթեր են, որոնց խրոնոլոգիական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու հիշյալ հողատիրական ինստիտուտի մեջ տեղի ունեցած փոփոխությունների պատմության հետ ԺԵ—ԺԸ դդ.:

Առանձին արժեք են ներկայացնում մանր և խոշոր հողակտորների, այգիների, ջրաղացների, դինգերի, ձիթհանքների, տների ու տնատեղերի և այլ ստացվածքների առուծախին ու այլ կարգի օտարումներին վերաբերող Շար՛ի արձանագրություն-

ներն ու ղաբալեները, որոնց մեջ նույնպես նկատվում է ամբողջ ստացվածքի վեցդանգյան ստորաբաժանման սկզբունքը:

Թեև թվով քիչ, բայց ագրարային հարաբերությունների ուսումնասիրության տեսակետից չափազանց կարևոր փաստաթղթեր են ոռոգման, ջրաբաշխման և ջրօգտագործման հարցերին նվիրված վավերագրերը, որոնց ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեփականության իրավունքը ջրի նկատմամբ ոչ բոլոր դեպքերում էր զուգորդվում հողատիրության հետ, և ջուրը շատ հաճախ պատկանում էր ոչ թե տվյալ կալվածքի տիրոջ, այլ մեկ ուրիշի և երբեմն նույնիսկ գյուղական համայնքին:

Փոքր թիվ չեն կազմում նաև այն փաստաթղթերը, որոնք խոսում են գյուղական համայնքի ներքին կազմակերպության, համայնքի ներսում մելիքների, տանուտերերի, քահանաների, ունևոր գյուղացիության այլ ներկայացուցիչների և չքավոր ու սակավահող ռայաթների միջև դասակարգային ներհակությունների և սոցիալական պայքարի որոշակի փաստերի մասին:

Հատուկ ուշադրության արժանի են «սնուրնամեներն» ու «շհադաթնամեները» (վկայության թղթեր և համախոսական գրություններ), որոնք կազմված են հատկապես այս կամ այն գյուղի հանդերի ու վարելահողերի (քյոփշան) սահմանները ճշտելու կապակցությամբ:

Պահպանվել են 2—2,5 մետր երկարություն և 20—30 սմ լայնություն ունեցող համախոսականներ, որոնց վրա իրենց ստորագրություններն ու կնիքներն են դրել տվյալ գյուղի կամ գյուղերի հեղինակավոր ու տարիքավոր անձինք՝ հաստատելու համար, թե տվյալ հանդը պատկանում է այս և ոչ այն գյուղին: Պետական կամ դիվանի գյուղերի համար, որոնք առանձին կալվածագրեր չունեին, սահմանների ճշտման գլխավոր ձևը եղել է հարևան գյուղերի ծերունիների ու երեցների վկայությունը:

Հիշյալ վավերագրերը, որպես պատմական սկզբնաղբյուրներ, ունեն բացառիկ նշանակություն և Անդրկովկասի, Իրանի ու մերձակա մյուս երկրների ԺԵ—ԺԹ դդ. ագրարային հարաբերությունների պատմության համար հսկայական փաստական նյութ են պարունակում: Նրանց մեջ իրեց իրավական արտացոլումն են գտել հողատիրությանն ու հողօգտագործմանը, հողի սեփականատիրոջ և նրա հողերի վրա աշխատող հողագործ ռայաթների դասակարգային փոխհարաբերություններին, ինչ-

պես կալվածատիրոջ, այնպես նաև գյուղական համայնքի իրավասության սահմաններին և ֆեոդալական հասարակության պատմության վերաբերող բազմաթիվ այլ հարցեր։

Սակայն ֆեոդալական հարաբերությունների և այդ հասարակության սոցիալ-դասակարգային ամբողջ կառուցվածքի ուսումնասիրության համար ավելի քան որոշակի և պաշտոնական տվյալներ են պարունակում վավերագրերի առաջին խմբի մեջ մտնող թագավորական հրովարտակները կամ, ինչպես ընդունված էր անվանել, «ռաղամները», որոնց մեծ մասը մեզ է հասել բնագրերով, իսկ որոշ մասը Շար՛ի նոտարական պատճեններով։

Հրովարտակներն ու հրամանագրերը իրենց հերթին ունեն խիստ բազմազան բովանդակություն։ Ինչպես վերը նշեցինք, դրանք ըստ հրապարակման կամ շարադրման վայրի և շնորհող իշխանության երեք կարգի են, որ կարճ ձևով կարելի է անվանել ա) շահական, բ) խանական և գ) հոգևորական։

Շահական հրովարտակներն ու ֆերմանները մեծ թիվ են կազմում և ընդգրկում են ԺԵ—ԺԹ դդ. շուրջ 400-ամյա մի ժամանակաշրջան։ Հնագույն հրովարտակը տրված է Կարա-Կոյունլու սուլթան Ջհանշահի կողմից 1449 թ. Տաթևի վանահայր Շմավոն վարդապետ Անգեղակոթցուն, իսկ վերջին հրովարտակը Նասր-էդ-դին շահ Ղաջարի կողմից 1848 թ. Հարավային Ադրբեջանի Խալխալի և Արդաբիլի շրջանների ճանապարհների պետական վերահսկիչ Կարապետ խանին։

Հարուստ և բազմազան է շահական հրովարտակների թեմատիկան։ Դրանցից յուրաքանչյուրը նվիրված է առանձին կամ մի քանի հարցերի և տրված է ներկայացված բանավոր կամ գրավոր խնդիրքի հիման վրա։ Շոշափելի թիվ են կազմում հատկապես ԺԷ դարի հրովարտակները (շուրջ 200 հատ), որոնք մեծ մասամբ ձեռք են բերված Էջմիածնի կաթողիկոսների կողմից։ Նկատելի է, որ շահերի փոփոխման շրջանին վերաբերող հրովարտակները ավելի շատ են։ Ընդունված էր, որ նոր շահի գահակալությունից հետո կաթողիկոսներն ու այլ վանքերի առաջնորդներն իրենց հետ վերցնելով նախորդ շահերից ստացած հրովարտակները, գնում էին Սպահան, դրանց հիման վրա նոր հրովարտակներ կամ «ռաղամներ» ստանալու։ Նույն բանը տեղի էր ունենում նաև այն ժամանակ, երբ կաթողիկոսներից կամ առաջնորդներից մեկը փոխարինում էր մի ուրիշին։ Նման դեպքերում այդ մասին նշվում էր հրովարտակի սկզբում։

Սակայն լինում էին նաև բոլորովին անակնկալ ծագող հարցեր, կապված հողի կամ ջրի գրավման, ավելորդ հարկապահանջության, նվիրակների երթևեկության արգելման և հայ համայնքի իրավունքների բռնադատման հարցերի հետ, որոնց համար կաթողիկոսները հատուկ խնդրագրեր էին ներկայացնում շահին։ Եթե հարցը դավանաբանական բնույթ չէր կրում, որի համար հարկ լիներ Շար՛ի կարծիքը հարցնելու, ապա շահը տեղն ու տեղը նույն խնդրագրի վերի, նախապես ազատ թողած մասում տալիս էր իր հրամանը առաջ քաշված խնդրի վերաբերյալ։ Այլապես խնդրագիրը ուղարկվում էր Շար՛ին, որ հարցը քննելուց հետո խնդրագրի մյուս էջում տալիս էր իր վճիռը, որից հետո միայն շահը հրամայում էր ի կատար ածել այն։ Այսպիսով հաճախ մի վավերագրի վրա ամփոփվում էր և՛ հայցվորի խնդրագիրը, և՛ Շար՛ի որոշումը, և՛ այդ որոշման գործադրման մասին շահի ֆերմանը։ ԺԷ դարի հրովարտակներից շուրջ երկու տասնյակը տրված է ի հաստատումն Շար՛ի կողմից հրապարակված «ֆաթվաների», որոնք գլխավորապես վերաբերում են հայ ռայաթների՝ «զիմմիների» քաղաքացիական-իրավական վիճակին։

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն հրովարտակները, որոնք գրված լինելով ավելի վաղ ժամանակներում տրված մի այլ հրովարտակի հիման վրա, նրանց մեջ ամբողջապես կամ քաղվածաբար մեջ են բերված դրանք։

«Սոյուրղալների», «Թիուլների», «մուաֆության» և այս կարգի այլ առանձնաշնորհումներին վերաբերող, ինչպես նաև «մուլքային» կալվածատիրական իրավունքների ճշտման կապակցությամբ հրապարակված հրովարտակներում մեջ են բերվում ընդարձակ հատվածներ բարձրագույն հոգևոր ատյանի՝ «Դիվան-ալ-սադարաթի» կամ «Շար՛ի» կողմից տրված վճիռներից և քաղվածքներ դիվանական հարկային մատյաններից, որոնք ստացվում էին գլխավոր «Մուսթոֆի-ուլ-մամալիքից» կամ նահանգային «մուսթոֆիներից»։ Այս կարգի հրովարտակներում չափազանց պարզորոշ հիշատակություններ կան նաև, ինչպես կալվածատիրական հողային ռենտայի, այնպես նաև պետական ռենտա-հարկի ու այլ պարտավորությունների մասին, որոնք հատուցվում էին հողագործ ռայաթների կողմից։

Դիվանական հարկային մատյաններից դուրս բերված քաղվածքներից հնարավոր է պարզել, թե ինչ հարկեր են գանձվել

որոշել հարկերի քանակն ու հատուցման ձևը (դրամով, թե բնամթերքով), ինչ սկզբունքով էին գանձվում այդ հարկերը, ո՞ւմ էին հանձնվում, ո՞րտեղ և այլն: Նրանց մեջ հիշատակված բազմաթիվ սոցիալական տերմինների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու քոչվորական-ֆեոդալական հիերարխիայի, պետական-վարչական ապարատի, դիվանական պաշտոնյաների, առանձին նահանգներում աշխատող ֆինանսական կրտսեր պաշտոնեության, ինչպես նաև գրասենյակային պաշտոնական գրագրության և քարտուղարության սիստեմի մասին:

Անհրաժեշտ է նշել, որ ֆեոդալական պետական-հասարակական սիստեմի իրավական նորմերը արտահայտելով հանդերձ, հրովարտակները բնորոշ են նաև այդ հասարակության ներքին հակասությունների՝ հատկապես կենտրոնական իշխանության թուլության, ֆեոդալական մասնատվածության, դրա հետևանքով ծայրամասերում տիրող անիշխանության և ֆեոդալների, զինվորականության և պետական պաշտոնյաների ինքնիշխան ու կամայական վարքի ուսումնասիրության տեսակետից: Նույն հարցի վերաբերյալ տարբեր ժամանակներում տրված մի քանի հրովարտակների առկայությունը ինքնին ապացուցում է, որ այդ հրահանգների կենսագործումը միշտ չէր ապահովված: Բնորոշ է այս տեսակետից այն փաստը, որ համարյա բոլոր հրովարտակները ավարտվում են հետևյալ խոսքերով. «...Եվ թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն, նրա բովանդակությունից չշեղվեն և ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն»:

* * *

Մատենադարանում պահվող վերոհիշյալ վավերագրերի ուսումնասիրությամբ առաջին անգամ զբաղվել է Սիմեոն կաթողիկոս Երևանցին (1763—1780): Այդ փաստաթղթերի հիման վրա իր հանրահայտ «Ջամբռ»[1] աշխատության մեջ նա տվել է Էջմիածնի և Երևանի խանության մեջ գտնվող մյուս վանքերի կալվածատիրության, վանական ստացվածքների և նրանց շնորհված հարկային իմունիտետի՝ «մուաֆության» պատմությունը:

[1] Ս. Երևանցի, Ջամբռ, գիրք որ կոչի յիշատակարան արձանագրուցին, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873:

Նա ծանոթացել է յուրաքանչյուր վավերագրի բովանդակության հետ և նրա համառոտ անոտացիան գեղեցիկ նոտր գրով գրել տվել վավերագրի մյուս էջում: Հաճախ հրովարտակների կամ կալվածագրերի վրա հանդիպում են նաև իր իսկ Սիմեոն Երևանցու ձեռագրով կատարված նշումներ տվյալ փաստաթղթի հույժ կարևորության կամ ընդհակառակը անկարևորության մասին: Սակայն պետք է ասել, որ այս համառոտ, մի քանի տողով տրված բացատրությունները հեռու են վավերագրերում արտահայտված բազմաթիվ հարցերը ընդգրկելու հնարավորությունից և երբեմն սպառիչ չլինելու պատճառով կարող են տեղի տալ թյուրըմբռնման:

Հավանաբար նույն ժամանակներում էլ այդ վավերագրերը ռեստավրացիայի են ենթարկվել, ըստ առանձին օբյեկտների ու հարցերի դասակարգվել և համարակալվել: Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում յուրաքանչյուր վավերագրի մասին հիշատակելուց հետո գրում է. «զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համարով»: Պետք է ենթադրել, որ նա մտադիր է եղել իր աշխատությանը կցել նաև օգտագործած կամ աշխատության մեջ հիշատակված վավերագրերի ցուցակ՝ նրանց վրա նշված համարակալությամբ, որը, սակայն, նա չի հասցրել կազմել, դրա համար էլ «Ջամբռ»-ում հիշատակված հրովարտակների համարների՝ համար նախատեսված փակագծերը մեծ մասամբ դատարկ են մնացել[1]:

Սիմեոն Երևանցին նույնպիսի ջանասիրությամբ ուսումնասիրել ու օգտագործել է նաև թյուրքական հրովարտակներն ու կալվածագրերը և հատուկ գլխում թվարկել դրանք՝ տալով դրանց խիստ համառոտ բովանդակությունը[2]:

Ցուցաբերելով արտակարգ մեծ նախաձեռնություն Էջմիածնի վանքապատկան կալվածների ավելի քան ընդարձակման և հարստացման, ինչպես նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության հասարակական-քաղաքական հեղինակության ամրապնդման ուղղությամբ, Սիմեոն Երևանցին կարողացել է արժեքավորել ձեռքի տակ եղած փաստաթղթերը և դրանց հիման վրա վերականգնել

[1] Այդ ցուցակը այժմ հնարավոր է վերականգնել, շնորհիվ վավերագրերի վրա պահպանված համարների: Չնչին բացառությամբ «Ջամբռ»-ում հիշատակված բոլոր վավերագրերը այժմ պահպանվում են Մատենադարանի արաբատառ վավերագրերի ֆոնդում:

[2] «Ջամբռ», գլ. ԻԲ և ԻԳ էջ 234—252:

ու ամրապնդել վանքի իրավունքները։ Նա խիստ ափսոսանքով նշում է, որ իր նախորդների անփութության պատճառով շատ ու շատ արժեքավոր փաստաթղթեր անհետացել են վանքի արխիվից. «Զի ի ձեռնարկելն իմ զայսմանէ՝ կարի և շատ տարակուսանօք և հոգւոց հանելով գրեցի, քանզի որոց ցանկայի և յուսայի գտանել, զորս և հաւաստեաւ գիտէի իսկ գոլ յԱթոռոջս, զբազումս և զբոլորէն ոչ գտի», — գրում է նա[1]։

Այնուհետև խոսելով շահական հրովարտակների նշանակության մասին շարունակում է.

«Ոչ գիտեմ ի նախանձակտուր, ի նենգալի և ի թշնամի մարդկանց էին անհետացեալք, թէ ի յանհոգութենէ յաջորդողացն տեղւոյս, և թէ ի մօտ առ մօտ վախճանեցմանէ և ի պղտորմանէ և ի տարուբերմանէ երկրիս և երկրականացս, ընդ որս և Աթոռոյս և Աթոռայնոցս։ Ոչ միայն զյառաջնոցն ասեմ և զհնագունիցն, այլ և զյետնոցն և զմօտագունիցն։ Արդ մինչ զբազումն ոչ գտի, որպէս ասացի, վասն որոյ և զսակաւսն՝ զորս առձեռն ունեցայ, տեսի և վերահասու եղէ մտացն և գիտմանցն, գրեալ աստ արձանացուցի, զի մի և սոքա անհետասցին։ Քանզի թէպէտ տուողքն են այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտակարք, ուժիչք, և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրիակէս ի բուժումն պէս պէս ցաւոց։ Զայս վասն այսորիկ երկարեմ, զի և դու ի յունկդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ։ Եւ մի ասիցես թէ՝ այժմ այս ինչ ապա անօգուտ է, և կամ թէ թագաւորքն ոչ գոն, զի՞նչ օգտեն հրամանք նոցա. զի պիտոյանան բազմիցս և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեք փորձեցաք բազմիցս։ Եւ մանաւանդ որքան թագաւորական գիր գտանի յԱթոռոջս, այնքան պատիւ է սմա, որքան առ յայս՝ բաւ լիցի խոհեմութեանդ»[2].

Այսպես, նա իր գրքում բազմիցս հորդորում է իր հաջորդներին խնամքով պահել և հարստացնել հրովարտակների ու այլ պաշտոնական գրությունների և փաստաթղթերի արխիվը։

Անտարակույս Սիմեոն կաթողիկոսի վերջին խոսքերը կարևոր դեր են խաղացել, ինչպես մինչ այդ գոյություն ունեցող,

[1] «Ջամբռ», էջ 209։

[2] Նույն տեղում, էջ 209—210։

այնպես նաև հետագա շրջանի վավերագրերի պահպանման գործում։

Սակայն Սիմեոն Երևանցին կարողացել է հավաքել և պահպանել միայն Երևանի խանության մեջ մտնող վանքերի վավերագրերը (Գեղարդ, Հավուց-թառ, Խոր-վիրապ, Ջագավանք, Կեչառիս, Սևան, Հայրևանք, Բջնի, Կոշավանք, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Մուղնի և այլն)։ Նրանից հետո մեծ չափով հարստացվել ու բազմապատկվել է հրովարտակների ու կալվածագրերի թիվը։ ԺԹ դարի ընթացքում և այնուհետև հետզհետե այստեղ են կենտրոնացվել Արևելյան Հայաստանի և Ատրպատականի մյուս վանքերի հին ու նոր բազմաթիվ արժեքավոր վավերագրեր, ինչպես նաև ոչ մեծ թվով վավերագրեր՝ բերված Արևմտյան Հայաստանից։ Հատկապես մեծ թիվ են կազմում Տաթևի վավերագրերը, որոնցից զգալի թվով հրովարտակներ և կալվածագրեր վերաբերում են ԺԵ դարին (հնագույն կալվածագիրը գրված է 1400 թվականին)։

Որոշ վկայություններ կան այն մասին, որ առանձին եկեղեցական գործիչներ զբաղվել են նաև Գանձասարի հրովարտակների ուսումնասիրությամբ[1]։ Այսպես, օրինակ՝ Րաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ հիշատակում է, որ Գանձասարի մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանը կազմած է եղել «զանազան ֆերմանների և հրովարտակների ժողո-

[1] Հավանաբար Գանձասարի վավերագրերը Էջմիածին են բերվել 1836 թվականից հետո, երբ «Պոլոժենիե»-ի հաստատումով վերացվեց Աղվանից մետրոպոլիտությունը և կազմվեցին Գանձակի ու Շամախու թեմերը։ Անհավանական չէ նաև, որ Տաթևի վավերագրերը ևս այս ժամանակ փոխադրված լինեն Էջմիածին։ Դարաշամբի և Մակվի փաստաթղթերի մասին թեև որոշակի հիշատակություն չկա, սակայն հայտնի է, որ այդ վանքերի վավերագրերը ԺԹ դարի վերջերին արդեն գտնվում էին Էջմիածնում (տես Ե. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 30)։

Հիշատակության արժանի է նաև այն փաստը, որ Նոր Ջուղայի Ամենափրկչի վանքին և տեղի հայ գաղութին վերաբերող պարսկերեն հրովարտակներն ու այլ փաստաթղթերը չեն բերվել Էջմիածին և, որքան մեզ հայտնի է, դրանք այժմ պահվում են վանքի թանգարանում։ Դրանցից ժամանակին օգտվել է Հ. Տեր-Հովհանյանը և ԺԷ—ԺԹ դդ. վերաբերող մոտ երկու տասնյակ հրովարտակների ու այլ փաստաթղթերի հայերեն թարգմանությունները մեջ է բերել իր 1880—1881 թթ. Նոր Ջուղայում լույս տեսած «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան» աշխատության երկու հատորներում (տես հ. 1, էջ 36—39, 84—85, 193—194, 478—489, հ. 2, էջ 147—153 և 243—251)։

վածու», որից ինքը օգտվել է իր հիշյալ աշխատությունը գրելիս[1]։ Գանձասարի հրովարտակներից օգտվել է նաև Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը և դրանցից 15-ի հայերեն թարգմանությունները զետեղել է իր «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» ուղեգրության երկրորդ հատորի վերջում որպես հավելված[2]։

Չմոռանանք հիշել, որ Էջմիածնի վավերագրերի շուրջ որոշ հետաքրքրություն է առաջ եկել նաև 1830-ական թվականներին, երբ Անդրկովկասում գործում էին հատուկ հանձնաժողովներ, որոնք ներկայացվող փաստաթղթերի հիման վրա վերահաստատում էին տեղական կալվածատերերի սեփականատիրական իրավունքները նրանց նախկին կալվածների նկատմամբ։ Էջմիածնապատկան շատ գյուղերի կալվածագրերի վրա պահպանված են այդ թվականներին կատարված ռուսերեն մակագրություններ և համառոտ անոտացիաներ տեղում գործող հանձնախմբի նախագահի և քարտուղարի ստորագրություններով։

Սակայն վերոհիշյալ և նման այլ մասնակի, էպիզոդիկ և մակերեսային ուսումնասիրությունները երբեք չեն կարող համեմատվել Սիմեոն կաթողիկոսի կատարած ըստ ամենայնի ինքնատիպ և բազմարդյուն աշխատանքի հետ, որը մինչև օրս էլ ծառայում է որպես կարևոր սկզբնաղբյուր և հանդիսանում է արխիվային նյութերի արժեքավորման և մատուցման ուշագրավ օրինակ։

Հայ բուրժուական պատմագրությունը շատ չնչին չափով

---

[1] Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, 2-րդ հրատ., Թիֆլիս, 1895 թ., էջ 94։ 1790—1813 թթ. Ղարաբաղի խաների կողմից Գանձասարի վանքին տրված 6 հրովարտակների հայերեն թարգմանությունները հրատարակել է Գ. Տեր-Հովհաննիսյանը (Մուրացան), Բաղդասար մետրոպոլիտի կենսագրության նվիրած իր հոդվածի տողատակի ծանոթագրությունների մեջ։ Այդ վավերագրերը հավանաբար նա վերցրել է վերոհիշյալ ժողովածուից (տե՛ս «Փորձ» ամսագիր, 1880 թ., № 5, էջ 145—155)։

[2] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Տփխիս, 1858 թ., հ. Բ, էջ 480—501։ Գեղարքունյաց Մելիք Շահնազարի և նրա հաջորդների կալվածատիրական իրավունքների մասին վկայող և ԺԶ—ԺԹ դդ. վերաբերող շուրջ 18 հրովարտակների և շարիաթական արձանագրությունների հայերեն թարգմանությունները Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը հրատարակել է 1896 թ. լույս տեսած իր «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» աշխատության վերջում։ Սրանց պարսկերեն բնագրերի ուր լինելու մասին ստույգ տեղեկություններ չկան։

է զբաղվել պարսկերեն վավերագրերի ուսումնասիրությամբ։ Հատուկենտ ակնարկներ որոշ հրովարտակների առկայության մասին հանդիպում են միայն Լեոյի «Հայոց պատմության» Գ հատորում, որոնք աղբյուրագիտական տեսակետից առանձին արժեք չեն ներկայացնում։

Ինչպես Պետական մատենադարանի, այնպես նաև Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի արխիվներում, ձեռագրատներում և թանգարաններում պահվող պարսկերեն պաշտոնական վավերագրերի գիտական-մարքսիստական ուսումնասիրության հիմքը դրվեց միայն Սովետական իշխանության տարիներին և 1930-ական թվականներից հետո հրապարակի վրա սկսեցին երևալ վավերագրերի առանձին ժողովածուներ (պարսկերեն բնագրեր ռուսերեն թարգմանությամբ)։

1936—1937 թթ. Յու. Ն. Մառի խմբագրությամբ լույս տեսան Նախիջևանի և Ղուբայի խանությունների վավերագրերի ժողովածուները։ „Передняя Азия в документах" ընդհանուր վերնագրի տակ 1936 թ. լույս տեսած առաջին գրքում ամփոփված են ԺԷ—ԺԹ դդ. Նախիջևանի խանության և հատկապես Քանգարլու էլի պատմությանը վերաբերող թվով 24 հրովարտակներ, կալվածագրեր և այլ փաստաթղթեր[1], իսկ երկրորդ գրքում Ղուբայի խանության ԺԸ դ. 29 վավերագրեր, որոնցից 23 խանական հրովարտակներ և 6 այլ փաստաթղթեր[2]։ Ինչպես ասվեց, սրանք պարսկերեն վավերագրերի առաջին գիտական հրատարակության փորձերն էին, որոնց պետք է հաջորդեին այլ ժողովածուներ, ինչպես այդ մասին ասված է առաջին գրքի ներածության մեջ. Սակայն այս սերիան սրանով էլ սահմանափակվեց։

1949 թվականին Վրացական ՍՍՌ ԳԱ Ի. Ա. Ջավախիշվիլու անվան պատմության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ Մակար Խուբուայի կազմած «Վրաց թանգարանի պարսկերեն ֆերմաններ և հոքմեր» ժողովածուի առաջին գիրքը (պարսկերեն բնագրեր վրացերեն թարգմանությամբ), որն ընդգրկում է ԺԷ—ԺԸ դդ. 50 հրովարտակներ, տրված Սեֆյան շահերի,

---

[1] „Передняя Азия в документах", серия памяти Ю. Н. Марра, кн. I. Нахчеванские рукописные документы, XVII—XIX вв., Тифлис, 1936.

[2] Указы Кубинских ханов, изд. Груз. ФАН, Тифлис, 1937.

1309
ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека

Նադիր շահի և նրա հաջորդների, ինչպես նաև Քարթլիի Իրակլի Բ թագավորի և այլոց կողմից[1]:

Նույն ինստիտուտի նախաձեռնությամբ 1955 թ. լույս տեսավ ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Վ. Ս. Փութուրիձեի կազմած «Վրացա-պարսկական պատմական վավերագրեր» խորագիրը կրող ժողովածուն, որն ընդգրկում է ԺԶ—ԺԸ դդ. վրաց թագավորների կողմից տրված 192 երկլեզվյան (մի էջը պարսկերեն, մյուսը վրացերեն) հրովարտակներ[2]: Պետք է ասել, որ այս ժողովածուն թե իր ծավալով, թե ընդգրկած նյութի արժեքավորությամբ ու բազմազանությամբ, և թե կատարված գիտական բարեխիղճ աշխատանքով հանդիսանում է կարևոր ավանդ պարսկերեն արխիվային վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության գործում:

Զգալի աշխատանք է կատարված նաև Միջին Ասիայի ռեսպուբլիկաների ձեռագրատներում և արխիվներում պահպանվող խիստ արժեքավոր պարսկերեն վավերագրերի հրատարակության ուղղությամբ: Լույս են տեսել ինչպես առանձին ժողովածուներ, այնպես նաև մենագրական աշխատություններ, որոնց կցված են վավերագրերի բնագրերից կամ թարգմանություններից կազմված հավելվածներ[3]: Սակայն ուսումնասիրողների վկայությամբ մինչ այժմ հրապարակված վավերագրերը արխիվներում պահպանվող հարուստ ֆոնդերի խիստ աննշան մասն են կազմում:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից դեռևս ոչինչ չի հրատարակված, եթե հաշվի չառնենք 3 վավերագրերից վերցրած այն համառոտ հատվածները, որոնք ամփոփված են Ի. Պ. Պետրուշևսկու „Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв." մենագրական աշխատության հավելվածում[1]: Մինչդեռ այս վավերագրերը ավելի խոշոր արժեք են ներկայացնում և արժանի են առավել ուշադրության: Հիշյալ վավերագրերը, ինչպես ասվեց, այժմ պահվում են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի արաբատառ վավերագրերի ֆոնդում[2]: Զնչին թվով ոչ պաշտոնական փաստաթղթեր դեռևս մնում են հայկական վավերագրերի մեջ և անհատական արխիվների ֆոնդում[3]:

Երևանի Հասան-Ալի խանի (1755—1764), Հուսեյն-Ալի խանի (1764—1783), Ղուլամ-Ալի խանի (1783—1784) և մեծ մասամբ Մուհամմադ խանի (1784—1805) կողմից գրված 200-ից ավելի պաշտոնական և ոչ-պաշտոնական նամակներ ու 14 խանական հրովարտակներ, վերջին՝ Մուհամմադ խանի գրագրի ձեռքով խնամքով արտագրված են մի ձեռագիր մատյանում, որն այժմ պահվում է Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի ֆոնդում[4]: Այդ վավերագրերը հանդիսանում են չափազանց կարևոր աղբյուր ԺԸ դ. երկրորդ կեսի Երևանի խանության, ինչպես ներքին կյանքի, այնպես նաև հարևան խանությունների ու փաշայությունների և հատկապես Վրաստանի հետ նրա հարաբերությունների և վարած արտաքին քաղաքականության պատմության ուսումնասիրության համար:

Զգալի թվով (շուրջ 100 հատ) ԺԷ—ԺԹ դարերին վերաբերող պարսկերեն հրովարտակներ և այլ պաշտոնական ու ոչ պաշտոնական փաստաթղթեր ժամանակի ընթացքում հավաքվել

---

1 მაკარ ხუბუა, საქართველოს მუზეუმის სპარსული ფირმანები და ჰოქმები. თბილისი, 1949.

2 ქართულ-სპარსული ისტორიული საბუთები, თბილისი, 1955.

3 Հայտնի են հետևյալ հրատարակությունները.

Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР,
ч. I. Торговля с Московским государством и международное положение
Средней Азии в XVI—XVII вв. Труды Историко-археографического инсти-
тута и Института Востоковедения АН СССР, материалы по истории на-
родов СССР, вып. 3, Ленинград, 1933.

Материалы по истории кара-калпаков, Сборник, труды ИВАН СССР, т. VII, Москва — Ленинград, 1935.

Из архива шейхов Джуйбари. Материалы по земельным и торго-
вым отношениям Средней Азии в XVI в. Изд. Инст. Востоковедения АН
СССР, Москва — Ленинград, 1938.

П. П. Иванов, Хозяйство Джуйбарских шейхов. К истории фео-
дального землевладения в Средней Азии в XVI—XVII вв. Изд. Инст. Вос
токоведения АН СССР, Москва — Ленинград, 1954.

Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве,
вып. I. Акты феодальной собственности на землю XVII—XIX вв. Подбор
документов, перевод, введение и примечания О. В. Чеховича, под редак-
цией А. К. Арендса, изд. АН Уз. ССР, Ташкент, 1954.

---

1 Տես նշված աշխատությունը, էջ 360—364:

2 Պարսկերեն վավերագրերը ժամանակագրական կարգով զետեղված են Կաթողիկոսական դիվանի հետևյալ թղթապանակներում. 1ա, 1բ, 1գ, 1դ, 1ե, 1զ, 2ա, 2բ, 3 և 4:

3 Կաթողիկոսական դիվան, թղթապ. 250, Անհատական արխիվների ֆոնդ, թղթապ. 80 գ:

4 Մատենադարանի պարսկերեն ձեռագրեր, № 233:

ու կենտրոնացվել են ՀՍՍՌ Պետ. Կենտ. արխիվում, որոնք սակայն չեն ցուցակագրված և գտնվում են անմշակ վիճակում: Այնինչ դրանց մեջ կան բավական արժեքավոր փաստաթղթեր, այդ թվում ԺԷ դ. Սեֆյան շահերի կողմից Քաշաթաղի հայ մելիքներին տրված հրովարտակներ ու «թիուլնամեներ», որոնք նոր լույս կարող են սփռել Արցախի հայ մելիքությունների պատմության վրա:

Թեև սովետական պատմաբաններից ոմանք ժամանակին օգտվել են Մատենադարանի պարսկերեն վավերագրերից և դրանցից անհրաժեշտ նյութեր քաղելով գրել են դիսերտացիոն աշխատություններ[1], սակայն վավերագրերի հրատարակության ուղղությամբ դեռևս լուրջ փորձ չի կատարված[2]: Այդ իսկ պատճառով, ինչպես իրավացի կերպով նշել է Ի. Պ. Պետրուշևսկին, ԺԶ—ԺԹ դդ. պարսկերեն վավերագրային սկզբնաղբյուրների մինչ այժմ կատարված ուսումնասիրությունները չափազանց

[1] Հատուկ ուշադրության արժանի է 1949 թ. լույս տեսած պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու „Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв." դոկտորական դիսերտացիան, որի մեջ մեծ չափով օգտագործված են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի նյութերը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հիման վրա դիսերտացիոն աշխատություն է գրել Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի դասախոս, դոցենտ Տ. Հակոբյանը «Հայ համայնքների պայքարը կաթոլիկության դեմ ըստ նորահայտ պարսկերեն վավերագրերի»:

Վավերագրերից մասամբ օգտվել է նաև դոցենտ Բ. Հարությունյանը իր „Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв."- 1940 թ. լույս տեսած դիսերտացիոն աշխատության մեջ:

Տողերիս գրողը ևս իր դիսերտացիոն աշխատությունը «Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ ԺԸ դարում» շարադրել է հիմնականում Մատենադարանի պարսկերեն արխիվային նյութերի հիման վրա:

[2] Մոսկվայի կենտրոնական պետական արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները հայերի հետ» ֆոնդում կատարած պրպտումների ժամանակ սովետական նշանավոր պատմաբան Աշ. Հովհաննիսյանը հայտնաբերել էր ԺԸ դարի առաջին քառորդին վերաբերող և պատմական մեծ արժեք ներկայացնող պարսկերեն փաստաթղթեր (խնդրագրեր, նամակներ և պայմանագրեր), որոնց բնագրերն ու հայերեն թարգմանությունները «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին» վերնագրով Երևանում 1927 թ. ապակետիպ հրատարակությամբ լույս է ընծայել ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը: Այս հրատարակությունը Սովետական իշխանության տարիներին Հայաստանում պարսկերեն փաստաթղթերի գիտական հրատարակության առաջին լուրջ փորձը պետք է համարել:

թերի են, ուստի դեռևս հնարավոր չէ տալ դրանց նշանակության և առանձնահատկությունների լրիվ գնահատականը[1]: Այսուհանդերձ պետք է նշել, որ պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու ուսումնասիրությունները առայժմ մնում են որպես հիշյալ վավերագրերի մասին միակ քիչ թե շատ ընդարձակ տեղեկություններ պարունակող գործեր[2], որոնց մեջ, սակայն, առանձին ուշադրության չեն արժանացել ԺԵ դարի, ԺԶ դարի առաջին կեսի, ԺԸ դարի երկրորդ կեսի և ԺԹ դարի հրովարտակները և վավերագրերի երկրորդ խոշոր խմբի մեջ մտնող ԺԵ—ԺԹ դդ. մեծ թվով կալվածագրերն ու այլ փաստաթղթերը:

Պարսկերեն արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը առաջին հերթին պահանջում է լուրջ մասնագիտացում այդ կարգի վավերագրերի վերծանման և ընթերցման գործում: Դրանք մեծ մասամբ քմահաճ ձեռագրեր են, որոնց մեջ որպես օրենք բացակայում են պարսկերենի ճշգրիտ ընթերցման համար խիստ կարևոր նշանակություն ունեցող գրերի տարբերիչ նշանները (կետերը): Բնագրերը սովորաբար խճողված են այլաբանական ավելորդաբանություններով: Հաճախ շարադրանքը ընդմիջարկվում է մի քանի տող զբաղեցնող համանիշ տիտղոսներով: Շատ վավերագրեր, հատկապես նոտարական արձանագրությունները ու պատճենները, գրված են լինում անգրագետ գրիչների ձեռքով, որոնց մոտ չեն պահպանված լեզվի ամենատարրական քերականական օրենքները: Առանձնապես դժվար է հատուկ անունների և տեղանունների վերծանումը, իսկ առավել դժվար մեջ բերված քաղվածքների հարկային հաշվումներն ու գանձվող հարկերի չափերն ու գումարները, որոնք արտահայտված են «սայաղ»-ի բարդ նշանագրերով և հեշտությամբ կարող են տեղի տալ թյուրընթերցման:

Վավերագրերը գրված են խիստ տարբեր գրություններով: Եթե ԺԷ—ԺԸ դդ. հրովարտակների մասին կարելի է ասել, որ դրանք հիմնականում գրված են «նասթալիղ» և «շիքասթե» և կամ այս երկուսի միջև խառն մի գրությամբ, ապա ԺԶ և հատ-

[1] И. П. Петрушевский, Очерки . . . стр. 17.

[2] И. П. Петрушевский, Персидские официальные документы XVI—начале XIX вв. как источник для истории феодальных отношений в Азербайджане и Армении, „Проблемы источниковедения", т. III, 1940, стр. 15—29; его же Очерки... стр. 7—11.

կապես ԺԵ դարերի հրովարտակների մասին այդ ասել չի կարելի:
ԺԵ դարի որոշ հրովարտակներ գրված են այնպիսի գրությամբ,
որը թեև իր ձևով նման է «դիվանի» գրության, բայց և մյուս
կողմից նրա մեջ նկատվում են «շիքասթե»-ի շեշտված էլեմենտ-
ներ: Այս շրջանի և ԺԶ դարի սկզբի Շահ Իսմայիլ Ա-ի հրո-
վարտակների մեծ մասը գրված է մի գրությամբ, որը թեև մա-
սամբ մոտ է «դիվանի»-ին, սակայն ավելի նման է «թաալիք»
կոչվող գրության: Գրության «ռիկ'ա» ձևը, որը խիստ տարած-
ված էր Թյուրքիայում և Արաբական երկրներում, Իրանում
գործ էր ածվում միայն շարիաթական վճիռների (ֆաթվաների)
շարադրման ժամանակ, այլ դեպքերում գործածական չէր:
«Նասխ» գրության որոշ ձևեր «շիքասթե»-ի մասնակի երանգ-
ներով, պատահում են հատկապես նոտարական արձանագրու-
թյունների ոչ թե հիմնական տեքստի, այլ հակառակ էջում կամ
լուսանցքներում կատարված և մեծ մասամբ վավերագրի սե-
գիտարացիայի և պատճենի հարազատության մասին վկայող
նշումների մեջ: Սակայն ինչպես ասվեց, ԺԶ դարի կեսերից
սկսում են գերակշռել «նասթաալիքը» և հատկապես «շիքաս-
թե»-ն իր տարբեր ձևերով, թեև դրանց զուգահեռ երբեմն գործ
էին ածվում նաև նոր երանգներ ստացած «թաալիք» և «դիվա-
նի» գրությունները:

Վավերագրերի գրության և գրչության ուսումնասիրու-
թյան հարցը իր հերթին առանձին հետաքրքրություն է ներ-
կայացնում, որը կարոտ է ավելի մանրակրկիտ հետազոտու-
թյան: Նշենք միայն, որ պարսկերեն արխիվային վավերագրերի
վերծանման և ընթերցման բնագավառում անհրաժեշտ հնագրա-
կան գիտելիքներ և այդ ասպարեզում որոշ փորձ ձեռք բերելուց
հետո, կարելի է ասել, որ այժմ մեծ չափով հաղթահարված է
այդ վավերագրերի հրատարակման հարցում գոյություն ունե-
ցող հիմնական խոչընդոտը: Նախ անհրաժեշտ է ճիշտ վերծանել
և կազմել յուրաքանչյուր վավերագրի անսխալ տեքստը, որից
հետո միայն հնարավոր կլինի այն հանձնել ուսումնասիրողների
ուշադրությանը, որպես պատմական լիարժեք և արժանահավատ
սկզբնաղբյուր:

Հրատարակության ժամանակ անշուշտ պետք է հիմք ըն-
դունել վավերագրերի այն դասակարգումը, որի մասին նշեցինք
սկզբում: Այդ սկզբունքից ելնելով «Մատենադարանի պարսկե-

րեն վավերագրերը» մատենաշարի առաջին գիրքը նվիրում ենք
ամենահին՝ ԺԵ—ԺԶ դդ. հրովարտակներին: ԺԷ դարի հրո-
վարտակները կամփոփվեն հաջորդ երկու անհամեմատ ավելի
ստվար գրքերում: Իսկ ԺԸ և ԺԹ դդ. հրովարտակներին կհատ-
կացվեն առանձին գրքեր: Մատենաշարի հաջորդ շարքով
կտրվեն վավերագրերի երկրորդ՝ ավելի մեծ խմբի մեջ մտնող
կալվածագրերն ու տնտեսական գործարքների վերաբերյալ մյուս
նոտարական արձանագրությունները:

* * *

Սույն ժողովածուի մեջ ընդգրկված են ԺԵ—ԺԶ դդ. բո-
լոր հրովարտակները, թվով 22 հատ, որոնցից 4-ը տրված են
Կարա-Կոյունլու, 3-ը Աղ-Կոյունլու թագավորների, 13-ը Սե-
ֆյան շահերի, 1-ը Ադրբայջանի բեկլարբեկի և վերջինը՝ Քարթ-
լիի Սիմեոն թագավորի (1558—1600) կողմից: Ժողովածուում
տեղ է գտել նաև 1585 թ. Ոստանի հաքիմ Կարախան բե-
կի օրոք տրված մի գրություն, որը թեև իր ձևով նման չէ
հրովարտակի և գրված է ի հաստատումն Իսլամի հիմնադիր
Մուհամմադին վերագրվող մի ենթադրական պայմանագրի, սա-
կայն իր բնույթով և բովանդակությամբ կարող է դիտվել, որ-
պես հատուկ արտոնագիր տրված Աղթամարի վանքին և տեղի
հայ համայնքին:

ԺԵ դարի հրովարտակները, որոնցից 5-ը մեզ են հասել
բնագրերով, իրենց հնությամբ բացառիկ արժեք են ներկայաց-
նում: Դրանցից յուրաքանչյուրը ոչ միայն օգնում է պարզելու
ԺԵ դարի երկրորդ կեսի հայ իրականության առանձին դեպ-
քերի ու դեմքերի հետ կապված կարևոր մանրամասնություն-
ներ, այլ նաև մեծ չափով նպաստում է, ինչպես Կարա-Կոյուն-
լուների, այնպես նաև Աղ-Կոյունլուների տիրապետության
շրջանի ֆեոդալական պետական-վարչական ապարատի և սոցիալ-
տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությանը:

Հայտնի է, որ այս շրջանի պատմական սկզբնաղբյուրները չա-
փազանց աղքատ են, իսկ պաշտոնական արխիվային փաստաթղ-
թերից հրապարակված են միայն մի քանի սյուրղալական հրովար-
տակներ: Դրանցից հնագույնը, որ հիջրեթի 820 թ. տարի՝ երկրորդ
ամսի 10-ին (1417 թ. ապրիլ 27) Կարա-Կոյունլուների դինաս-
տիայի հիմնադիր Կարա-Յուսուֆի կողմից տրված է Բաղեշի քըր-
դական Ռոժակ ցեղի առաջնորդ Ամիր Շամս-ադ-դինին և վերա-

բերում է վերջինիս սոյուրղալական իրավունքների հաստատմանը Արևմտյան Հայաստանի Բաղեշ, Խլաթ, Մուշ և Խնուս գավառների վրա, որոշ կրճատումներով մեջ է բերված ԺԶ դարի պատմիչ, նույն Ամիր Շամս-ադ-դինի սերունդներից, Շարաֆ խան Բիթլիսու «Շարաֆնամե»-ի առաջին հատորի այն մասում, որտեղ նա պատմում է Ռոժակ ցեղի և նրանց առաջնորդների, այսինքն՝ իր պապերի մասին[1]: Մյուս սոյուրղալական հրովարտակները բացառապես վերաբերում են Աղ-Կոյունլուների տիրապետության շրջանին: Դրանցից առավել արժեքավոր է Աղ-Կոյունլու Ջհանգիրի որդի Կասըմի կողմից հիջրեթի 903 թ. (1498 թ.) Դիարբեքիրի Էգիլ շրջանի Իսքանդար բեկին շնորհած հրովարտակը, որի բնագիրը անգլերեն թարգմանությամբ և հարուստ ծանոթագրություններով 1939 թ. հրատարակել է ռուս արևելագետ Վ. Մինորսկին[2]:

Սույն ժողովածուում հրատարակվող ԺԵ դարի հրովարտակների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք բացառապես վերաբերում են հայոց եկեղեցու իրավունքներին ու հայ աշխատավորության իրավական վիճակին և հանդիսանում են ավելի անմիջական աղբյուրներ Հայաստանի ներքին կյանքի ուսումնասիրության համար: Եթե վերը հիշված սոյուրղալական հրովարտակներում շարադրված են սոյուրղալական ֆեոդալական ինստիտուտի էությանը վերաբերող որոշ մանրամասնություններ, որոնցից հնարավոր է կոնկրետ եզրակացության գալ սոյուրղալ ստացող անձնավորության սոցիալ-դասակարգային դիրքի և վայելած առանձնաշնորհումների վերաբերյալ, կամ հիշատակված հարկային տերմիններից եզրակացնել աշխատավոր գյուղացիության ֆեոդալական շահագործման և տնտեսական ծանր վիճակի մասին, ապա ներկա հատորով հրատարակվող ԺԵ դարի հրովարտակները, ոչ միայն

[1] Charafnameh ou histoire des Kourdes par Scheref, prince de Bidlis, publiée par V. Veliaminof—Zernof, Պետերբուրգ, 1860, հ. Ա, պարսկերեն բնագիր, էջ 376—378.

[2] V. Mynorsky, A Soyurghal of Qasim Aq-Qoyunlu 903/1498, Bulletin of the School of oriental studies, vol. IX, part 4, London, 1939. Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի կողմից 1488 թ. Շիրազի Մանսուրիյյե կոչվող հոգևոր դպրոցին շնորհված մի սոյուրղալական հրովարտակ, որտեղ հիշված են շուրջ 27 անուն հարկային տերմիններ, մեջ է բերված Հասան Ֆասաիի «Ֆարսնամե-յե Նասերի» գրքի մեջ (տես «Ֆարսնամե-յե Նասերի» պարսկերեն բնագիր, Թեհրան, 1318 (1895), էջ 81—82):

ցույց են տալիս հայոց եկեղեցուն և հայ հոգևորականությանը տրվող հարկային իմունիտետի՝ «մուաֆության» էությունն ու բնույթը, այլ միաժամանակ մեծ լույս են սփռում եկեղեցական-վակֆային հողատիրության պատմության վրա:

Այս շրջանի հրովարտակներից և հատկապես կալվածագրերից հստակ կերպով երևում է, որ եկեղեցական հողատիրությունը ԺԵ դարում որոշ զարգացում էր ապրում: ԺԴ դարում Հայաստանի վանքապատկան հողերի մեծ մասը զավթվել էր քոչվոր արիստոկրատիայի առանձին ներկայացուցիչների կողմից: Բռնագրավվել և սեփականացվել էին նաև հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչների հողերը և դրանց մեծ մասը սոյուրղալական տիրության իրավունքով տրվել էր քոչվոր ցեղերի ռազմական առաջնորդներին և բարձրաստիճան զինվորականությանը: ԺԵ դարի ընթացքում հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչներից շատերը իրենց հողային կարողությունների չնչին մնացորդները հափշտակումից փրկելու նպատակով նվիրում էին վանքերին և հոգևոր կարգ ընդունելով փորձում էին այդ ձևով պահպանել իրենց իրավունքները հիշյալ կալվածների և իշխող դիրքը հայ աշխատավորության նկատմամբ:

Երբեմն այդ «նվիրատվությունները» կատարվում էին այլ ձևով: Նույն ֆեոդալական տնից որևէ մեկը, որ հոգևոր կարգ էր ընդունել և վարում էր տվյալ վանքի վանահոր պաշտոնը, իր արյունակից աշխարհական հարազատներից մեկից «գնում էր» այդ կալվածները և շարիաթական-նոտարական արձանագրությամբ նվիրում էր (վակֆ էր անում) նույն վանքին ու վակֆային պայմանագրում կամ «վակֆնամեում» շեշտում, որ վանքի տնօրենի կամ «մութավալլիի» պաշտոնը իր մահից հետո կվարեն նրա մերձավորները: Հիշենք թեկուզ 1431 թ. Գրիգոր Մակվեցու կողմից Էջմիածնին նվիրված 7 գյուղերը, որոնք նա «գնել էր» Ամիր Ռուստամ Օրբելյանից[1]: Այս իսկ պատճառով էր, որ Էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերահաստատումից անմիջապես հետո (1441—1443) աթոռակալական պայքար ծավալվեց Գրիգոր Մակվեցու և Կիրակոս Վիրապեցու կողմնակիցների միջև, որը թեև վերջացավ Գրիգորի հաղթա-

[1] Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, թղթապ. 1գ, վավ. № 934: Նույն կալվածագրի գրաբար թարգմանությունը տես «Արարատ», 1875 թ., էջ 212—213. Հար. Աբրահամյան, «Կալվածագրեր», Երևան 1941, էջ 12:

նակով, բայց այնուհետև նրան հաջորդեցին ոչ թե նրա սերունդները, այլ բոլորովին տարբեր ծագում ունեցող եկեղեցական գործիչներ։

Սակայն եթե Էջմիածնի կաթողիկոսությունը ժառանգական բնույթ չստացավ, շնորհիվ այն բանի, որ այն դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոսություն, ապա մյուս վանքերում այդ կարգը հաստատվեց և որոշ վայրերում շարունակվեց ընդհուպ մինչև ԺԹ դարը։ Այսպես էր, օրինակ, Գանձասարում, ուր իշխում էին Հասան-Ջալալյանները, Տաթևում, ուր մինչև ԺԷ դարը շարունակում էին իշխել Անգեղակոթցի Շմավոն վարդապետի եղբոր սերունդները, որոնք ազգակից էին Սյունյանց Օրբելյաններին, Աղթամարում, որտեղ կաթողիկոսական գահը երկար ժամանակ գտնվում էր Արծրունյաց տան շառավիղների ձեռքում, նույն երևույթն էր նկատվում նաև Հավուց-Թառի Ամենափրկիչ վանքում, ուր երկար ժամանակ տիրում էին Զաքարիա վարդապետ Հավուց-Թառեցու հաջորդները, որոնք Սիմեոն Երևանցու վկայությամբ սերում էին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու սերունդից[1], և այլն։

№ № 1, 2 և հատկապես № 4 հրովարտակները վկայում են այն մասին, որ Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի (1435—1467) թագավորության վերջին տարիներին համեմատաբար կայունացել էին Տաթևի վանքի գործերը։ Այս տարիներին էր, որ Շմավոն վարդապետ Անգեղակոթցին Օրբելյան Բեշքենի որդի Ամիր-Ռուստամից «գնեց» մի շարք գյուղեր, որոնց վակֆային իրավունքները վերստին հաստատում է Ջհանշահի որդի Հասան-Ալին, իշխանությունից զրկվելուց 4 ամիս առաջ հրապարակված հրովարտակում (վավ. № 4)։ Գանձասարի վանքապատկան կալվածների վակֆային իրավունքների մասին է խոսվում նաև № № 3 և 6 հրովարտակներում։

Բոլոր հրովարտակները միաբերան վկայում են այն մասին, որ հայ հոգևորականությունը ազատ է եղել պետական հարկերից, սակայն այդ մասին բազմիցս կատարվող հիշեցումները ինքնին ապացուցում են այն բանի, որ այդ սկզբունքը ենթակա էր հաճախակի խախտումների։ Կարևոր է հատկապես Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի 1487 թ. հրովարտակը (վավ. № 6), որտեղ որոշակի կերպով ասված էր, որ հարկերից ազատվում են միայն կուսակրոն հոգևորականները, կամ վանականները (رهبانان غير مخالط)։

1 «Ջամբռ», էջ 277։

Հարկային իմունիտետի վերաբերյալ հաճախ օգտագործված են մի քանի համանիշ տերմիններ, ինչպես օրինակ՝ «մուաֆ», «մուսալլամ», «մարֆու՛-ուլ-կալամ» կամ «մավղու՛», որոնց համատեղ օգտագործումը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք ըստ էության նույն բովանդակությունն ունեն։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ մոնղոլական շրջանի «թարխան» տերմինը օգտագործված է վրաց Սիմեոն թագավորի կողմից Գորի քաղաքի հայ քահանաներին տրված 1594 թ. հրովարտակում (վավ. № 23)։

Վանքերին և վանականներին շնորհվող մուաֆության իրավունքի կապակցությամբ է, որ հիշատակվում են գանձվող հարկերի անունները և ճշտվում, թե հատկապես ինչ կարգի պարտավորություններից են ազատվում նրանք։ Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում-Խաթունի, նրա որդու՝ Հասան-Ալիի և Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի վերոհիշյալ հրովարտակում մեծ մասամբ հիշված են այնպիսի հարկային տերմիններ, որոնք ծանոթ են մեզ Կասըմ Աղ-Կոյունլուի 1498 թ. սոյուրղալական հրովարտակից։

Այս տեսակետից, իհարկե, ավելի արժեքավոր են Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակները (վավ. №№ 8, 9, 10, 11), որոնք վերաբերում են 1503—1510 թթ.։ Դրանցից 3-ը տրված են Տաթևի, իսկ մեկը Հավուց-Թառի Ամենափրկչի վանքին, նրանց շնորհվող հարկային իմունիտետի՝ մուաֆության կապակցությամբ։ Հիշյալ հրովարտակները պերճախոս ապացույց են այն բանի, որ Սեֆյանների տիրապետությունը ոչ մի էական փոփոխություն չէր մտցնում գոյություն ունեցող հարկային սիստեմի մեջ և ոչնչով չէր թեթևացնում աշխատավոր գյուղացիության՝ ռայաթների վիճակը։ Դեռևս ԺԶ դարի վերջերին Շարաֆ խան Բիթլիսին գրում էր, որ իր ժամանակ գործող հարկային օրենսգիրքը («Կանուննամե») այն օրենսգիրքն էր, որ կազմվել էր Աղ-Կոյունլու Ուզուն-Հասանի օրոք[1]։

Շահ Իսմայիլը իր այս հրովարտակներով նախկին ձևով հաստատում էր կրոնական հաստատությունների մուաֆության իրավունքները և արգելում պետական պաշտոնյաներին ու զինվորականությանը նրանցից գանձելու այն տուրքերը, որոնք սովորաբար գանձվում էին ռայաթներից կամ մյուս հպատակներից։

1 «Շարաֆնամե», հ. 2, էջ 120։

Պարզ է դառնում, որ ինչպես Աղ-Կոյունլու Ուզուն-Հասանի թագավորության առաջին տարիներին, այնպես նաև Շահ Իսմայիլի կողմից «ապօրինի» («ղեյր-ե հոքմի») կամ «արգելված պարտավորություններ» («մութալեբաթ-ե մասդուդե») հռչակված շատ տուրքեր և պարտիքներ, շարունակել են գոյություն ունենալ և մեծ չափերով իրացվել են պետական պաշտոնյաների կողմից։

Բացի հավաքական հարկային տերմիններից, ինչպիսիք են, օրինակ՝ «իխրաջաթ». «ավարիզաթ», «վջուհաթ», «մութավաջջեհաթ», «հուկուկ-ե դիվանի», «Թաքալիֆ-ե դիվանի» և այլն, ռայաթների որոշակի հարկային պարտավորությունների մասին են խոսում հատկապես «ալաֆե-ուլուֆե», «ուլաղ-ուլամ», «բիգար-շիգար», «կոնալղա», «սավարի», «փիշքաշ», «սալամի», «էյդի», «նովրուզի», «ջով» (գարի), «գուսեֆանդ» (ոչխար) և մի շարք այլ տերմիններ, որոնցից շատերը հանդիպում են, ինչպես վերը հիշված սոյուրղալական հրովարտակներում, այնպես նաև նույն և հետագա շրջանի պատմական սկզբնաղբյուրներում։

Սակայն հրատարակվող հրովարտակների կարևորությունը կայանում է ոչ միայն նրանում, որ նրանք վերստին գալիս են հաստատելու և ճշտելու հարկերի և տուրքերի անունները ու բովանդակությունը, Շահ Իսմայիլի հիշյալ հրովարտակները պարունակում են նաև այնպիսի հարկային տերմիններ, որոնք, որքան մեզ հայտնի է, հիշվում են առաջին անգամ։ Այս տեսակետից մեծ արժեք է ներկայացնում հատկապես № 9 հրովարտակը, որը, ցավոք, ունի վնասված մասեր և ընթերցվում է մեծ դժվարությամբ։ Այս հրովարտակով, տրված հիջրեթի 911 թ. ռաբի՛ առաջին ամսի 25-ին (1505 թ. օգոստոս 26), Շահ Իսմայիլ Ա-ն մուսաֆության իրավունք է տալիս Հավուց-Թառի Ամենափրկչի վանքին և հրահանգում իր զինվորներին ու մյուս պաշտոնյաներին զանազան հարկերով և պարտիքներով չնեղել վանքի վանահորը։ Այստեղ հիշված հարկային տերմինների մեջ հանդիպում են նաև այնպիսիք, որոնք անծանոթ լինելու հետևանքով, դժվար են վերծանվում։ Մեծ դժվարությամբ և բառարանների օգնությամբ հնարավոր եղավ տալ դրանց հավանական ընթերցումը, որն, անշուշտ, կարոտ է հետագա ճշտման։

Այսպիսի տերմիններից է, օրինակ, «աղդար»-ը, որ Գեորգ Դպրի բառարանի բացատրությամբ նշանակում է «արժանի» և պետք է հասկանալ ֆեոդալին կամ պետական պաշտոնյային, նրա դիրքին և կոչման արժանի նվերների իմաստով։ Այնուհետև «նա-

մորդար» տերմինը, որ բառացի նշանակում է «ոչ-պիղծ». դա հավանաբար այն տուրքն էր, որ գանձվում էր քրիստոնյաներից այն դեպքում, երբ պետական պաշտոնյաները հակառակ շարիաթական օրենքների, իբր «ստիպված» իջևանում էին նրանց տներում և սնվում նրանց մթերքներով։ Նոր հարկային տերմին է նաև «ջավալիդ»-ը, որ նշանակում է բրդից գործված պարկ կամ հատուկ տեսակի թիկնոց։ Շատ հավանական է, որ եղել է տոպրակներ և հացահատիկի տարաներ հատուցելու հատուկ պարտավորություն։ Նույն հրովարտակում հիշված է նաև «չերիքի ոսկի» («զար-ե չերիք») տերմինը, որից պետք է եզրակացնել, որ հայերը «չերիք» կոչվող զինվորական ծառայության փոխարեն վճարում էին հատուկ տուրք՝ ոսկով։

Առանձնապես կարևոր է Շահ Իսմայիլի ամենահին, հիջրեթի 908 թ. շաաբան ամսի 12-ի (1503 թ. փետրվար 10) հրովարտակը (վավ. № 8), տրված Տաթևի վանքին։ Այստեղ մեկ անգամ միայն հիշված է «մունդիս»-ի տուրքի մասին («ռասմ-ե մունդիս»), որը գոյություն է ունեցել, ինչպես ավելի վաղ, այնպես նաև հետագա շրջաններում և կոչվել է նաև «էնդաս»-ի տուրք («ռասմ-ե էնդաս»)։ Այս տերմինի բացատրությունը մենք փորձել ենք տալ, ինչպես Մատենադարանի արխիվային փաստաթղթերի, այնպես նաև հատկապես ԺԷ դ. պատմիչ Իսքանդար Մունշու մի վկայության հիման վրա, ըստ որի «մունդիս» կամ «էնդաս» էր կոչվում այն տուրքը, որ գանձում էին պետական պաշտոնյաներն ու թիուլդարները, երբ նրանք զբաղվում էին ռայաթների միջև առաջացած զանազան վեճերի կռիվների և հատկապես «էնդաս-ե արբաէ» («չորս գիպվածներ»— սպանություն, բռնաբարություն, ատամ ջարդել և կուրացնել) կոչվող հանցանքների քննությամբ[1]։

Ուշադրավ է նաև, որ Շահ Իսմայիլի հիջրեթի 912 թ. ռաջաբ ամսի 6-ին (1506 թ. նոյեմբեր 22) Տաթևի վանքին տրված հրովարտակում (վավ. № 10), որտեղ համարյա նույն հարցերն են շոշափված, ինչ որ վերոհիշյալ 1503 թ. հրովարտակում, հայտնի «մալ» հարկի հետ հիշված է նաև «ղալլե» (հացահատիկ) տերմինը, որը հետագա շրջանի վավերագրերում չի հանդիպում։ Սակայն այդ տերմինը մինչև 1930-ական թվականները շարու-

[1] «Թարիխ-ե ալամարա-յե աբբասի», հ. Ա, Մատենադարանի պարսկերեն ձեռագրեր, № 11, էջ 202ա։ Հմմտ. Tadhkirat al-Muluk, by V. Minorsky, London, 1943, էջ 42, 119, պարսկերեն բնագիր (ֆաքսիմիլե), էջ 3։

նակվում էր գործածվել Իրանում, գյուղացիների կողմից պետու-
թյանը հատուցվող բնամթերային ռենտա-հարկի իմաստով:
Ինչպես Կարա-Կոյունլուների և Աղ-Կոյունլուների, այն-
պես նաև Շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակներում, ոչ միայն հաս-
տատվում են հայոց եկեղեցու և հայ հոգևորականության մուլ-
ֆության իրավունքները, այլ նաև խստորեն հրահանգվում է
հայ ռայաթներին անխափան կատարել իրենց պարտավորու-
թյունները եկեղեցու սպասավորների՝ հայ կղերի նկատմամբ:
Պահանջվում է կանոնավոր կերպով հատուցել եկեղեցական տուր-
քերը, որոնք սովորաբար մուսուլմանական տերմինով անվան-
վում են «նազր» («խոստմունք») կամ ուղղակի կոչվում են
«տուրք» («ռասմ»): Այս տեսակետից կարևոր են հատկապես որոշ
հրովարտակների վրա կատարված հայերեն համառոտ անոտացիա-
ները, որոնց մեջ նույնպես հիշատակված են մի շարք հարկային
տերմիններ, այդ թվում նաև եկեղեցական տուրքեր, որոնք հա-
ճախ չեն նշված հրովարտակի բուն տեքստում: Ինչպես, օրինակ,
«խումս» և «զաքյաթ»[1]: Հայերեն անոտացիաների մեջ հիշված
ինչպես հարկային, այնպես նաև սոցիալական ու վարչական
տերմինները մեծ մասամբ նույն տերմիններն են, որոնք հիշված
են տվյալ կամ մի այլ հրովարտակում: Սակայն դրանք ուշա-
դրավ են այն տեսակետից, որ ցույց են տալիս, թե նշված
տերմինները ինչպես են արտասանվել բուն իսկ ժողովրդի կողմից:
Կարա-Կոյունլուների և Աղ-Կոյունլուների, ինչպես նաև
Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակները մեծ արժեք են ներ-
կայացնում նաև պարունակած ԺԵ դարի սոցիալական և վար-
չական տերմիններով: Դրանցից մի քանիսի մեջ, շնորհիվ այն
բանի, որ գրված են նախկինում տրված այլ հրովարտակների
հիման վրա, արտահայտված են այնպիսի տերմիններ, որոնք
վերաբերում են նաև ԺԴ և նրան նախորդող դարերին: Առանձ-
նապես նկատվում են իլխանության շրջանին վերաբերող տեր-
միններ, ինչպես օրինակ, «ամիրթուման», «դարուղա», «բիթիկ-
չի» և այլն: Սոցիալական տերմիններով հարուստ են հատկապես
հրովարտակների սկզբի մասերը, թղթառաջները, որտեղ հրովար-
տակ տվողը դիմում է տվյալ վայրի զինվորական և պետական
պաշտոնյաներին և տեղի իշխող դասի ներկայացուցիչներին:
Ինչպես պետական, այնպես նաև տեղական ներքին-հասարակա-

---

[1] Տես սույն ժողովածուի № 8 վավերագրի ծանոթագրությունը:

կան պաշտոններ վարող անձնավորություններից առավել շատ հիշվում են «ամիր», «ամիրթուման», «հաքիմ», «դարուղա», «շահնա», «ամիլ», «մուբաշիր», «մութասարրիֆ», «մութավաքքիլ», «մութասադդի», «մուկադդամ», «քալանթար», «մելիք», «քյադխուդա», իսկ հասարակության ունևոր և իշխող դասի ներկայացուցիչներից՝ «ուսուլ», «արբաբ», «աշրաֆ», «ահալի» և այլ տերմիններ:

Հայ եկեղեցականների հոգևոր աստիճանները արտահայտված են տարբեր տերմիններով: Սովորաբար նրանք կոչվում են «վարդապետ» անկախ նրանց գիրքից և զբաղեցրած պաշտոնից: Սակայն երբեմն գործ է ածվում նաև «քեշիշ» (քահանա) անունը, որ պետք է հասկանալ «հայ հոգևորական»-ի իմաստով: Վանականներին սովորաբար կոչում են «ռահբան» կամ «ռահիբ», իսկ վանքի միաբաններին, ընդհանրապես, անվանում են «քոլահսիահ» (սևագլուխ): Հաճախ է գործածվում «մահրասիահ» (երբեմն նաև «մահրասիար») տերմինը, որ նշանակում է «աբեղա», սակայն գործ է ածվում նաև պատահական առումով, երբեմն այդպես են կոչվում նաև կաթողիկոսները (վավ. № 13): Այս տեսակետից ուշագրավ են Աղվանից կաթողիկոսներին տրված հրովարտակները, որոնց մեջ գործ է ածված «կաթողիկոս» տերմինը:

Աղվանից կաթողիկոսների հրովարտակները տրված լինելով նախորդ հրովարտակների հիման վրա, որոնք իրենց հերթին հիմք են ունեցել կիլիկյան թագավորների հայերեն հրովարտակները, շատ դեպքերում պահպանել են հայկական աշխարհագրական այնպիսի անուններ, որոնք դեռևս Ժ դարից սկսած գործածական չեն եղել արաբական և պարսկական գրականության մեջ, ինչպես օրինակ «Աղվանք», «Խաչեն», «Գանձասար» և այլն:

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ից պահպանվել է 7 հրովարտակ: Դրանցից երկուսը վերաբերում են Ագուլիսի (վավ. №№ 12 և 14), երկուսը Տաթևի (վավ. №№ 15 և 17) և մեկը Մակվի (վավ. № 16) վանքերին և հաստատում են նրանց վակֆային սեփականատիրական իրավունքները վանքապատկան գյուղերի ու վարելահողերի նկատմամբ: Մնացած երկու հրովարտակներից մեկը (վավ. № 13) տրված է ի հաստատումն Էջմիածնի Միքայել Սեբաստացի կաթողիկոսի (1545—1576) կաթողիկոսական իրավունքների, որով կաթողիկոսի ենթակա թեմերն ու միաժամանակ որոշվում են Էջմիածնին վանքերը, իսկ մյուսով (վավ. № 18), վերահաստատվում են Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի (1554—157°) ժառանգական իրավունքները Աղվանից կաթողիկոսական աթոռի նկատմամբ:

Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքի հիշյալ երկու հրովարտակները մեծ չափով օգնում են պարզելու վանքապատկան այն հողերի սեփականության և մուլքության էությունը, որոնք մտնում էին առանձին գյուղերի ընդհանուր մշակելի տարածության (քյոփչանի) մեջ և որոնց հողային հարկն ու պետական ռենտա-հարկը, մի անգամ հաշվված լինելով, ընդհանուր գումարով գանձվում էր գյուղական համայնքից: № 14 հրովարտակից պարզ երևում է, որ գյուղից գանձվող ընդհանուր ռենտա-հարկից ոչ մի բաժին չէր գրվում վանքի վրա, որպես հողի մի մասից օգտվողի: Հրովարտակի բովանդակությունից և ոճից միաժամանակ երևում է, որ այս հարցի շուրջ միշտ հակասություններ են եղել և ուժեղ պայքար է ծավալվել վանքի և գյուղական համայնքի անդամների միջև և վերջիններս հաճախ ըմբոստացել են ու փորձել բանի կերպով մշակել վանքապատկան հողերը առանց վանքին որևէ բան վճարելու: Նման հողային տիրույթները, որոնց վանքերը տիրում էին օգտագործման իրավունքով, խիստ բացասական դեր էին խաղում համայնքի անդամ հողագործ գյուղացու ավելի քան աղքատացման գործում, որովհետև այդ հողակտորների դուրս գալը գյուղական համայնքների տնօրինության տակից, նշանակում էր գյուղի ընդհանուր մշակելի տարածության կրճատում, այն դեպքում, երբ այդ հողերի պետական ռենտա-հարկը փաստորեն շարունակում էին վճարել նույն գյուղի համայնքի անդամ գյուղացիները:

Որ պայքարը Ագուլիսի վանքի և շրջակա գյուղերի ռայաթների միջև տևական բնույթ է կրել, այդ պետք է եզրակացնել այն փաստից, որ սույն ժողովածուում ընդգրկված երկու այլ հրովարտակներ ևս, որոնցից մեկը հրապարակված է 1581 թ. Ադրբեջանի բեկլարբեկի, իսկ մյուսը 1585 թ. Սեֆյան Սուլթան Մուհամմադ Խուդաբանդայի կողմից, նույնպես տրված են ի հաստատումն վանքի վակֆային հողերի մուլքության իրավունքի: Այսպես, օրինակ, 1581 թ. հրովարտակում (վավ. № 20) նույնպես շեշտված է, որ Ագուլիսից ոչ շատ հեռու Վանանդի ձորում գտնվող վանքապատկան հողերի «մալը» և դիվանական մյուս պարտավորությունները հաշված են Ագուլիսից գանձվող ընդհանուր «մալուջհաթ»-ի և «վջուհաթ»-ի մեջ, ուստի Վանանդի ձորում գտնվող գյուղերի քյադխուդաներն ու ռայաթները իրավունք չունեն այդ առթիվ Ագուլիսի վանքի վանահորից որևէ բան պահանջելու:

Ագուլիսի վանքի վերջին հրովարտակը, տրված հիջրեթի 994 թ. մուհարամ ամսին (1585 թ. դեկտեմբեր 23—1586 թ. հունվար 22) բացառիկ արժեք է ներկայացնում: Այստեղ բավական որոշակի վկայություն կա այն մասին, որ թեև վանքի միաբանությունը սկզբում ազատված է եղել հավելյալ գլխահարկից («թաֆավութ-և ջիզյա»), սակայն վերստուգիչ պաշտոնյան («մումայյիզ») նորից հաշվել է նրանց գլխահարկը և մտցրել Ագուլիսից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ: Այնուհետև հրովարտակում ասված է, որ Ագուլիսի մելիքներն ու քյադխուդաները այդ գումարը պետք է վճարեն տեղում և այդ առթիվ վանքի մարդկանց անհանգստություն չպատճառեն:

Հիշյալ մի քանի հրովարտակների մասնակի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Շահ Թահմասպ Ա-ի, այնպես նաև Ադրբեջանի բեկլարբեկի ու Սուլթան Մուհամմադ Խուդաբանդայի կողմից Ագուլիսի վանքին տրված հրովարտակները մեծ չափով կարող են օգնել պարզելու վանքերի վակֆային հողատիրության հարցերը և որոշելու թե ինչպես և վերջին հաշվով ում հաշվին էր ի կատար ածվում վանքերին և վանականներին շնորհվող մուլքության իրավունքը:

Սեֆյան Շահ Թահմասպի կողմից 1557 և 1562 թթ. Տաթևի վանքին տրված հրովարտակներով վերահաստատվում են վանքապատկան գյուղերի ցուցակները, նշելով միաժամանակ, որ դրանք ժամանակին հանդիսացել են Անգեղակոթցի Շմավոն վարդապետի ժառանգական մուլքերը և վերջինիս կողմից վակֆ են արվել վանքին: Այս ցուցակների համեմատությունը Կարակոյունլու Հասան-Ալիի 1468 թ. և Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1510 թ. հրովարտակների ցուցակների հետ ցույց է տալիս, որ վանքապատկան գյուղերի թիվը շուրջ 100 տարվա ընթացքում փոփոխության չի ենթարկվել: Եվ դա պատահական չէր: Ամբողջական գյուղերի և գյուղախմբերի նվիրատվություններ կատարվում էին հայ խոշոր ֆեոդալ-կալվածատերերի կողմից, որպիսիք ԺԶ դարում Հայաստանում չկային: ԺԷ դարում միայն նշված են հատուկենտ գյուղերի կամ նրանց մի մասի նվիրատվության փաստեր հայ ունևոր-վաճառական դասի ներկայացուցիչների կողմից, որոնք ԺԶ դարի վերջերից սկսել էին գանձագին մուլքեր ձեռք բերել:

Ոչ պակաս կարևոր փաստաթուղթ է նաև Շահ Թահմասպի հիջրեթի 969 թ. ռաջաբ ամսին (1562 մարտ 7—ապրիլ 6)

433—3

Մակվի Թադեոս առաքյալի վանքին (վավերագրում՝ Ղարաքիլիսա) շնորհած հրովարտակը (վավ. № 16), որով որոշվում են վանքի հանդի սահմանները և ճշտվում է նրան հատկացվող ջրի քանակը։ Վավերագիրը առանձին հետաքրքրություն է առաջացնում հատկապես իր պարունակած աշխարհագրական անուններով, ոռոգման հարցի և եկեղեցական տուրքերի վերաբերյալ հետաքրքիր մանրամասնություններով ու տերմիններով, և կարևոր է Մակվի, Խոյի և մերձակա շրջանների հայության ու հատկապես Մակվի Թադեոս առաքյալի և Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքերի ազդեցության շրջանների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններով։

Ռայաթների կողմից կալվածատեր-ֆեոդալների դեմ մղվող սոցիալական պայքարի պատմության ուսումնասիրության տեսակետից առանձին ուշադրության արժանի է Շահ Իսմայիլ Բ-ի օրոք 1577 թ. Բարձրագույն դիվանի կողմից հրապարակված հրովարտակը, որը տրված է ի հաստատումն «բանակատեղի դատավորների» (զինվորական ատյան) վճռի։ Հրովարտակը տրված է այն բանից հետո, երբ Հավուց-Թառի վանահայրն ու ազգակից մյուս կալվածատերերը բողոք են ներկայացրել Շահ Իսմայիլ Բ-ի կողմից կազմված արտակարգ հանձնաժողովին, հայտնելով, որ նրանց գյուղերի ռայաթները հրաժարվում են ռենտա վճարել։ Արտակարգ հանձնաժողովը հրահանգում է Չուխուր-Սաադի (Երևան) բեկլարբեկին և Շար'ի լիազորներին սաստել ռայաթներին և ստիպել նրանց, որպեսզի կատարեն իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ։ Հրովարտակը առանձնապես արժեքավոր է պարունակած շարիաթական-իրավաբանական տերմիններով, ինչպիսիք են օրինակ՝ «մուլք-է շար'ի» (ملك شرعى), «ուջրաթ-ուլ-մասալ» (اجرة المثل), «թալաբ վա լզում» (طلب و لزوم), «ջահաթ-ե շար'իյե» (جهة شرعيه) և այլն։

ԺԶ դարի հրովարտակները, ինչպես ասվեց, նույնպես հարուստ են բազմաթիվ հարկային, սոցիալական և վարչական տերմիններով։ Այդ տերմինները կարևոր են ընդհանրապես հարկային սիստեմի և մասնավորապես հարկերի իրացման այն ձևի ուսումնասիրության համար, երբ բնակչությունից ստացվող հարկերի գանձման իրավունքը, ըստ առանձին օբյեկտների,

ռոճիկի դիմաց տրվում էր զինվորականության ու պետական պաշտոնյաներին որպես «թիուլ» կամ «համեսալե»։

Թիուլը որպես ֆեոդալական ինստիտուտ սկսեց հանդես գալ ԺԶ դարի առաջին կեսում և տարածված ձև դարձավ հատկապես ԺԷ դարում։ Հատկանշական է, որ թիուլդարների մասին առաջին անգամ հիշված է Շահ Թահմազ Ա-ի 1544 թ. հրովարտակում (վավ. № 12)։

Հարկային սիստեմի ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանի են հատկապես «արվար-է ջամ'» և «մակթա'» տերմինները, որոնցից առաջինը, որ երբեմն օգտագործվում է նաև «ջամ'» կրճատ ձևով, հարկերի այն ընդհանուր գումարն է, որի տակ ի մի էին բերվում մեկ կամ մի քանի հարկատու օբյեկտներից գանձվող հարկերը։ Երբ ասում էին այսինչ օբյեկտի հարկերը մտնում են այս կամ այն գյուղի կամ քաղաքի «արվար-է ջամ'»-ի մեջ, այդ նշանակում էր, որ այդ օբյեկտն իր հարկերը պետք է հատուցեր միայն տվյալ գյուղական համայնքի միջոցով և չէր կարող դիտվել որպես առանձին հարկային միավոր։ «Մակթա'» էր կոչվում այն որոշյալ գումարը կամ մթերքի այն որոշակի քանակը, որ մի անգամ որոշված լինելով, անկախ տվյալ տարվա բերքից, անփոփոխ չափերով վճարվում էր կալվածատիրոջը կամ պետությանը։

Բավական ինքնատիպ և արժեքավոր փաստաթուղթ է Բարթլիի Սիմեոն թագավորի 1594 թ. հրովարտակը (վավ. № 23), որը վերաբերում է Գորիի հայ քահանաների թարխանության (հարկային իմունիտետ) իրավունքին։ Այս հրովարտակը իր գրության ձևով և ոճով չափազանց նման է դարասկզբի Շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակներին։ Այստեղ հիշված են համարյա նույն տերմինները, որոնց մասին մենք առիթ ունեցանք հիշելու ԺԵ դարի հրովարտակները նկարագրելիս։ Գրված լինելով ավելի հին հրովարտակների հիման վրա, այստեղ արտահայտված են այնպիսի տերմիններ, որոնք չեն հանդիպում ԺԵ և ԺԶ դդ. մյուս հրովարտակներում, ինչպես, օրինակ՝ «թարխան», «յարղուչի», «սավարի-յե դարգահ», «վազիրանե» և այլն։

Մենք առանձին չենք ուզում անդրադառնալ Աղթամարի վանքին վերաբերող միակ վավերագրին (№ 21), որի մասին բավական մանրամասն խոսել ենք նույն վավերագրին վերաբերող ծանոթագրության մեջ։

Սույն ներածության սահմաններում հնարավոր չէ մեկ առ մեկ կանգ առնել հրովարտակներում նշված բոլոր տերմինների վրա և ցույց տալ յուրաքանչյուրի նշանակությունը ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության գործում[1]: Նշենք միայն, որ թեև ԺԶ դարի երկրորդ կեսի հրովարտակներում մեծ չափով կրկնվում են նախորդ դարերի հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինները, սակայն, ինչպես վերը մասամբ առիթ ունեցանք ծանոթանալու, նրանց մեջ զգալի թիվ են կազմում նաև այնպիսի տերմիններ, որոնք հանդես են գալիս ԺԶ դարում և կարևոր են ֆեոդալական հարաբերությունների մեջ տեղի ունեցող փոփոխությունների ու զարգացման պատմության ուսումնասիրության համար:

Հրովարտակները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նաև երկրի վարչական բաժանման և ադմինիստրատիվ սիստեմի մասին: Որպես խոշոր վարչական միավորներ հիշված են Չուխուր-Սաադի (Երևան)[2], Թուման-ե Նախչևանի, Ղափանաթի, Ղարաբաղի, Առանի, Արասբարի, Գյոգչայի վիլայեթները: Ինչպես տեսնում ենք, ԺԵ—ԺԶ դդ. վարչական բաժանման պատկերը համարյա նույնն է, ինչ որ Իլխանության տիրապետության շրջանում, երբ երկիրը բաժանված էր առանձին «թուման»-ների: «Թուման» անունը պահպանվել էր միայն Նախչևանի վրա, որը այնուհետև էլ շարունակեց այդպես կոչվել մինչև ԺԸ դարի վերջերը: Հաճախ «վիլայեթ», «նահիա», «մահալ», «բոլուք» վարչական բաժանումների անունները գործ են ածված պատահական առումով, հատկապես «մահալ» տերմինը, որ գործ է ածված նաև «վայր»-ի, իսկ երբեմն սոսկ «գյուղ»-ի իմաստով (վավ. № 11):

Ավելի փոքր վարչական միավորներից հատկապես հիշված են Ղափանաթի վիլայեթի «Օրոտ» և «Գեղի» և «Թուման-ե Նախչևանի», «Սիսաջան» ու «Ազադ-Ջիրան» կոչվող նահիաները:

[1] Տերմինների բացատրությունը տես կից բառարանում:

[2] Արարատյան երկիրը այսպես սկսեց կոչվել ԺԴ դարի վերջերին այստեղ իշխող Ամիր Սաադի անունով: «Չուխուր-Սաադ» նշանակում է «Սաադի փոս» կամ «Սաադի հովիտ», հայկական աղբյուրներում՝ «Սահաթափոս»: «Սաադ» հատուկ անունը բառացի նշանակում է «երջանիկ», դրա համար էլ պարսկական աղբյուրները «Չուխուր-Սաադ» անունը առուգաբանում են՝ «երջանիկ հովիտ»:

Այս նահիաների կամ մահալների և նրանց մեջ մտնող մի շարք հայտնի գյուղերի մասին տրված վկայությունները հնարավորություն են տալիս մոտավոր կերպով ճշտելու վերոհիշյալ վիլայեթների սահմանները:

Վանքապատկան կալվածների ցուցակների հաստատման և նրանց սահմանների ճշտման կապակցությամբ հիշված են բազմաթիվ հայկական գյուղերի անուններ, որոնք կարևոր են հատկապես Արևելյան և Հարավ-արևելյան Հայաստանի ԺԵ—ԺԶ դդ. պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար:

Խոշոր վանքերն ու եկեղեցիները հրովարտակներում և այլ վավերագրերում մեծ մասամբ կոչված են այն վայրի անունով, որտեղ որ նրանք գտնվում են, օրինակ՝ «Տաթև», «Վաղադի», «Ագուլիս», «Դարաշամբ» և այլն: Բայց և երբեմն դրանք հիշված են թյուրքական անուններով, ինչպես, օրինակ՝ «Ուչքիլիսա» (Էջմիածին), «Ղարաքիլիսա» (Թադեոս առաքյալ), «Կըզըլ վանք» (Ամենափրկիչ) և այլն[1]:

Ի վերջո պետք է նշել, որ հրովարտակները առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև գոյություն ունեցող քարտուղարության սիստեմի, դիվանական գրագրության և ռեգիստրացիոն կարգի ուսումնասիրության տեսակետից: Փաստաթղթերի վրա, մեծ մասամբ հակառակ էջում, կատարված մակագրություններից երևում է, որ սովորաբար հրովարտակները գրվելուց հետո գրանցվում էին դիվանական որոշ մատյաններում:

Նախապես շահի կնիքով կնքվելուց հետո, որը ԺԶ դարից սովորաբար դրվում էր բուն տեքստի վերևի մասում, հրովարտակները ենթակա էին կնքման և հաստատման նաև Սադրի ու Էչեթեմադ-ուդ-դովլեի կնիքներով: Այնուհետև, եթե դրանք վերաբերում էին հողային սեփականության և մուաֆության հարցերին, ռեգիստրացիայի էին ենթարկվում «մուսթովֆի-և մովկուֆաթի» կողմից, ապա գրանցվում էին տեղական՝ նահանգային «մովկուֆաթի» դաֆթարում: Այս կարգի հրովարտակները ենթակա էին հաշվառման նաև, ինչպես կենտրոնական,

[1] Էջմիածնի վանքը և Վաղարշապատ գյուղը «Ուչքիլիսա» (երեք եկեղեցի) է կոչվել, որովհետև ԺԴ դարում մայր տաճարին կից եղել են նաև երկու այլ եկեղեցիներ: «Ղարաքիլիսա» (սև եկեղեցի), «Կըզըլ վանք» կամ «Կըզըլ քիլիսա» (կարմիր վանք կամ կարմիր եկեղեցի) էին կոչվում այն վանքերն ու եկեղեցիները, որոնք կառուցված էին այդ գույնի հանքաքարով:

այնպես նաև տեղական հարկային-ֆինանսական գրասենյակներում և կնքվում էին համապատասխան պաշտոնյաների կնիքներով, որոնց կից կատարվում էին հետևյալ խիստ համառոտ մակագրությունները՝ «գրի առնվեց», «գրանցվեց», «արձանագրվեց», «տեղեկացվեց» և այլն:

Շարիաթական պատճենների վրա, բացի այն, որ բավական մանրամասն տվյալներ էին հաղորդում իսկականի վրա եղած կնիքների և մակագրությունների մասին, երբեմն համառոտ, իսկ երբեմն համեմատաբար ընդարձակ արաբերեն մակագրությամբ նշում էին կատարում նաև պատճենի հարազատության մասին, որը հաստատվում էր Շար'ի նոտարական գրասենյակի պետի կնիքով: Պատճենների վրա նույնպես պատահում են դրանց ռեգիստրացիայի մասին վկայող մակագրություններ, կնքված համապատասխան ինստանցիաների կողմից:

* * *

Տարբեր թղթապանակներում գտնվող ԺԵ—ԺԶ դդ. բոլոր հրովարտակները սույն գրքում դասավորված են ժամանակագրական կարգով: Յուրաքանչյուրին տրված է խիստ համառոտ վերնագիր, որի մեջ նշված է, թե ո՞վ է տվել հրովարտակը, ո՛ւմ, ե՞րբ և ինչի՞ մասին: Այնուհետև ցույց է տրված Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդի համապատասխան թղթապանակն ու այն համարը, որի տակ գրանցված է տվյալ վավերագիրը: Ապա նշված է, թե հրովարտակը բնագրով է պահպանված, թե պատճենով, ինչ մեծություն ունի և ինչ գրով է գրված: Վավերագրերը բոլորն էլ գրված են տարբեր տեսակի թղթերի վրա. այդ մասին ավելորդ ենք համարել ամեն անգամ շեշտել: Վավերագրերի ներկա վիճակի ավելի մանրամասն նկարագրությունը տրված է յուրաքանչյուր վավերագրի ծանոթագրության մեջ:

Հրովարտակները թարգմանելիս աշխատել ենք, որքան կարելի է, հարազատ մնալ բնագրին և հնարավորության սահմաններում, երբեմն նաև հանդուրժելով որոշ ոճական ու շարահյուսական անհարթություններ, պահպանել ենք արտահայտչական այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ են այդ կարգի վավերագրերին, արտահայտում են ժամանակի ոգին և բնորոշ են ֆեոդալական հարաբերությունների պայմաններում մշակված դիվանական գրագրության ոճին:

Նման թարգմանությունների ժամանակ թարգմանչին է վերապահված նաև բնագրի կետադրության վերականգնումը, քանի որ, ինչպես հայտնի է, պարսկական մատենագրության մեջ ժամանակակից կետադրական օրենքները չէին կիրառվում:

Բնագրի թարգմանության ժամանակ անկյունավոր փակագծեր ենք օգտագործել այն դեպքում, երբ փորձել ենք վերականգնել տեքստի մաշված կամ ջնջված մասերը և կամ երբ թարգմանությունը ավելի հասկանալի դարձնելու նպատակով ստիպված ենք եղել ավելացնել մեկ կամ մի քանի բառ: Կոր փակագծերում տրված են զուտ բացատրական բնույթի բառեր, որոնք անհրաժեշտ են եղել բնագրի տվյալ հատվածը ճիշտ հասկանալու համար: Կոր փակագծերում նշված են նաև այն տերմինների պարսկերեն համանիշները, որոնք հայերեն տեքստում տրված են թարգմանաբար: Անվերծանելի և մաշված մասերը, որոնք չենք կարողացել վերականգնել, ցույց են տրված բազմակետերով, հայերեն թարգմանության տողատակում նշելով անհայտ բառերի թիվը:

Հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինները, ինչպես նաև աշխարհագրական անուններն ու օտար անձնանունները մեծ մասամբ տրված են բնագրի պարսկական արտասանությամբ[1], ի բաց առյալ մի քանի տերմիններ ու անուններ, որոնք մեր գրականության մեջ տրադիցիոն կերպով արմատացել են հատուկ՝ տեղական արտասանությամբ. ինչպես, օրինակ՝ «վիլայեթ», «նահիա», «մելիք», «դարուղա» և այլն:

Հրովարտակների հայերեն և ռուսերեն թարգմանություններում շղագրով տրված տերմինները բացատրված են կից բառարանում: Տերմինների բացատրությունը տրված է որքան հնարավոր է համառոտ, աշխատելով տալ տերմինի այն հիմնական իմաստը, որ պարունակել է տվյալ ժամանակաշրջանում և, հատկապես, վավերագրի տեքստի տվյալ կապակցության մեջ: Գիտության կողմից դեռևս վերջնականապես չլուսաբանված տերմինների մասին տվել ենք այն բացատրությունը, որն ավելի հավանական է թվացել մեզ և կամ առաջարկել ենք նոր բացատրություն, բանավեճի մեջ չմտնելով այս կամ այն ուսումնասիրողի հետ:

[1] Բացի ֆաթհայից (ազրբեջաներենում ə), որն արտահայտված է սովորական ա-ով:

Տերմինների մի մասի բացատրությունները տրված են առաջին անգամ, հենվելով բուն վավերագրերի և այլ աղբյուրների վրա։

Ոչ բոլոր դեպքերում է հաջողվել վերծանել վավերագրերի վրայի կնիքները։ Սակայն դրանց պատկանելիությունը մեծ մասամբ ճշտված է։

Բնագրերում մեզ հասած վավերագրերը համեմատված են պահպանված պատճենների հետ, իսկ այն վավերագրերը, որոնք մեզ են հասել միայն պատճեններով (մեկ կամ երկու օրինակով) նույնպես համեմատված են։ Դրանց մեջ եղած տարբերությունները առհասարակ խիստ աննշան են։ Էական տարբերություններ եղած դեպքում, բնագրում հիմք ենք ընդունել ավելի հավանականը, այդ մասին նշելով տվյալ հրովարտակի ծանոթագրության մեջ։

Վավերագրերի հիշյալ պատճենների նկարագրությունները և նրանց վրա եղած այլևայլ մակագրությունները նույնպես մանրամասն տրված են յուրաքանչյուր վավերագրի ծանոթագրության մեջ։

Պարսկերեն հրովարտակները գերազանցապես գրված են լինում թղթի մեկ էջի վրա, իսկ մյուս էջի վրա սովորաբար կատարվում էին վավերագրի ռեգիստրացիային վերաբերող մակագրություններ և ուշ շրջանի վերաբերող հայերեն լեզվով անոտացիաներ։

Պարսկերեն բնագրերի բաժնում տրված է յուրաքանչյուր հրովարտակի առաջին էջը ամբողջությամբ. Երկրորդ էջի տեքստը տվել ենք միայն այն դեպքում, երբ վավերագիրը բաղկացած է եղել շահի հրովարտակից և Շար՛ի մխալից, գրված թղթի երկու երեսի վրա (վավ. №№ 17 և 19), և կամ երբ մյուս էջում կատարված են բուն հրովարտակի բովանդակության հետ առնչվող կարևոր մակագրություններ (վավ. №№ 11 և 22)։ Այլապես մյուս էջի մանրամասն նկարագրությունը տվել ենք յուրաքանչյուր հրովարտակի հայերեն և ռուսերեն թարգմանության վերջում։

Հրովարտակների տեքստերը աշխատել ենք տալ որքան կարելի է ազատ ավելորդ հավելագրություններից, դրա համար էլ վավերագրերի վրա տարբեր ժամանակներում կատարված հայերեն մակագրություններն ու համառոտ անոտացիաները զետեղել ենք տվյալ վավերագրի ծանոթագրության մեջ։

Հրովարտակներում հիշատակված առանձին գործիչների մասին հնարավորության սահմաններում աշխատել ենք տալ լրացուցիչ տեղեկություններ.

Պարսկերեն վավերագրերի բնագրերի վերծանման, թարգմանության և հրատարակման այս անդրանիկ փորձը հանձնելով արևելագետների ուշադրությանը, լիահույս ենք, որ մասնագետների կողմից կատարված դիտողությունները մեծապես կօգնեն մեզ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» հաջորդ պրակների հրատարակության ժամանակ խուսափելու այն թերություններից, որոնք կարող են տեղ գտած լինել սույն պրակի մեջ։

Հ. Փափազյան

ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի 1449 թ. հրովարտակը Տաթևի և Վաղադնի վանքերի հողերից և ստացված բերքից հարկեր չգանձելու մասին

Թղթապանակ 2ա, վավերագիր № 10, բնագիր,
մեծ. 32×14 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

... Նախկին թագավորների [հրովարտակները] և արքայական աշխարհասաստ հրամանը,— թող [երկրի] բոլոր կողմերից անսասան լինի,— ցույց տվեց: Ըստ որոնց Տաթևի և [Վաղադնի] վանքերի [հողերի] բերքը, որը հին ժամանակներից սկսած նրան է պատկանել և ծախսվել է [վանքի] լուսավորության և երթևեկողների (ուխտավորներ) վրա, նրան* մուսալլամ *է արված: Օրոտի* բոլուքի դարուղաները, շահնաները, մելիքները *ու* քյադխուդաները *համաձայն նորին մեծություն աշխարհակալ թագավորի հրամանագրի,— թող աստված հավիտյանս դարձնի նրա թագավորությունն ու իշխանությունը,— ոչ մի դեպքում հիշյալ վարդապետի ցանքսերին ու բերքին և նրա հետ կապ ունեցող մարդկանց չմոտենան և առավել կամ պակաս չափով ցանկություն և ակնկալություն չունենան և [նրանց հետ] այնպես վարվեն, որ հիշյալ վարդապետը գոհ և շնորհակալ լինի և կարողանա ծառայել երթևեկողներին (ուխտավորներ) ու աղոթել թագավորական ...** պետության [բարօրության] համար,— թող աստված հավիտյանս դարձնի նրա թագավորությունն ու իշխանությունը:*

Թող այսպես [ծառայություն] մատուցեն և հավատ ընծայեն:

Գրվեց 853 թվականի ռաբի՝ առաջին ամսի վերջերին (1449 թ. մայիս 20—23):

Երկու անընթեռնելի կնիքներ

---

* *Բնագրի սկզբի մասը չի պահպանվել:*

** *Մեկ բառ անվերծանելի:*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 2

Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի հրովարտակը Տաթևի և Վաղադնի վանքապատկան հողերը ամեն տեսակ պետական հարկերից ազատելու և Գյոգչայի Վիլայեթի հայ հոգևորականությանը Տաթևի վանահայր Շմավոն վարդապետին ենթարկելու մասին

Թղթապանակ 2ա, վավերագիր № 7, բնագիր, մեծ. 47×17 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Օլքայի ամիրները, հաքիմները և դարուղաները, Ղափանաթի, Սռանի և Արարարի մութավաքքիլները, ամիլները, [այս գործերով] զբաղվող մութասադդիներն ու ամիրթումանը և հատկապես [այդ] վայրերի շահնաները, մելիքներն, ու մուկադդամները նույն արքայական հրամանին վերահասու և տեղյակ լինեն ու իմանան, որ օրերս քրիստոնյաների առաջնորդ Շմավոն վարդապետը եկավ աշխարհի ապավենի դուռը և իր խոնարհության և օրըստօրե աճող պետության հարաճուն հարատևման համար աղոթամատույց լինելու մասին զեկուցելուց հետո, ներկայացրեց նախկին թագավորների հրամանագրերը, [ինչպես նաև] ստորագրված ու հրապարակված արքայական հրամանագիրը այն մասին, որ նրա պաշտոնատեղին ու բնակության վայրը հանդիսացող Տաթևի և Վաղադնի վանքերը և նրա վանքի վակֆերին վերաբերող և [նրա կողմից] մշակվող հողերը մալից, իխրաջաթից և դիվանական ավարիզից մուաֆ և մուսալլամ համարվեն և նրա ցանքերից, վարելահողերից ու բերքից մալ և խարաջ չպահանջեն, նրա մարդկանց մուսալլամ և ցուցակագրումից ազատ (մարֆու'-ուլ-կալամ) ճանաչեն:

Դրա համար էլ ամենակարող աստծու օգնությամբ այս հրամանագիրը, որին հնազանդվելը պարտադիր է, բոլոր վայրերում և բոլոր կողմերում հրապարակվեց, որպեսզի նրանց մութավաջջեհաթը հին կարգով և ընդունված օրենքով մուաֆ և զեղչված (մավզու') համարեն և նախկին կարգով Գյոգչայի վիլայեթի քահանաներն ու վանականները նրան իրենց առաջնորդն ու վարդապետը ճանաչեն և հնազանդվեն ու ծառայեն նրան, և այն նազրը (խոստումնը), որ հին ժամանակներից ի վեր տվել են Տաթևի վանքին նույն կարգով շարունակեն տալ:

Օրոտի [մելիքներն] ու դարուղաները ըստ սույն հպատակության արժանի հրովարտակի հաստատված ճանաչեն [այս] և չհակառակեն:

Ջհանշահի կնիքը

Թվականը չի պահպանված

ՎԱՎԵՐԱԳԻՐ 3

Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում-խաթունի 1462 թ. հրովարտակը տրված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները և կարգադրում տեղի պետական պաշտոնեությանը այլ և այլ տեսակի հարկապահանջությամբ չնեղել նրան և նրան ենթարկվող հոգևորականներին, այլ հարկ եղած դեպքում օգնություն ցույց տալ

Թղթապանակ 2ա, վավերագիր № 5, պատճեն, մեծ. 106×33 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Նա հարուստ է:

Վեհմաշուք թագուհի: Իմ խոսքը:

Ապահով երկրների ամիրները, հաքիմները, դարուղաները, տոհմիկները (ուլուս), բարձրաստիճան մարդիկ, ազնվականները, երևելիներն ու մելիքները, քյադխուդաները, արբաբներն ու ամիլները, մութասարրիֆներն ու բիթիկչիները տեղյակ լինեն, որ օրերս քրիստոնյաների պարծանք Աղվանքի վիլայեթի Հովհաննես կաթողիկոսը ցույց տվեց նորին մեծություն, թագավորական իշխանության ապավենի (Ջհանշահի),— թող աստված հավիտյանս դարձնի նրա թագավորությունն ու իշխանությունը,—[այն] աշխարհասաստ հրամանագիրը, որը տրված էր ի հաստատումն երջանկահիշատակ և երանելի, հանգուցյալ արքա Շեյխ-Ուվեյս բահադուրի հրամանագրի,— թող աստված նրա հոգին լուսավորի:

Այդ հրամանագրի բովանդակությունը հետևյալն է.

«Սկսած հին ժամանակներից և համաձայն Սախ թագավորի դրության Աղվանքի բոլոր վայրերի առաջնորդությունն ու դեկավարությունը պատկանում է Մատթեոս կաթողիկոսին, որի համար էլ այս հրամանագիր-յառլիղը հրապարակվեց, որպեսզի առաջվա պես նրան ճանաչեն որպես այդ վիլայեթում ապրող հայերի առաջնորդն ու ղեկավարը և նրա ձեռքը այս գործում ու-

ժեղ և իրավազոր համարեն, նրան [պատկանող] վայրերում չինջեանեն, նրանց չորքոտանիները ուլաղ չվերցնեն, նրանից և նրան ենթարկվող հոգևորականներից ջիզյայի և բեյթ-ուլ-մալի պատրվակով ոչինչ չպահանջեն: Ազվանքի, Գանձասարի հայերը թող նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու ղեկավարը և իրենց կրոնի վերաբերյալ նրա ասած խոսքերի և խրատների սահմաններից դուրս չգան, նրան ենթարկվելը անհրաժեշտ համարեն և երբեք նրանից չանջատվեն, ոչ մի արարած նրա գործերին չխառնվի ու չմիջամտի, նրան ենթակա հոգևորականների և մերձավորների նկատմամբ հանցանք չգործեն, նրանցից ոչինչ չպահանջեն և որևէ ցանկություն ու ակնկալություն չունենան: Ի՛նչ հարցով էլ, որ նա դիմի նրանց, անհրաժեշտ համարեն ազնվաբար օգնել նրան, և այնպես անեն, որ նրան ենթակա հոգևորականներն ու նրա մերձավորները ազատորեն կարողանան իրենց գործերով և խնդիրներով զբաղվել և հարատև փառաբանություն մատուցեն»:

[Մատթեոս կաթողիկոսը այս հրամանագիրը] ցույց տվեց և խնդրեց այն հաստատել իր անունով: Նրա խնդիրքը հավանություն գտավ և ամենակարող աստծու օգնությամբ այս արքայական հրամանագիրը [երկրի] բոլոր կողմերում հրապարակվեց, որպեսզի ինչպես որ ըստ նախկին թագավորների հրամանագրերի հաստատված և ընդունված է եղել, այդպես վարվեն և ընդունված օրենքների ու վաղեմի կանոնների մեջ փոփոխություն չմտցնեն, այս գործում նրա ձեռքը ուժեղ և իրավազոր համարեն, նրան ճանաչեն որպես իրենց ղեկավարն ու առաջնորդը և իրենց կրոնի վերաբերյալ նրա ասած խոսքերի ու խրատների սահմաններից դուրս չգան»:

[Հովհաննես կաթողիկոսը] Խասան-յե շարիֆեի ստորագրությունը խնդրեց: Հարգելով նրա խնդիրքը, այս արքայական հրամանագիրը գրի առնվեց: Համաձայն [հիշյալ] հրամանագրերի թող որոշված ու հաստատված ճանաչեն և նրա[նց] օրենքների մեջ փոփոխություններ չմտցնեն, որովհետև դա մեր Խասան-յե շարիֆեին է պատկանում: Թող [վերոհիշյալ] հարցերում չհակառակեն և չթերանան ու թող ամեն տեղ այսպես վարվեն, և երբ [հրամանագիրը] սրբազան կնիքով պայծառափայլվի ու զարդարվի, հավատան նրան:

Գրվեց 866 թվականի զիկադա ամսի 10-ին (1462 թ. օգոստոս 6):

Բեգում-խաթունի կնիքը, հետևյալ մակագրությամբ՝

Եթե բարեգութ տերը [քեզ] տվել է երկու
աշխարհների հարստությունը,
Մի հպարտացիր բախտի կողմից քեզ տրված
այս մեծարման համար, ով Խաթուն խան:

Գրանցվեց: Սարուկ և ընտրյալ ծառա խոջա Շամս-ադ-դին Մուհտասամ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 4

Կարա-Կոյունլու Հասան-Ալիի 1468 թ. հրովարտակը Տաթևի և Վաղադնի վանքերը հարկերից ազատելու, վանքապատկան գյուղերի բահրաչեն նրանց նվիրելու և հոգևոր տուրքերը կանոնավոր վճարելու մասին

Թղթապանակ 2ա, վավերագիր № 6, բնագիր,
մեծ. 74×26 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Նա խնամող է ու հոգատար:

Հաղթական Հասան-Ալի բահադուր: Մեր խոսքը՝

Ղափանաթի, Առանի և Արարատի ամիրներին, հաքիմներին, դարուղաներին, ամիլներին, դիվանական գործերի մուբաշիրներին և [տեղի] մելիքներին ու [քյադխուդաներին] թող հայտնի լինի, որ քրիստոնյաների պարծանք Շմավոն վարդապետը և Ստեփանոս կրոնավորը եկան աշխարհի ապավենի դուռը և խընդրարկու լինելով, արքայական ողորմածությանը ներկայացրին երջանկահիշատակ արքա, իմ հանգուցյալ նահատակ հոր կողմից,—աստված նրա հոգին լուսավորի,—նրա[նց] անվամբ շնորհված հրովարտակները այն մասին, որ «Տաթևի և Վաղադնի վանքեր[ից], որոնք նրանց պաշտոնատեղին ու բնակավայրն են եղել, և այդ վանք[եր]ի վակֆերին վերաբերող ու [նրանց կողմից] մշակվող հողեր[ից] մալ, իխրաջաթ և ավարիզ չպահանջեն, նրանց և նրանց հետ կապ ունեցող մարդկանց վարելահողերից ու ցանքսերից մալ և խարաջ չվերցնեն: Գյոգչայի և Օրոտի վիլայեթի քահանաներն ու վանականները նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու վարդապետը և հնազանդվեն նրան: Այն նազրը (խոստումնք), որ հին ժամանակներից սկսած տրվել է Տաթևի վանքին, նախկին կարգով շարունակեն տալ: Այն հողերի

բանրաչեն, որ Շմավոն վարդապետը գնել է Բեշքենի որդուց, ըստ կից ցուցակի ողորմածությամբ շնորհեցինք նրանց։

Որովհետև խնդրեցին վավերացնել, ուստի ըստ նրանց խընդրի այս աշխարհասասան հրամանագիրը գրի առնվեց, որպեսզի ընդունված կարգով և համաձայն հաստատված օրենքի նրանց ցանքսերը ճանաչվեն որպես մուաֆ, մուսալլամ և ցուցակագրության չենթարկվող (մարֆու'-ուլ-կալամ) հողեր։ Նախկին հրամանագրերի օրենքների մեջ որևէ փոփոխություն թույլ չտան, ոտնձգություններ չանեն, ոչ մի դեպքում անհանգստություն չպատճառեն և այս հարցում չթերանան։

Գրվեց համաձայն բարձրագույն հրամանի և թող ամենակարող աստված հավիտյանս հավելի նրա կյանքը։ 872 թվականի ռամազան ամսի 4-ին (1468 թ. մարտ 28)։

Հասան-Ալիի կնիքը, հետևյալ մակագրությամբ՝

Սուլթան Ջհանշահի որդի Հասան-Ալի, 872։

Մատյանում գրանցվեց։

Արքունի դիվան ծառա՝ Միր-Ալի Փարվանչի։

Գրեց սարուկ, ծառա։

Վանքապատկան գյուղերի ցուցակը, որը թղթի մի երեսի վրա մանր շիքասթե գրությամբ գրված և փակցված է հրովարտակի 6 և 7-րդ տողերի արանքում։

№№	Գյուղ	Նահիա	Վիլայեթ
1	Բնունիս և Թաս	Սիսաջան	Թուման-և Նախչևան
2	Ղարաքիլիսա	»	»
3	Դաստաջերդ և Գյոլյազի	»	»
4	Սվարի	Օրոտ	Ղափանաթ
5	Ագարյանդի	»	»
6	Տաշու	»	»
7	Տաթև	»	»
8	Տանձատափ	»	»
9	Խոտանան	»	»
10	Հալիձոր	»	»
11	Շնհեր	»	»
12	Բորդի	»	»
13	Կից	»	»
14	Խոտ	»	»

ՎԱՎԵՐԱԳԻՐ 5

Աղ-Կոյունլու Ուզուն-Հասանի 1475 թ. հրովարտակը Դարաշամբի հայ հոգևորականներին խարաջից և ջիզյայից ազատելու մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 3, բնագիր,
մեծ. 32×18 սմ, գիր՝ շիքասթե

[Իշխանությունն աստծունն է]։

Հաղթական Հասան բահադուր։ Մեր խոսքը։

Դարաշամի դարուղան և քալանթարները թող իմանան, որ հայ կրոնավոր Վարդանը և ուրիշները եկան աշխարհի ապավենի դուռը և խնդրարկու եղան այն մասին, որ հին ժամանակներից ի վեր մինչև օրս երբեք այնպիսի օրենք չի եղել, որ Ուչքիլիսայի (Էջմիածին) կրոնավորներից ու սևագլուխներից խարաջ ու ջիզյա պահանջեն։ [Այս մասին] նրանք նախկին թագավորներից հրովարտակներ ունեն իրենց ձեռքին։

Անհրաժեշտ է, որ նույն կարգով որոշված ու հաստատված ճանաչելով՝ այդտեղի կրոնավորներին ու սևագլուխներին անհանգստություն չպատճառեն, նրանցից ոչինչ չպահանջեն և նախկին կարգը անտես չառնեն, որովհետև հիշյալ կրոնավորները Ուչքիլիսայի (Էջմիածին) կրոնավորների [կարգին] են պատկանում։

Թող այսպես վարվեն, հրամանից չշեղվեն և հավատան [սույն] բարձրագույն և սրբազան հրովարտակին։

Գրվեց 880 թվականի ջումադի երկրորդ ամսի 6-ին (1475 թ. հոկտեմբեր 8)։

Ուզուն-Հասանի կնիքը, հետևյալ մակագրությամբ՝

Հասան՝ որդի Ալիի՝ որդի Օսմանի։

Գրանցվեց մեծ ամիր Օսման բեկի մատյանում...*

Արքունի դիվան ծառա Ալ-Ռաշիդ (՞)։

Մյուս էջում կան նույն չափսի վեց կնիքներ։ Դրանցից երկուսը անընթեռնելի են, մյուս չորս կնիքներից առաջինի վրա կարդացվում է «Մուսա Մուհամմադ» անունը և 878 թ. (1473—1474), երկրորդի վրա կարդացվում է «Օմար» անունը, երրորդի վրա «Իբրահիմ», իսկ չորրորդի վրա գրված է «Նվաստագույն ծառա Շեյխ-Իբրահիմ»։ Կնիքներից երեքի մոտ կան վավերագրի ռեգիստրացիա-

* Մեկ բառ անվերծանելի։

433—4

յին վերաբերող մակագրությունները։ Հակառակ էջի վերևի ձախ անկյունում նորից հիշված է Օսման բեկի անունը։ Կան նաև «տեղեկացվեց» և «գրվեց» երկու հակիրճ մակագրություններ, որոնցից վերջինի տակ նորից հիշված է 880 թվականը։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 6

Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի 1487 թ. հրովարտակը տրված Գանձասարի Շմավոն կաթողիկոսին, որով հաստատում է վերջինիս կաթողիկոսական իրավունքները և նրան ենթակա հայ հոգևորականությանը ազատում զանազան հարկերից

Թղթապանակ 2ա, վավերագիր № 8, պատճեն,
մեծ. 141×32 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Իշխանությունն աստծունն է։

Հաղթական Յաղուբ բահադուր։ *Մեր խոսքը։*

Կնիք, որի կենտրոնում գրված է՝ *Հասանի որդի Յաղուբ 892*
Շուրջը՝ *Ով աստծո մարդու շահերը պաշտպանի,*
Աստված նրան ամեն դեպքում վտանգից կպաշտպանի, 892։

Ամբողջ Ադրբեյջանի ամիրները, հաքիմները, դարուղա-
ները, *տոհմիկները* (ուլուս), *բարձրաստիճան մարդիկ, ադմլա-*
կանները, երևելիները, մելիքները, քյադխուդաները *ու* արբաբները
և Ալվան[ք]ի վիլայեթի *բոլոր դիվանական գործերի* մութասադ-
դիները *և արքունի գործերի* մուբաշիրները *թող իմանան, որ*
օրերս հայ կրոնավոր Շմավոն կաթողիկոսը և Մարտիրոս արե-
գյան, որոնք հայ կրոնավոր Մատթեոս կաթողիկոսի եղբոր որ-
դիներն են, եկան աշխարհի ապավենի դուռը և ցույց տվին
Մատթեոս կաթողիկոսին շնորհված երջանկահիշատակ հանգուց-
յալ արքա Ջհանշահ միրզայի հրովարտակը։

Ինչպես ասվեց, նրանք եկան աշխարհի ապավենի դուռը և հիշյալ հրովարտակը ներկայացրին նորին մեծությանը՝ հետևյալ բովանդակությամբ։

«Վերոհիշյալ [Մատթեոս կաթողիկոսը] ցույց տվեց երջանկահիշատակ արքա Սուլթան Ուվեյս բահադուրի *հրամանագիրը այն մասին, որ «սկսած հին ժամանակներից և համաձայն Սաթաղավորի գրության, Ալվանքի բոլոր վայրերի առաջնորդությունն ու ղեկավարությունը պատկանում է Մատթեոս կաթողիկոսին։ Անհրաժեշտ է, որ առաջվա նման նրան ճանաչեն որպես այդ* վիլայեթի *հայերի առաջնորդն ու ղեկավարը, նրա ձեռքը այս գործում ուժեղ և իրավազոր համարեն, նրան [պատկանող] վայրերում չիջևանեն, նրանց չորքոտանիները ուլաղ չվերցնեն, նրանից և նրան ենթարկվող հոգևորականներից* ջիզյա *չպահանջեն։ Ալվանքի, Գանձասարի հայերը թող նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու ղեկավարը։*

[Վերոգրյալ անձինք] նրան ենթարկվող հոգևորականների նկատմամբ հանցանք չգործեն, նրանցից ոչինչ չպահանջեն և ոչ մի ցանկություն ու ակնկալություն չունենան։ Իսկ եթե նա նրանցից որևէ բան պահանջի, անհրաժեշտ համարեն աղնվաբար օգնել նրան, և այնպես անեն, որ նա և նրան ենթակա հոգևորականներն ու միաբանները կարողանան ազատորեն իրենց գործերով ու խնդիրներով զբաղվել»։

[Այս հրամանագիրը] ցույց տվեց և որոշվեց, որ ինչպես անցյալում ըստ նախկին թագավորների հրամանագրերի որոշված և ընդունված է եղել, նույն կարգով ընդունված համարեն և ընթացիկ օրենքների ու վաղեմի կանոնների մեջ փոփոխություններ թույլ չտան։ Նրա ձեռքը այս գործում ուժեղ և իրավազոր համարեն և նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու ղեկավարը»։

[Շմավոն կաթողիկոսն ու Մարտիրոս արեգյան] այս խնդրի մասին իրենց անունով մեր արքայական հրովարտակը խնդրեցին, ներկայացնելով [նաև] կրոնի իմամների ֆաթվան *այն մասին, որ «եթե ժամանակի* իմամը *կուսակրոն վանականներին* ջիզյայից *ազատի (մուաֆ և* մուսալլամ *դարձնի), դա* շարիաթով *թույլատրելի է»։ Դրա համար էլ այս հպատակության արժանի և անմատչելի արքայական հրամանագիրը մեր մայր ցամաքում հրապարակվեց, որպեսզի, եթե գրության սկզբում շարադրվածները բարեպաշտների օգտին են խոսում, [ապա թող դրանք] կուսակրոն վանականներ Շմավոն կաթողիկոսի և Մարտիրոս արեգյայի անուններով մեր արքայական ստորագրության արժանացած և կցված համարվեն։ Ինչպես մինչ այժմ այդ տեղի հայերի առաջնորդությունը ընդունված է եղել, այդպես էլ հաստատված համարեն։ Անցուդարձ անողները, հաղթական զինվորները,* մուբաշիրները *և ուրիշները ապօրինի կերպով [նրանց մոտ] չիջևանեն,* ալաֆե *և* ուլուֆե *չպահանջեն, [սույն] հրամանագրին հակառակ երբեք ստնձգություն չանեն և* շիգա-

րով ու բիզարով անհանգստություն չպատճառեն։ Դարուղաները ու քյաղխուդաները *այս կարգով հաստատված ճանաչեն, հրամանից չշեղվեն և ամեն տարի նոր հրովարտակ չպահանջեն։ Եվ երբ [սույն հրովարտակը] բարձրագույն և սրբազան կնիքով զարդարվի ու պայծառափայլվի, հավատալի ու պարզորոշ դառնա, հավատան նրան։*

Ավարտվեց հաջողությամբ։

Գրվեց 892 թվականի ջումադի առաջին ամսի 4-ին (1487 թ. ապրիլ 24), Թագավորանիստ Թավրիզ քաղաքում։

Մյուս էջում անճաշող կերպով արտանկարված են գրագրերի կողմից կատարված նշումները, որոնք վերաբերում են հրովարտակի գրանցմանը դիվանական մատյաններում. կան այդպիսի 4 անվերծանելի մակագրություններ և մեկ կլոր կնիքի պատկեր, որի վրա կարդացվում է *«Հաղթական Յաղուբ բահադուր»* անունը, կից կատարված է հետևյալ մակագրությունը՝ *«Կնիքի իսկականը այս էր, որ գրված է»։*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

Աղ-Կոյունլու Ռուստամ փադիշահի 1493 թ. հրովարտակը տրված էջմիածնի Սարգիս կաթողիկոսին, որով կարգադրում է նեղություն չտալ Մակվի Թադեոս առաքյալի վանքի վանահայր Զաքարիա վարդապետին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 14, բնագիր,
մեծ. 22,5×17,5 սմ, գիր՝ շիքասթե

Իշխանությունն աստծունն է։

Հաղթական Ռուստամ բահադուր։ *Մեր խոսքը։*

Ուչքիլիսայի Սարգիսը թող իմանա, որ Մակվի Ղարաքիլիսայի (Թադեոս առաքյալի վանք) կրոնավոր (վանահայր) Զաքարիան ապացուցել է, որ նա (Սարգիսը) նրան անտեղի և անիրավացի կերպով նեղություն է պատճառում և նրա նկատմամբ ոտնձգություններ է անում, [ուստի] անհրաժեշտ է, որ նրա հետ վերաբերվի ըստ նախկին կարգի և անտեղի ու հակառակ արքայական հրամանագրի նրա հանդեպ ոտնձգություններ չանի և այս հարցում չթերանա և այդ իր պարտականությունը համարի։

Ավարտվեց հաջողությամբ։

Ռուստամ փադիշահի կնիքը, հետևյալ մակագրությամբ՝
Ռուստամ՝ որդի Մաքսուդի, որդի Հասանի։

Գրվեց 898 թվականի զիլկաադա ամսի 8-ին (1493 թ. օգոստոս 21), Բեղոստանի (°) կողմերում։

Մյուս էջում մակագրված է՝ *Արձանագրվեց դիվանական մատյանում։*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1503 թ. հրովարտակը Սիմեոն եպիսկոպոսի անվամբ Տաթևի վանքի նախկին իրավունքները Գյոգչայի վիլայեթի նկատմամբ վերահաստատելու, վանքապատկան հողերի վերստին հաստատման և այդ հողերն ու անդի հայ հոգևորականության բազմաթիվ պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին .

Թղթապանակ 2ա, վավերագիր № 13ա, բնագիր,
մեծ. 43×24 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Նա է։
Հանուն ողորմած և գթասատ աստծու։

Իշխանությունն աստծունն է։

Հաղթական Շահ Իսմայիլ բահադուր։ *Մեր խոսքը։*

Նախչևանի, Գյոգչայի, Առանի և Արարատի ամիրթումանք, ամիրները, հաքիմները, դարուղաները, ամիլները, *[այդ գործերով] զբաղվող* մութասադդիները, *Օրդուի* օլքայի մելիքներն *ու* մուկադդամները *թող իմանան, որ վերջերս Սիմեոն վարդապետը եկավ աշխարհի ապավենի դուռը և արքունի սեմի ոտքի հողը համբուրելուց հետո խնդրարկու եղավ այն մասին, որ Գյոգչայի* վիլայեթի *հայ հոգևորականության և միաբանների առաջնորդությունը հին ժամանակներից ի վեր նրան է պատկանում։ Հետևաբար անհրաժեշտ է, որ հին կարգով և վաղեմի օրենքով նրան ճանաչեն որպես հիշյալ* վիլայեթի *հայ հոգևորականության և վանականների վարդապետն ու առաջնորդը և հնազանդվեն ու ծառայություն մատուցեն նրան։ Եվ այն տուրքը (*ռասմ*), որ հին ժամանակներից տվել են Տաթևի վանքին, շարունակեն հատուցել։*

[Քանի որ] Տաթևի և Վաղադի վանքերը նրա պաշտոնատեղին ու բնակավայրն են եղել և վանքի վակֆերին *պատկանող հո-*

գերը մշակվել են [նրա կողմից], նույն կարգով հաստատված ճանաչեն և անհանգստություն չպատճառեն: Իխրաջաթի, ավարիզաթի, շիլթաղաթի *և անթույլատրելի պահանջմունքների, ինչպես՝* ալաֆեի *և* ուլուֆեի, կոնալղայի, ուլաղի *և* ուլամի, բիգարի *և* շիգարի, դասթանդազի, սավարիի, փիշքաշի, սալամիի, ամրոցի իխրաջաթի, էյդիի, նովրուզիի, *գարու, ոչխարի և այլ դիվանական արգելված պարտավորությունների պատրվակով հիշյալ [վարդապետին] և նրա մերձավորներին անհանգստություն չպատճառեն և նրանց ցանքսերին, վարելահողերին և բերքին [չդիպչեն]: Ինչ կարգով որ մինչև այժմ վարվել են նրանց հետ, նույն կարգով շարունակեն վարվել և հարմար չհամարեն նրանցից* մուճդիսի *տուրք գանձել: Տեղի* դարուղաները *ու* ամիլները *նրանց վերաբերող գործերին չմիջամտեն և նրանց [հասանելիք] տուրքերը չվերցնեն և պարտադիր համարեն հոգատար լինել [նրանց հանդեպ]: Արքայական հրամանի տրամադրությունը գանց չառնեն, ամեն տարի նոր հրովարտակ չպահանջեն և հավատան [սույն] բարձրագույն արքայական հրովարտակին:*

Ավարտվեց հաջողությամբ:

Շահ Իսմայիլի կնիքը

Գրվեց 908 թվականի շաաբան ամսի 12-ին (1503 թ. փետրվար 10):

ՎԱՎԵՐԱԳԻՐ 9

Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1505 թ. հրովարտակը Հավուց-թառի Ամենափրկչի վանքն ու վանքի հոգևորականությանը մի շարք պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 6, բնագիր, մեծ. 40×22 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Իշխանությունն աստծունն է:

Հաղթական Իսմայիլ բահադուր: *Մեր խոսքը՝*

Շահ Իսմայիլ Ա-ի կնիքը:

Օրերս որոշվեց, որպեսզի երբեք ոչ մի արարած, [լինի դա] հաղթական զինվորներից և կամ ուրիշներից, Կըզըլ-վանքի

(Ամենափրկչի) [նկատմամբ] ոտնձգություն չկատարի: Զարմանահրաշ Գեղարդի առաջնորդ և իմաստունների պարծանք Դանիելի ...ին չմոտենան, չմիջամտեն և ոտնձգություն չանեն:* Իխրաջաթի, ավարիզաթի, [շիլթաղաթի], ...-ի *իրավունքի,* դասթանդազի, սավարիի, ազդարի, փիշքաշի, սալամիի, էյդիի, նովրուզիի, նամորդարի, ջավալիդիի, չերիքի ուլու, թաֆավութ-ե չիզյայի, թաֆավութ-ե...-ի *և այլ դիվանական արգելված պարտավորությունների [պատրվակով] նրանց չմոտենան: Զուխուր-Սաադի* հաքիմները, դարուղաները *և* քալանթարները *այսպես հաստատված ճանաչեն և [սույն] հրամանից չխուսափեն:*

Ավարտվեց հաջողությամբ:

Գրվեց 911 թվականի ռաբի՛ առաջին ամսի 25-ին (1505 թ. օգոստոս 26):

Մյուս էջում կան հրովարտակի գրանցման մասին կատարված հետևյալ մակագրությունները.

Դիվանի *մեծարգո պաշտոնյաների գրության համաձայն:*

Տեղի ունեցավ: Ստորագրություն:

Գրանցվեց:

Տեղեկացա:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 10

Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1506 թ. հրովարտակը Սիմեոն եպիսկոպոսի անվամբ Տաթևի վանքի նախկին իրավունքները Գյոգչայի վիլայեթի նկատմամբ վերահաստատելու, վանքապատկան հողերի վերստին հաստատման և այդ հողերն ու տեղի հայ հոգևորականության բազմաթիվ պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին

Թղթապանակ 2ա, վավերագիր № 13բ, պատճեն, մեծ. 59×20 սմ, գիր՝ շիքասթե

Հանուն ողորմած և գթառատ աստծու:

Ո՜վ Ալի:

Ընտրյալ հաղթական, Իսմայիլ բահադուր: *Մեր խոսքը՝*

* *Վավերագրի ձախ եզրի քայքայված լինելու հետևանքով անհետացած բառերը նշված են բազմակետերով:*

Շահ Իսմայիլի կնիքի տեղը.

Առանի, Արարատի, Ղափանաթի, Օրոտի, Սիսաջանի, Գուշթասիֆի, Ղարադաղի (Ղարաբաղ), Նախչևանի ճաքիմները, դարուղաները և ամիլները թող իմանան, որ վերջերս Սիմեոն վարդապետը եկավ երկնային դուռը և զեկուցեց այն մասին, որ Գյոգչայի վիլայեթի հայ հոգևորականների ու վանականների առաջնորդությունը հին ժամանակներից նրան է պատկանում։ Հետևաբար կարգադրեցինք, որ նախկին կարգով և վաղեմի օրենքով նրան ճանաչեն որպես հիշյալ վիլայեթի հայ հոգևորականության և վանականների առաջնորդն ու վարդապետը և հնազանդվեն ու ծառայություն մատուցեն նրան և այն տուրքերը, որ հին ժամանակներից ի վեր տվել են Տաթևի վանքին՝ շարունակեն տալ։

[Քանի որ] Տաթևի և Վաղադիի վանքերը նրա պաշտոնատեղին ու բնակավայրն են եղել և վանքի վակֆերին պատկանող հողերը մշակվել են [նրա կողմից], նույն կարգով հաստատված համարեն և անհանգստություն չպատճառեն։ Իխրաջաթի, ավարիզաթի, շիլթաղաթի և անթույլատրելի պահանջմունքների, ինչպես ալաֆեի և ուլուֆեի, կոնալղայի, բիգարի, դասբանդազի, փիշքաշի, սալամիի, ամրոցի իխրաջաթի, էյդիի, նովրուզիի, գարու, ոչխարի և այլ արգելված պարտավորությունների պատրվակով վերոհիշյալ [վարդապետին] և նրա մերձավորներին անհանգստություն չպատճառեն և նրանց ցանքսերին, վարելահողերին ու բերքին [չդիպչեն]։ Ինչ կարգով որ հին ժամանակներից մինչև օրս մալի և ղալլեի հարցում նրանց հետ վարվել են, նույն կարգով շարունակեն վարվել։ Տեղի դարուղաներն ու ամիլները նրանց գործերում չմիջամտեն և նրանց [հասանելիք] տուրքերը նրանց թողնեն և պարտադիր համարեն հոգատար լինել [նրանց հանդեպ]։ Նախկինում հրապարակված արքայական հրամանագրի տրամադրությունը զանց չառնեն և ամեն տարի նոր հրովարտակ չպահանջեն։

Ավարտվեց հաջողությամբ։

Գրվեց 912 թվականի ռաջաբ ամսի 6-ին (1506 թ. նոյեմբեր 22)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 11

Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի 1510 թ. հրովարտակը, որով հաստատում է Տաթևի վանքին պատկանող գյուղերի ցուցակը

Թղթապանակ 2ա, վավերագիր № 12ա, բնագիր, մեծ. 42×28 սմ, գիր՝ շիքասթե

Նա է աստված։

Հանուն ողորմած և գթասատ աստծու

Ո՜վ Ալի։

Իշխանությունն աստծունն է։

Հաղթական Իսմայիլ բահադուր։ *Մեր խոսքը։*

Շահ Իսմայիլ Ա-ի կնիքը։

Ներկայումս պարզորոշ և հայտնի դարձավ, որ Թուման-ե Նախչևանի Սիսաջանում և Ղափանաթի Օրոտում գտնվող կից հիշատակված վայրերը, որոնք Անգեղակոթցի Շմավոն վարդապետի ժառանգական մուլքերն [են եղել], վակֆ են արվել Ղափանաթի Տաթևի վանքին, [այժմ] գտնվում են նրա տնօրինության տակ և Դիվանին չեն վերաբերում։ Հետևաբար որոշվեց, որ հիշյալ վայրերը ճանաչվեն որպես վերոհիշյալ տաճարի հավիտենական վակֆը, և ով որ այնտեղ վար ու ցանք անի, հին կարգով ընդունված բահրաչեն հատուցի նրան (վանքին) և որևէ պատրվակով չթերանա։ Ոչ մի արարած վերոհիշյալ վակֆերին չմոտենա և չմիջամտի. և թող այս ընդունվի որպես խիստ կարգադրություն։

Գրվեց 915 թվականի շավվալ ամսին (1510 թ. հունվար 12—փետրվար 10)։

Մյուս էջում բերված է վանքապատկան գյուղերի հետևյալ ցուցակը

№ №	Գյուղ	Նահիա	Վիլայեթ
1	Բնունիս	Սիսաջան	[Թուման-ե Նախչևան]
2	Թաս	»	»
3	Ղարաքիլիսա	»	»
4	Դաստաջերդ և Գյոլյազի	»	»
5	Սվարի	Օրոտ	Ղափանաթ
6	Աղաքյանդի	»	»
7	Տանձատափ	»	»
8	Տաշու	»	»

№ №	Գյուղ	Նահիա	Վիլայեթ
9	Տաթև	Օրոտ	Ղափանթ
10	Խոտանան	»	»
11	[Հ]ալիձոր	»	»
12	Շնհեր	»	»
13	Խոտ	»	»
14	Բորզի	»	»
15	Կից	Գեղի	»

ՎԱՎԵՐԱԳԻՐ 12

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1544 թ. հրովարտակը Ագուլիսի Թովմա առաքյալի վանքին պատկանող մուլքերից գանձվող բահրաչեն վանքի վանահորը հանձնելու մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 10, բնագիր, մեծ. 25×15 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ

Շահ Թահմազ Ա-ի կնիքը

Արքայական հրաման եղավ, որ Թուման-ե Նախչևանի Ազադ-Ջիրանի նահիայի *Շալութ կոչվող վայրում (գյուղում) գտնվող և օրինական կերպով Ագուլիսի վանքին պատկանող* մուլքերի մութասադդիները *վերոհիշյալ* մուլքերի բահրաչեն, *եթե [այն]* Դիվանին *չի վերաբերում, տեղի վաղեմի կարգի համաձայն և ընդունված ձևով՝ առանց թերանալու հանձնեն հիշյալ վանքի վանահորը։ Այսուհետև հակառակ ընդունված կարգի՝ հիշյալ* մուլքերի *[գործերին] չմիջամտեն և թողնեն վերոհիշյալ վանահոր տրամադրության տակ, որպեսզի [վերջինս] մշակի և* Դիվանի մալը *հաստատուն դարձնի։*

Հիշյալ մահալի թիուլդարները, մելիքները *և* քյադխուդաները *թող այս ի նկատի ունենան և թույլ չտան որևէ մեկին խոտորելու վերոգրյալի բովանդակությանը հնազանդվելուց և այն ինչ հրամայվեց անտես չանեն, և ընդունելով այս որպես խիստ կարգադրություն՝ ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն։*

Այս գործին օգնություն ցույց տալու պարտավորությունը դրվում է Ագուլիսի դարուղայի *վրա։*

Գրվեց 951 թվականի ջումադի առաջին ամսի վերջին (1544 թ. օգոստոս 19)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 13

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1548 դեկտ.—1549 հունվ. հրովարտակը՝ տրված Միքայել կաթողիկոսին, որով վերահաստատվում է էջմիածնի իշխանությունը նրա ճախկին թեմերի վրա

Թղթապանակ 1ա, վավերագիր № 12, բնագիր, մեծ. 33, 20 սմ, գիր՝ նասթալիղ

Իշխանությունն աստծունն է։

Շահ Թահմազ Ա-ի կնիքը

Արքայական հրաման եղավ։ Որովհետև Չուխուր-Սաադի Ուչքիլիսայի կաթողիկոսությունը պատկանում է Միքայել կաթողիկոսին և այդ մասին նա հրամանագրեր ու վավերագրեր ունի իր ձեռքում, [ուստի] թող նույն կարգով հաստատված ճանաչվի և հիշյալ օլքայի, *ինչպես նաև Թուման-ե Նախչևանի Գյոգչա-Դանգիզի, Ղափանաթի, Խոյի, Սալմասի, Գանջայի, Բարդայի, Ախստաբադի, Ջաքամի և Լոռու հայ կրոնավորներն ու քահանաները ինչ կարգով որ վարվել են նախկին կաթողիկոսների հետ՝ նրա հետ էլ նույն ձևով վարվեն և վաղեմի կարգերի ու հին օրենքների սահմաններից դուրս չգան, այլ անհրաժեշտ համարեն հարգել և պահպանել [գրանք], նրա ձեռքում գտնվող հրամանագրերի ու վավերագրերի իմաստից չշեղվեն և թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն։*

Գրվեց 955 թվականի զիկաադա ամսին (1548 թ. դեկտեմբեր 2—1549 թ. հունվար 1)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 14

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1555 թ. հրովարտակը Ագուլիսի Թովմա առաքյալի վանքի վանահորը հարկերից ազատելու և վանքապատկան հողերի նկատմամբ նրա կալվածատիրական իրավունքները հաստատելու մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 11, պատճեն, մեծ. 29×14 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ

Իշխանությունն աստծունն է։

Դրախտաբնակ արքայի սրբազան կնիքի տեղը։

Արքայական հրաման եղավ, որպեսզի Օրդուբադի, Ազադ-Ջիրանի և այլ [վայրերի] դարուղաները, մելիքներն *ու* քյադխու-

դաները, հակառակ [սույն] հրամանագրի և ապօրինի կերպով երբեք Ագուլիսի վանքի վանահորից ոչ մի դինար և ոչ մեկ ման բերք չպահանջեն։ Ով որ հիշյալ վանքին [պատկանող] հողերում, որտեղ էլ որ [այդ հողերը] գտնվելիս լինեն, վարուցանք անի, իր բահրաչեն, ըստ կարգի և սովորույթի, հանձնի հիշյալ վանահորը, [իսկ] ինչ որ [նախորդ] տարիներում նրանից ապօրինի կերպով վերցրել են, ապացուցվելուց հետո ետ վերադարձնեն և չհակառակվեն։ Վերոհիշյալ մահալի վանականները հիշյալ վանահորը հասանելիք տուրքերը հասցնեն նրան։

Գրվեց 962 թվականի ջումադի երկրորդ ամսին (1555 թ. ապրիլ 23—մայիս 22)։

Մյուս էջում կա վկայություն պատճենի ճշտության մասին, ու միաժամանակ նշված է նաև, որ բնագրի հակառակ էջում եղել են հաստատման երեք կնիքներ և երկու ստորագրություններ։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 15

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1557 թ. հրովարտակը Տաթևի վանքապատկան կալվածների վերահաստատման և վանքի կալվածատիրական իրավունքների մասին

Թղթապանակ 2ա, վավերագիր № 16ա, պատճեն,
մեծ. 38×19 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիք

Նա է։

Ջամ[շիդ]ի փառքն ունեցող դրախտային՝
և երկնաբնակ արքայի կնիքի տեղը։

Արքայական հրաման եղավ։

Որովհետև դաֆթարից *հաստատեցին, որ Թուման-ե Նախչևանի Միսաջանի* օլքայի *և Ղափանաթի Օրոտ* [նահիայի] *կից հիշատակված վայրերը եղել են Ղափանաթի Տաթևի վանքի Անգեղակոթցի Շմավոն վարդապետի ժառանգական մուլքը, գտնվել են նրա տնօրինության տակ և* Դիվանին *չեն վերաբերել, ուստի թող այդ գյուղերի նրա տնօրինության տակ գտնվելը համարվի հնարավոր, և ոչ մի մարդ արարած հակառակ [սույն] հրամանի ապօրինի կերպով [այդ գյուղերի գործերին] չմիջամտի։ Ով որ այդ վայրերում վարուցանք արած լինի և անի, իր* բահրաչեի *պարտավորությունը կատարի և հասցնի նրան (վանահորը) և ոչ մի պատրվակով ու-*

պատճառաբանությամբ չթերանա։ Թող նորին սրբություն Ջամ[շիդ]ի փառքն ունեցող, դրախտային և երկնաբնակ արքայի այս հարցի վերաբերյալ հրապարակված հրովարտակի իմաստից չշեղվեն և այս հարցում չթերանան։

Գրվեց 964 թվականի ռաբի՝ առաջին ամսին (1557 թ. հունվար 2—փետրվար 1)։

Մյուս էջում տրված է վանքապատկան գյուղերի հետևյալ ցուցակը.

№ №	Գյուղ	Նահիա
1	Բնունիս	Միսաջան
2	Թաս	»
3	Ղարաքիլիսա	»
4	Դաստաջերդ և Գյոլյաղի	»
5	Սվարի	Օրոտ
6	Աղաքյանդի	»
7	Տանձատափ	»
8	Տաշու	»
9	Տաթև	»
10	Խոտանան	»
11	Հալիձոր	»
12	Շնհեր	»
13	Խոտ	»
14	Բորդի	»
15	Կից	Գեղի

Հաջորդում են հետևյալ մակագրությունները.

Համեմատված է սրբագնագույն, բարձրագույն և հպատակության արժանի իսկականի հետ. կնիք։

Գրանցվեց։

Մուհրասիբի *կնիքը։*

ՎԱՎԵՐԱԳԻՐ 16

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1562 թ. հրովարտակը Մակվի Թադեոս Առաքյալի վանքի հանդի սահմանների ու ոռոգման կարգի և Կարիզ, Մահլազան և Կորուղ գյուղերից գանձվող եկեղեցական տուրքերի մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 13, պատճեն,
մեծ. 30,5×20 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիք

Իշխանությունն աստծունն է։

Իմ թագավոր հայրը, —թող աստված լուսավորի նրա հոգին։

Երկրի թագավորի ծառա՝ Թահմասպի կնիքի տեղը:

Արքայական հրաման եղավ այն մասին, որ ինչպես նորին սրբություն Ջամ[շիդ]ի փառք և Սողոմոնի գիրք ունեցող արքայի հրովարտակի բովանդակությունից, [և այլ] փաստաթղթերից և շարիաթական *կալվածագրերից* (ղաբալաք) *պարզվեց, որ Ղարաքիլիսայի (Մակվի Թադեոս առաքյալի վանքի) հանդը, որի սահմաններն են՝ Անդուրակի լեռնանցքը, Գըրխբուլաղը և Հենաքի գերեզման[ոց]ը, որպես* մուլք *պատկանում է տեղի* ռայաթներին, *և հիշյալ հանդի ոռոգման համար* (ճակկաբե) *Արքայուն գյուղի գետի վեց բաժնից երեք բաժինն է հատկացված, ուստի թող Արքայուն գյուղի* ռայաթները *նույն կարգով հաստատված ճանաչեն և ոչ մի դեպքում առանց իրավունքի և ապօրինի կերպով հիշյալ հանդի հողերի և* մուլքերի *[գործերին] չմիջամտեն, նրանց ջրի բաժնին չմոտենան և նախկին կարգից ու օրենքից չշեղվեն:*

Հաջի-Կասըմ Միլաչին թող ըստ վերոգրյալի հաստատված ճանաչի և այս հպատակության արժանի հրամանագրից չշեղվի: Եվ որովհետև հնուց ի վեր Կարիզ, Մահլազան և Կորուղ գյուղերի չըբաղըղը *Ղարաքիլիսային է պատկանել, Բուրալու-Շամլըղի* քյադխուդաներն *ու* ռայաթները *ոչ մի դեպքում այդ [հարցին] չմիջամտեն և հին օրենքից ու նախկին կարգից չշեղվեն: Ամիր Մակսուդ* բեկ *Ունուսլուն թող օգնի, որևէ մեկին թույլ չտա հակառակվել և ամեն տարի նոր հրամանագիր չպահանջի:*

Գրվեց շան տարվա 969 թվականի ռաջաբ ամսին (1562 թ. մարտ 7—ապրիլ 6):

Մյուս էջում արտանկարված է կէրեմադ-ուդ-դովլեի թուղրայի պատճենը: Կան նաև նշումներ թիկնականի վրա եղած հաստատման մակագրությունների մասին.

Գրանցվեց. կնիքի տեղը:

[Ընդունված] կարգերը գրանցվեցին. կնիքի տեղը:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 17

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1562 թ. հրովարտակը ի հաստատումն կից հրապարակված Դիվան-ալ-սադարաթի վճռի, որով վերահաստատվում է Տաթևի վանքին պատկանող գյուղերի ցուցակը

Թղթապանակ 2ա, վավերագիր № 19, պատճեն,
մեծ. 42×20,5 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ

Բարձրագույն, սրբազնագույն և վեհագույն վեհապետ՝
Շահ Թահմասպի սրբազան կնիքի տեղը:

Արքայական հրաման եղավ, որպեսզի վարվեն ըստ կից հրապարակված բարձրագույն Դիվան-ալ-սադարաթի *հնազանդության արժանի* միսալի *և նրա բովանդակությունից ու իմաստից չշեղվեն, սրբազան* Շար՚ի *որոշումը իրենց ուղեցույցը համարեն և խուսափեն հակառակելուց:*

Գրվեց շան տարվա 970 թվականի ռաբի՝ առաջին ամսին (1562 թ. հոկտեմբեր 29—նոյեմբեր 28):

Դիվան-ալ-սադարաթի վճիռը:

Նա է:

Նա հոգատար է: Փառք և պատիվ նրան:

Ընտրյալ Միր Բահա-էդ-դին Մուհամմադ:

Ներկայումս ամենալուսավոր Շար՚ի *[կողմից կատարված] քննության և ստուգման շնորհիվ, [ինչպես նաև]* միսալների, սիջիլների, վակֆնամեների *և բարեպաշտ մարդկանց վկայությամբ պարզվեց և հայտնի դարձավ, որ ներքոհիշյալ գյուղերի* մուլքերը *Ղափանի Տաթևի վանքի* վակֆն *են և ոչ ոքի չեն վերաբերում: Ըստ ամենալուսավոր* Շար՚ի *որոշվեց, որ ոչ ոք հիշյալ տաճարի* վակֆերին *վերաբերող կից հիշատակված գյուղերի [գործերին] չմիջամտի և ոչ մի դեպքում հիշյալ վայրերին չմոտենա: Թողնել, որպեսզի դրանց եկամուտներն ու հասույթը* (մաղախիլ և հասիլ) *ընդունված կարգով ծախսվի վակֆատիրոջ (վանքի) վրա: Այս հարցում օրինական* (շար՚ի) *օգնություն ցույց տալու պարտավորությունը դրվում է յուրաքանչյուր վայրի* հաքիմների *ու* Շար՚ի *անդամների* (ահալի-ե շար՚) *վրա, և թող ամեն տարի նոր փաստաթուղթ չպահանջվի:*

Գրվեց 970 թվականի ռաբի՝ առաջին ամսին (1562 թ. հոկտեմբեր 29—նոյեմբեր 28)։

(Արքայի սպասավոր, մուսուլմանների մեծանուն առաջնորդ)* հանգուցյալ, երջանկահիշատակ Միր Բակա-էդ-դին Մուհամմադ-Սադրի կնիքի տեղը։

Լուսանցում՝

Բարձրագույն և հպատակության արժանի խնդրանքի հետ համեմատված է։ Կնիք

Ընթերցվեց։

Համեմատվեց։ Քառանկյունի կնիքի վրա «Մուհամմադ-Ջաֆար»
Համեմատվեց։ Կնիք

Կնիք և ստորագրություն։

Վանքապատկան գյուղերի ցուցակը, որը զետեղված է 3 և 4-րդ տողերի արանքում։

№ №	Գյուղ	Նահիա	Վիլայեթ
1	Բնունիս և Թաս	Սիսաջան	Թուման-ե Նախչևան
2	Ղարաքիլիսա	»	»
3	Դաստաջերդ և Գյոլյազի	»	»
4	Սվարի	Օրոտ	Ղափանաթ
5	Աղաքյանդի	»	»
6	Տաշու-Մալղաշ	»	»
7	Տաթև	»	»
8	Տանձատափ	»	»
9	Խոտանան	»	»
10	Հալիձոր	»	»
11	Շնհեր	»	»
12	Խոտ	»	»
13	Բորդի	»	»
14	Կից	»	»

* Փակագծի մեջ առնված խոսքերը բնագրում ջնջված են։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 18

Սեֆյան Շահ Թահմազ Ա-ի 1570 թ. հրովարտակը տրված Գանձասարի Գրիգոր կաթողիկոսին, որով վերստին հաստատում է նրա իրավունքները և կարգադրում տեղի պետական պաշտոնեությանը զանազան հարկերով ու պարտիքներով չնեղել նրան

Թղթապանակ 2ա, վավերագիր № 20ա, պատճեն, մեծ. 100×33 սմ, գիր՝ շիքասթե-դիվանի

Ո՜վ Մուհամմադ։ Ո՜վ Ալի։

Իշխանությունն [աստծունն է]։
Իմ թագավոր հայրը,—որին թող աստված բնակեցնի եդեմական դրախտում։

Հաղթական Թահմասպ։ Մեր խոսքը։

Կնիք, որի վերին մասում՝ *Աստված, Մուհամմադ, Ալի, 977։*
կենտրոնում՝ *Երկրի թագավորի ծառա՝ Թահմասպ, 977,*
շուրջը՝ *Եթե քո բարեխոսությունն ու ողորմածությունը ուղեկից լինեն,*
Տիեզերքը պետք է իր ուսերին զցի հպատակության քղամիդ։

Որովհետև համաձայն նորին սրբություն, Ջամ[շիդ]ի փառքն ունեցող, դրախտաբնակ արքայի [կողմից հրապարակված] վճռի և հրովարտակի Խաչենի և Բարդայի, Աղվանքի բոլոր մահալների *ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնված էր Արիստակես կաթողիկոսին և որովհետև վերջինս վախճանվել էր, [այդ պաշտոնը] մենք հանձնել էինք նրա եղբոր որդուն՝ Սարգսին։ Այն բանից հետո, երբ սա ևս վախճանվեց Մեհրաբ* բեկի *որդի Գրիգոր կաթողիկոսը, որ Սարգսի եղբոր որդին էր, եկավ աշխարհի ապավենի դուռը և խնդրեց Սարգսի տեղը [տալ իրեն]։ 963 թվականի շաաբան ամսին (1555 թ. հունիս 21—հուլիս 20) վերոհիշյալ* մահալների *ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք նրան։ Դրանից հետո Ամիրի որդի Մաղաքիան եկավ աշխարհի ապավենի դուռը և վերոհիշյալ* մահալների *ու վայրերի առաջնորդության ու գլխավորության հրամանագիրը իր անունով դարձրեց։*

Ներկայումս վերոհիշյալ Գրիգորը եկավ բարձրագույն դուռը և խնդրարկու եղավ այն մասին, որ սկսած հին ժամանակներից մինչև այժմ այդ վայրերի ու մահալների *առաջնորդությունն*

ու գլխավորությունը նրա պապերին ու նախնիներին է պատկանել և ցույց տվեց նախկին թագավորների կողմից այս առթիվ հրապարակված հրամանագիրը։ Դրա համար էլ նախկին կարգով հիշյալ վայրերի ու մահալների առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք վերոհիշյալ Գրիգոր կաթողիկոսին։ Թող տեղի կրոնավորներն ու քահանաները, քյադխուդաները ու ռայաթները նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու ղեկավարը և նրա խոսքի ու խրատների սահմաններից դուրս չգան, և թող ոչ մի արարած նրա հոգևորականներին ու մերձավորներին նեղություն չպատճառի, և թույլ տվի, որպեսզի նրանք իրենց վերաբերող գործերով զբաղվեն։ Թող ընթացիկ օրենքների և վաղեմի կանոնների սահմաններից դուրս չգան։ Տեղի բարձրաստիճան հաքիմները, հարգարժան ամիրները, հաղթական զինվորները, մելիքները, ամիլները, երթևեկողներն և ուրիշները աշխատեն օգնել նրան ու գործակցել նրա հետ։ Ապօրինի իխրաջաթով, ինչպես ալաֆեի և ուլուֆեի, կոնալղայի, բիգարի, ուլաղի և ուլամի, թարհի, դասթանդազի և այլ անթույլատրելի շիլթաղաթի ու շանակիաթի միջոցով, ինչ անվան տակ էլ որ լինի, նրան անհանգստություն չպատճառեն և որևէ պահանջ կամ ակնկալություն չունենան։ Վերոհիշյալ Մաղաքիան թող այսպես որոշված ճանաչի և այսուհետև երբեք ոչ մի դեպքում այդ վայրերի ու մահալների առաջնորդության ու գլխավորության [գործերում] չմիջամտի և իրեն կաթողիկոսությունից հրաժարեցված համարի և ինչ որ ապօրինի կերպով այդ մահալից վերցրել է, ստուգելուց հետո, ետ վերադարձնի։

Թող սա համարեն խիստ կարգադրություն, և հրամայվածին չհակառակեն, թող ամենուրեք այսպես վարվեն, ամեն տարի նոր հրովարտակ ու գրություն (փարվանչե) չպահանջեն և այդ պարտադիր համարեն։ Տեղի հաքիմները, դարուղաները, թիուլդարներն ու մելիքները պարտավոր են գործակցել ու օգնել նրան և տեղի հայերից որևէ մեկին թույլ չտալ հակառակել սույն գրության բովանդակությանը։ Իսկ երբ անմատչելի, բարձրագույն և սրբազնագույն կնիքով զարդարվի ու պայծառափայլվի, հավատան նրան։

Գրվեց ձիան տարվա 977 թվականի զիլկադա ամսի 13-ին, չորեքշաբթի օրը (1570 թ. ապրիլ 19)։

Ավարտվեց։

Կնիք, հետևյալ մակագրությամբ՝ Աստված, Մուհամմադ, Ալի, 977։ Երկրի թագավորի ծառա Սուլթան Թահմասպ։

Մյուս էջում հանված են Բարձրագույն դիվանում բնագրի գրանցման մասին կատարված նշումների պատճենները, ինչպես նաև նույն կնիքի պատճենը, որը գտնվում է հրովարտակի վերջում։ Կա նաև մի այլ ձվաձև կնիքի պատճեն, հետևյալ մակագրությամբ՝ «Նվաստ ստրուկ Ֆաթհալի Մուսլու»։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 19

Սեֆյան Շահ Իսմայիլ Բ-ի օրոք 1577 թ. Բարձրագույն դիվանի տված հրովարտակը ի հաստատումն բանակատեղի դատավորների կից հրապարակված վճռի, որով կարգադրվում է հետևել, որպեսզի Չուխուր-Սաադում գտնվող 9 գյուղերի համայնքները կատարեն իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ

Թղթապանակ 1գ, վավերագիր № 875 և 876, վավերագիրը շիքասթե-նասթալիղ գրությամբ արտագրված է էջմիածնի կալվածագրերի ցուցակի մեջ

Աստված արդարադատ է.

Բարձրագույն և սրբազնագույն Դիվանի կնիքի տեղը։

Բարձրագույն և սրբազնագույն Դիվանի հրամանն այն է, որ վարվեն համաձայն կից հրապարակված հաղթական բանակի բանակատեղի դատարանի օրինակելի միասլի, նրա բովանդակությունից և իմաստից չշեղվեն, ամենալուսավոր Շար'ի որոշումը ուղեցույց համարելով, նրա սահմաններից դուրս չգան և խուսափեն սրբազան Շար'ին հակառակելուց, այդպիսիք կարժանանան արքայական նախատինքի ու հանդիմանության։ Չուխուր-Սաադի բեկլարբեկը և տեղի Շարիաթի մութասադդիները պարտավոր են օգնել և որևէ մեկի կողմից ապօրինի հակառակության տեղի չտալ։

Գրվեց մկան տարվա 984 թվականի զիլկադա ամսի 12-ին (1577 թ. հունվար 31)։

Բանակատեղի դատավորների վճիռը

Նա է բացահայտ ճշմարտությունը։

Որովհետև զեկուցվեց այն մասին, որ Չուխուր-Սաադում գտնվող հետևյալ գյուղերը՝ Մանկուս, Սուրբ Սարգիս, Ավանիկ, Կուդխա, Կոխդ, Կըզըլ-վանք և Թառնիսի, Կուտուց-վանքի և Ավանասարի հանդերը Բաբայի որդիներ Զաքարիա վարդապետի և Միր Թումանի (?), Խոջայի որդի Զիդլասի և Թունիի

որդի Մեհրաբի օրինական ժառանգական մուլքերն *են և գտնվում են նրանց ձեռքում, և այդ վայրերում* զիմմիները *վար ու ցանք են անում, ջրաղաց և ձիթհանք են կառուցել, այգիներ և պարտեզներ են մշակել և* յաթաղներ *են գցել, բայց ապօրինի կերպով հակառակելով, հրաժարվում են տեղի ընդունված սովորության համաձայն հիշյալ* մալիքներին մալիքանե *և* ուջրաթ-ուլ-մասալ *վճարել և ցանկանում են իրական* ուջրաթ-ուլ-մասալից *և* մալիքանեից *զերծել ու պակասեցնել, ուստի, այդ ի նկատի ունենալով, որոշվեց, որ վերոհիշյալ համայնքները նշված կալվածների* մալիքանեն, *որը* ուջրաթ-ուլ-մասալն *է, օրինական* (շար՛ի) *պահանջից ու անհրաժեշտությունից» հետո տեղում ընդունված կարգով հանձնեն* մալիքներին *և ոչ մի անօրինական պատրվակով ու պատճառաբանությամբ չթերանան և առանց օրինական* (շար՛իյյե) *պատճառի ոչինչ չզեղչեն կամ չպակասեցնեն։ Տեղի* Շարիաթի մութասադդիները *և* հաքիմի վաքիլները *այս հարցում պետք է օրինական օգնություն ցույց տան և որևէ մեկին թույլ չտան հակառակել լուսապայծառ* շարիաթի *տրամադրությանը։*

Գրվեց մկան տարվա 984 թվականի զիլկադա ամսի 8-ին (1577 թ. հունվար 27)։

Վավերագրի վերջում, չորս տարբեր մեծության շրջանակներով, նշված են բնագրի վրա եղած կնիքների տեղերը։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 20

Ադրբեյջանի (Թավրիզի) բեկլարբեկի 1581 թ. հրամանագիրը Վանանդի ձորում գտնվող և Ագուլիսի վանքին պատկանող հողերից պետական հարկեր գանձելու կարգի մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր № 18, բնագիր,
մեծ. 17×15 սմ, գիր՝ շիքասթե-թաալիղ

Բարձր հրամանագիր հրապարակվեց այն մասին, որ ինչպես նախկին մումայյիզների *վկայությունից և արձանագրությունից պարզվել է, Ազադ-Ջիրանի Վանանդի ձորի հողերից մի քանի հողակտորներ պատկանում են Ագուլիսի վանքին, իսկ վանքապատկան այդ հողերի* մալը *և դիվանական պարտավորությունները* (հոկուկ-ե դիվանի) *Ագուլիսի* մալուջհաթի *և* վջուհաթի *տակ ի մի է բերված* (արվար-ե-ջամ՝ *է արված), ուստի թող Վանանդի ձորում գտնվող [գյուղերի]* քյադխուդաները *և* ռայաթները *նախկին կարգով վարվեն և հիշյալ հողերի* մալի *և դիվանական պարտավորությունների* (հոկուկ-ե դիվանի) *պատճառով Ագուլիսի [վանքի] վանահոր անունով ոչ մի* իթլաղ *կամ* հավալե *չուղարկեն, թող սրանից հետո նախկին ձևով չվարվեն և, այս ընդունելով որպես խիստ կարգադրություն, [նրան ենթարկվելը] իրենց պարտականությունը համարեն։*

Գրվեց 987 թվականի ջումադի երկրորդ ամսին (1581 թ. հուլիս 14—օգոստոս 12)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ 21

Հայ հոգևորականության մուաֆությանը, հայ եկեղեցու իրավունքներին, հայերից գանձվող գլխահարկի և մյուս հարկերի չափերին և ընդհանրապես հայ համայնքի իրավական վիճակին վերաբերող, իսլամի հիմնադիր Մուհամմադին վերագրված, պայմանագիրը և նրա հաստատությունը 1583 թ. Ոստանի Հաքիմ Կարախան բեկի օրոք, Գրիգորիս Աղթամարցու նախաձեռնությամբ

Թղթապանակ 1ա, վավերագիր № 1ա, բնագիր,
մեծ. 91×30 սմ, գիր՝ խաթը

Հանուն ողորմած և գթառատ աստծու.

Մարգարեներից գլխավորի՝ սուրբ և ընտրյալ Մուհամմադի,— թող աստված օրհնի և պահպանի նրան,— կողմից տրված այս սրբազան և ամենազոր գրության պատճառը հետևյալն է։

Հայ համայնքի քահանաների, ռայիսների *և նրանց ենթակա մարդկանց նկատմամբ բարեգործություն կատարվեց և ընդունվեց ու որոշվեց, որպեսզի* ամանի *պայմանով* ջիզյա *հաստատվի և պատերազմը վերանա։*

Աստծո մարգարեի կնքած պայմանով,— խաղաղություն նրան,— հրամայված է հիշյալ համայնքի [հետ] ջիզյայի *կարգով [վարվել]։ Հայերից ամեն ոք, որ հասունության տարիքին է հասնում, նա իր գլխին* ջիզյա *է ընդունում և պարտավոր է վճարել չորս* աղչե՝ 1 մսխալ *մաքուր արծաթ։ Իսկ հայերից նրանք, որոնք մաքուր ծագում ունեն կամ շատ հարստություն ունեն, այդ թող նկատի չունենան և նրանցից ավելին չպահանջեն, որովհետև որոշյալ գումարը 4 արծաթ* աղչե *է. այդպես է որոշված։*

Որովհետև եկեղեցիներից ամենից մեծը և հայերի մայր աթոռը Աղթամարի վանքն է՝ իր կից և ենթակա վայրերով, ուստի թող նրանց քահանաներից և վանականներից և այն մարդկանցից, որոնք ծառայում են նրանց եկեղեցիներին և վանքերին, ոչ մի մարդ արարած ի հաշիվ ջիզյայի ոչինչ չպահանջի, որովհետև նրանք մուաֆ են: Թող այս պարտագիր համարեն և իմանան, որ եթե որևէ տեղ քահանաներ, վարդապետներ կամ վանականներ կան, մուսուլմաններն ու հավատացյալները նրանց հետ վարվելիս այս կարգից չշեղվեն: Ով որ այս որոշմանը հակառակի, ուրեմն նա ենթարկվում է քարկոծյալ և անիծյալ սատանային:

Եվ երբ հայերի գլխավոր Իսահակ կաթողիկոսը լսեց, որ սուրբ մարգարեն Մեքքայից և Մեդինայից նվաճումների համար եկել է սահմանը, իր քահանաների, վարդապետների և վանականների հետ տեղից վեր կացավ և գնաց սուրբ մարգարեին դիմավորելու,— թող աստված օրհնի և պահպանի նրան: Նա հպատակություն հայտնեց և [ընդունեց], որ հայ ժողովրդի, այսինքն իր ժողովրդի գլխին որոշ գումար ջիզյա նշանակվի, և [խնդրեց] որպեսզի սուրբ մարգարեն,— թող աստված օրհնի և պահպանի նրան,—ողորմածաբար շնորհ անի և Վանի, Էրզրումի, Բասենի, Դիարբեքիրի, Բիրաջիքի, Բաղդադի, Համադանի նահանգներում և նրանց ենթակա ու կից վայրերում բնակվող հայերից գանձվող եկեղեցական տուրքերը (ռաամ և ռուսումաք) նվիրի Աղթամարի վանքին, որը [իր] նստավայրն է:

Այս նույն դաշնագրում, որ մարգարեի սրբազան գիրն է և գրվել է նրա հետևորդների խմբի ներկայությամբ, այսպես է հրամայված, որ եթե որևէ վանք կամ եկեղեցի կառուցեն, որոշյալ չափից չանցնեն, իսկ եթե նրանք անզոր լինեն, անհրաժեշտ համարեն օգնել և պարտք տալ նրանց: Եթե հայերը չեն ուզում ցրվել, ապա թող իրենց գյուղում հպատակված ու ենթարկված մնան (°): Հայերին բանակ չվերցնեն և եթե նրանց վրա զորք գա, մուսուլմանները պարտավոր են այդ զորքերին ետ մղել: Թող այսպես վարվեն, որովհետև մարգարեների գլխավորի ժամանակ այսպես է եղել: Եթե մեկը սրա հակառակը անի, այդ նշանակում է, որ նա հակառակվում է աստծո և մարգարեի հրամանին, որովհետև այդ 4 աղչեն հրամայված է տալ որպես գլխի ջիզյա: Այն պետք է տրվի իր տեղում (բնակավայրում), իսկ եթե հիվանդ լինեն կամ օտար վայրում՝ նրանցից չպահանջեն:

Եթե հայերից մեկը գերի ընկնի և մեզ պատկանի, կամ մուսուլմաններից որևէ մեկը օրինավոր կերպով հայ կին առնի, թող չստիպի իր հավատքից հրաժարվել ու մուսուլման դառնալ, այլ թողնի իր հայեցողությանը: Եթե նրանց վանքերից և եկեղեցիներից մեկը վակֆ լինի, նրանից ոչինչ չպահանջեն: Հայերն իրենց ցանքսերի համար յուրաքանչյուր 6 եզից 1 մոդ ու կես հացահատիկ, 1 ձիան պարկ (թոբրա) և 1 պարան (°) թող տան, և թող նրանցից ուրիշ ոչինչ չպահանջեն: Հայերը պետք է պարտագիր համարեն հպատակվել մուսուլմաններին և նրանց բարեհաճ խոսքից չշեղվեն: Իսկ եթե օտար մի ժողովուրդ թշնամություն սկսի մուսուլմանների դեմ, հայերը չպետք է դավաճանեն, որովհետև դա կդիտվի որպես դավաճանություն աստծո և մարգարեի նկատմամբ: Թող հայերի արյունը, ինչքը և ընտանիքը ճանաչեն որպես մուսուլմանի արյուն, ինչք և ընտանիք և նրանց չվնասեն:

Այս սրբազան և ամենազոր բարձրագույն և արևից էլ պայծառ գրությունը Իսահակ կաթողիկոսը սուրբ մարգարեից է խնդրել և [մարգարեն],— թող աստված օրհնի և պահպանի նրան, —շնորհել է նրան, մարգարեներից ամենավերջինի (Մուհամմադի) հետևորդների ներկայությամբ:

Ներկա գտնվող վկաներ.

Վկայությամբ՝ Աբուբաքր Սադիղի
Վկայությամբ՝ Օմար իբն-Խաթթաբի
Վկայությամբ՝ Օսման իբն-Ակկանի
Վկայությամբ՝ Ալի իբն-Աբիթալիբի
Վկայությամբ՝ Մավկաֆա իբն-Այյուբի
Վկայությամբ՝ Աբու...(°) իբն-Յունիսի
Վկայությամբ՝ Աբդուլլա իբն-Մաս'ուդի
Վկայությամբ՝ Աբդուլլա իբն-Յուսուֆի
Վկայությամբ՝ Համզա իբն-Աբդ-ուլ-Թալիբի
Վկայությամբ՝ Ֆազլ իբն-Սինայի
Վկայությամբ՝ Զեյդ իբն-Իբրամի (°)
Վկայությամբ՝ ...(°) իբն-Աբդուլլայի
Վկայությամբ՝ Սամիդ իբն-Կեյսի
Վկայությամբ՝ Սահլ-իբն-Նաթֆայի (°)
Վկայությամբ՝ Օսման իբն-Կարունի (°)
Վկայությամբ՝ Աբդուլլա իբն-Օմարի

Վկայությամբ՝ Օմար իբն-Շիրինի (°)
Վկայությամբ՝ Հաշիմ իբն-ուլ-Ղասիրի
Վկայությամբ՝ Հասան իբն-Սամիդի
Վկայությամբ՝ Բասր իբն-Մալիքի
Վկայությամբ՝ Ջահֆար իբն-Աբութալիբի
Վկայությամբ՝ Հարվանդ իբն-Ջահակի
Վկայությամբ՝ Զեյդ իբն-Արղամի:

Այս սրբազան գրությունը, որը գրվել է ամենամեծ մարգարեի,—թող աստված օրհնի և պահպանի նրան,— հայտնվելու չորրորդ տարում, Մուավիա իբն-Սեֆյանի իբն-Մաքումի (°) ձեռքով, գտնվում է նրանց (հայերի) ձեռքում:

Այս գրությունը աչքի անցկացնողներին թող հայտնի լինի, որ Գրիգորիս կաթողիկոսը Ոստանի հաքիմ *Կարախան* բեկի *իշխանության ժամանակ իր հետ ունենալով մարգարեի,—թող աստված օրհնի և պահպանի նրան,—սրբազան* ֆերմանը, *ուրբաթ օրը եկավ Ոստանի բերդի ատյանը, որտեղ ներկա էին բոլոր երևելիները, որոնք տեսան, կարդացին, համոզվեցին և ընդունեցին այն: Դրա համար էլ կազմվեց այս արձանագրությունը, վկայությամբ Ոստանի* մադրասեի մուդառիս *Հասան իբն-Հասանի, վկայությամբ վանեցի մոլլա Ջիբրայիլի և վկայությամբ* մադրասեի *բոլոր* ֆակիհների:

Կարախան բեկի կնիքը
Կնքված է նաև ինչ որ Օսմանի կնիքով

Լուսանցում՝
Ես ստրուկներից ամենախեղճս և նվաստագույնս Բակաղ (°), Օսման (°)
Վկայությամբ՝ Ջիբրայիլի և Ոստանցի Օսմանի
Վկայությամբ՝ հաքքարիների մոլլա Ռասու[լ]ի
Վկայությամբ՝ բիթլիսցի մոլլա Աբուբաքրի
Վկայությամբ՝ ոստանցի Թարում իբն-Օսմանի
Վկայությամբ՝ ոստանցի Ջալադ իբն-Ալիի և ուրիշ ներկաների:
991 թվականին (1583 թ.).

ՎԱՎԵՐԱԳԻՐ 22

Սեֆյան Սուլթան-Մուհամմադ խուդաբանդեի 1585 դեկտ.—1586 հունվ. հրովարտակը, որով կարգադրում է Ագուլիսի մելիքներին և քյադխուդաներին, որպեսզի Ագուլիսի Թովմա առաքյալի վանքի հոգևորականների թաֆավութ-ե ջիզյան գանձվի Ագուլիսի համայնքից, և Ազադ-Ջիրանի շրջանի հայերը նախկին կարգով շարունակեն վճարել եկեղեցական տուրքերը

Թղթապանակ 1ա, վավերագիր № 20, բնագիր, մեծ. 22×17 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ

Սուլթան-Մուհամմադ խուդաբանդեի կնիքը

Արքայական հրաման եղավ: Որովհետև մումայյիզ խոջա *Շուքրուլլան Ագուլիսի վանքի* թաֆավութ-ե-ջիզյան *պակասորդ (ապառք) է հաշվել և համաձայն աշխարհաստատ հրամանագրի ընդհանուր գումարից հանվել է ու վճարելիք պարտք է դարձել, ուստի թող տեղի* մելիքներն *ու* քյադխուդաները *որոշված օրինական* իխրաջաթի *բաժինը տեղում վճարեն, և որևէ ցանկություն և անկեղծություն չունենան, և ավելի կամ նվազ չափով պահանջներ չներկայացնեն, և թույլ տան, որպեսզի այդ տեղից ցրված* ռայաթները *հավաքվեն ու հիշյալ վանքը նորից շենացնեն և երկրագործությամբ զբաղվեն: Այդ կողմերի* հաքիմները, դարուղաները *և* քալանթարները *ըստ վերոգրյալի որոշված ճանաչեն, որևէ ցանկություն ու անկեղծություն ցույց չտան, անհանգստություն չպատճառեն և հսկեն ու հովանավորեն նրանց: Ընդունելով այս որպես խիստ կարգադրություն, չփորձեն այս հրամանին հակառակել: Ազադ-Ջիրանի հայերը այն որոշյալ տուրքը, որ հիշյալ վանքին տվել են, նախորդ տարիների կարգով շարունակեն տալ, այդ իրենց պարտքը համարեն և չթերանան:*

Գրվեց 994 թվականի մուհառամ ամսին (1585 թ. դեկտեմբեր 23—1586 թ. հունվար 22):

Մյուս էջում սեղանի մակագրությամբ նշված են Ագուլիսից գանձվող հարկերի ընդհանուր գումարի հետևյալ հաշվումները: Վավերագրի վերի մասից ներքև սանտիմետր լայնությամբ մի շերտ պոկվել ու անհետացել է, որի հետևանքով մակագրության սկզբից պակասում է մոտ երեք բառ.

...845 893 Թավրիզի դինար *համառոտ ձևով, որպես առկա գումար* ջամ՛ *է արված: Համաձայն Ալեքսանդրի փառքն ունեցող*

արքայի (Շահ Իսմայիլ Ա.) ժամանակվա համառոտ դաֆթարի, հիշյալ 845 893 դինարը ձիու տարվա մումայյիզ խոջա Շուքրուլլայի ստուգմամբ իր առկա և ապառիկ մասերով հետևյալ ձևով են հաշվել

Առկա	Ապառիկ
403 893	442 000

և նշել են, որ համաձայն նրա (խոջա Շուքրուլլայի) գրած պայմանագրի, որը կնքված է նաև դարուղայի կնիքով և արձանագրված է հիշյալ տարվա մալոջհաթի մեջ, ապառքը գրելիս վանքի երեք թումանը և չորս դինարը (30 004 դ.) մտցրել են ապառիկ գումարի մեջ: Այժմ 845 893 դինարը ամբողջապես ընդհանուր գումարով մնում է Ագուլիսի մակթա՛ի մեջ: Վերջ:

ԿՆԻՔ

Այլ ձեռագրով՝ «Այսպես է»,—կնիք:
Կան նաև երկու այլ անընթեռնելի կնիքներ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 23

Վրաց Սիմեոն թագավորի (Մահմուդ միրզա խան) 1594 թ. հրովարտակը, որով Գորիի հայ քահանաներին թարխան է հայտարարում և ազատում հարկերից

Թղթապանակ 1ա, վավերագիր № 25, բնագիր, մեծ. 32×21 սմ, գիր՝ շիքաստե-թաալիղ

Հաղթական սուլթան Մահմուդ միրզա խան: Իմ խոսքը:

Ներկայումս [հայտնի դարձավ], որ շնորհիվ անսպառ հոգատարության և ողորմածության հանդեպ Գորիի մահալի քահանաների, նրանք հատուկ հրովարտակով հին ժամանակներից թարխան են եղել, ուստի այժմ ևս [մեր] բարձր ողորմածությունը Գորիում բնակվող քահանաների նկատմամբ արտահայտելով՝ հիշյալ քահանաներին՝ սկսած օձի տարվա վեցամսյակի սկզբից, ամբողջությամբ թարխան և ցուցակագրումից ազատ (մարփու՛-ուլ-կալամ) դարձրինք, որպեսզի նրանք սերնդից սերունդ հանգիստ լինեն և որպեսզի ոչ ոք մալոջհաթի, վջուհաթի, դիվանական բահրաշեի, թարհի, դասթանդազի, բիգարի ու շիգարի, ուլաղի և ուլամի և այլ դիվանական պարտավորությունների պատճառով, բացի պալատական սավարիից և վազիրանեից, նրանցից որևէ պահանջ կամ ակնկալություն չունենա, և թող նրանց տներին չմոտենան:

Իմ որդիներն ու բախտավոր եղբայրները և մյուս ամիրներն ու դարուղաները, անվանի յարղուչիները, քյադխուդաներն ու ազնավուրները, անհրաժեշտ համարեն հովանավորել նրանց, անհանգստություն չպատճառեն և նրանց հետ այնպես վարվեն, որ արարչի ու արարածների կողմից դիտվի որպես շնորհակալ գործ և միշտ փառաբանություն մատուցվի:

Թող այս համարվի խիստ կարգադրություն և թող հրամայվածին չհակառակեն, ամեն տարի այս մասին նոր հրամանագիր չպահանջեն և երբ հրովարտակը բարձր կնիքով զարդարվի՝ հավատան նրան:

Գրվեց 1002 թվականի ջումադի առաջին ամսի սկզբին. (1594 թ. հունվար 22):

ԿՆԻՔ

Լուսանցքում՝

Որոշվեց, որ քահանաների անունները հետևյալն է.

Գրիգոր 1 տուն
Ղազար 1 տուն
Առաքել 1 տուն
Սարգիս 1 տուն
Մկրտիչ 1 տուն:

Ըստ վերոգրյալի որոշված համարեն:

Մյուս էջում նույն հրովարտակի վրացերեն բնագիրը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վավերագիր 1.— *Հրովարտակը գրված է եղել սոսինձով
իրար միացված երկու կտոր թղթի վրա, որոնցից վերինը՝ պոկ-
վել է և անհետացել: Պահպանված պատառիկից հնարավոր չէ
պարզել ստացողի անունը:*

*Դատելով հրովարտակի թվականից, պետք է կարծել, որ
այն տրված է Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի կողմից, հա-
վանաբար, Տաթևի վանահայր Շմավոն վարդապետին: Թղթի որա-
կը, գրության ձևն ու ոճը բավական նման են Սուլթան Ջհանշահի
կողմից տրված հաջորդ՝ № 2 հրովարտակին: Վավերագրի վեր-
ջին մասերը չափազանց քայքայված են, իսկ թվականը մեծ դժ-
վարությամբ է կարդացվում: Ներքևի մասում հազիվ նշմար-
վում են երկու համաչափ կնիքներ, որոնց բովանդակությունը
թղթի մաշված լինելու հետևանքով, հնարավոր չէ վերծանել: Վա-
վերագիրը ռեստավրացիայի է ենթարկված և փակցված է սովոր
թղթի վրա:*

Վավերագիր 2.— *Հրովարտակի սկզբի մասը, ուր սովորա-
բար լինում է տվյալ թագավորի անվան մոնոգրամը (թուղրա),
չի պահպանվել, սակայն տեքստի վերջում նշմարվող կնիքի վրա
դժվարությամբ կարդացվում է Ջհանշահի անունը: Վավերագի-
րը թեև բավական քայքայված է, սակայն, բացի վերջին տողից,
ուր սովորաբար նշվում է թվականը, բնագիրը առանձնապես չի
վնասվել: Սա ևս ենթարկված է ռեստավրացիայի և փակցված է
սովոր թղթի վրա:*

*Վավերագրի մյուս էջում կա նոտր գրով կատարված հա-
յերեն մակագրություն.* «Ջհանշահ ֆատուշահին հուքմն է վասն
Գեղարքունոյ և վանից մաղաֆի»:

*Հրովարտակն ստացող Շմավոն վարդապետ Անգեղակոթցին
ԺԵ դարի աչքի ընկնող եկեղեցական գործիչներից էր և հա-
վանաբար, սերում էր Սյունյաց Օրբելյաններից: Նա եղել է Էջ-
միածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման գործի ակտիվ*

*մասնակիցներից (տես Թ. Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 51)։
Երկար ժամանակ եղել է Տաթևի, իսկ որոշ ժամանակ նաև
Տաթևից ոչ հեռու գտնվող Վաղադնի վանքի վանահայր և մեծ
չափով ընդարձակել է վանքի կալվածները: Ապրել է բավական
երկար և իր արտակարգ եռանդի ու բուռն գործունեության
շնորհիվ գրգռել է օտար տիրողներին, որոնց կողմից և սպան-
վել է (Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 525)։
Նրա սպանության թվականը անհայտ է: Թողել է մի արժեքա-
վոր հիշատակարան, ուր նկարագրված են 1435 թ. Լանկ-Թե-
մուրի որդի Շահրուխի ավերիչ արշավանքները Սյունիքում, և
Սյունյաց իշխան Օրբելյան Բեշքենի ղեկավարությամբ տեղա-
կան բնակչության գաղթը Լոռի (տես Լ. Խաչիկյան, ԺԵ դա-
րի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., էջ 468—
—470):*

Վավերագիր 3.—*Այս հրովարտակը տրված է Սուլթան Ջհան-
շահի կնոջ՝ Բեգում-Խաթունի կողմից 1463 թ. օգոստոսի 6-ին
Թավրիզում, այն ժամանակ, երբ Ջհանշահը գնացել էր Բաղդադ
իր որդու՝ Փիր-Բուդաղի գլխավորած ապստամբությունը ճնշելու:
Բեգում-Խաթունը ուսյալ կին էր և մասնակցում էր երկրի կա-
ռավարման գործերին: Հայտնի է, որ նա առանձնապես հարգում
և հովանավորում էր Զաքարիա կաթողիկոս Աղթամարցուն, որին
շնորհել էր Էջմիածնի կաթողիկոսությունը (տես Ա. Դավրիժե-
ցի, էջ 420—421):*

*Հրովարտակի սույն պատճենը հանված է հավանաբար ԺԹ
դարի 40-ական թվականներին, նրա վրա կա 1844 թվականին
կատարված հայերեն մակագրություն, որը մեծ հավանականու-
թյամբ կատարված է պատճենի արտագրման ժամանակ: Ջա-
լալյան Սարգիս արքեպիսկոպոսը, Արցախում կատարած իր
ճանապարհորդության ժամանակ, Գանձասարի կաթողիկոսարա-
նից վերցրել է այս և մի քանի այլ հրովարտակներ (հայտնի
չէ բնագրեր, թե՞ պատճեններ): Ուշագրավ է, որ Ջալալյանի
վերցրած հրովարտակների մեջ, ըստ նրա վկայության, եղել են
նաև հայ թագավորների կողմից տրված հրովարտակներ, որոնք,
սակայն, դեպի Ռուսաստան կատարած ճամփորդության ժամա-
նակ անհետացել են նրա գրադարանից: Վախ կրելով, որ այս
պարսկերեն հրովարտակները ևս կարող են կորչել, նա դրանց
հայերեն թարգմանությունները, թվով 15 հատ, զետեղել է 1858թ.
լույս տեսած իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան»*

ուղեգրության երկրորդ հատորի վերջում, որպես հավելված (էջ 480—501)։ Այդ հրովարտակների պարսկերեն պատճենները, արտագրված հավանաբար հենց իր իսկ Սարգիս Ջալալյանի ձեռքով, այժմ գտնվում են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում։ Պետք է ասել, որ հիշյալ պատճենները հանված են բավական բարեխիղճ և ուշադիր կերպով, պահպանելով գրության ձևն ու չափը։ Դրանք փաստորեն արտանկարված են, որովհետև գրության սև թանաքի տակից նշմարվում են նախապես մատիտով կատարված արտանկարման հետքեր։ Ամենայն մանրամասնությամբ վերծանված են մոնոգրամներն (թուղրա) ու կնիքները, ինչպես սույն №. 3, այնպես նաև № №, 6 և 18 հրովարտակներում։

Վավերագրի մյուս էջում տարբեր ձեռագրերով կան ուշ շրջանում կատարված երկու անգրագետ հայերեն նշումներ.

1. «Տաճկաց ٨٦٦—866 թ. Արցախ»։

2. «Բեղաթուն (!) Խան արքային ըռաղամն է։ Սա էր եղբայր Արղուն խանին, որ է Թոռն Հուլաւոյ մեծ խանին Թաթարաց։ Յամի տեառն 1291, որ է ամաց 553 ամաց ի 1844 ամին»։

Հրովարտակը հատկապես արժեքավոր է այն տեսակետից, որ այն հրապարակված է նախկինում Ջհանշահի կողմից տրված հրովարտակի հիման վրա։ Այստեղ համարյա ամբողջությամբ մեջ է բերված այդ հրովարտակը, որն իր հերթին հրապարակված է Ջելայիրյան Շեյխ-Ուվեյսի (1356—1374) կողմից տրված մի այլ հրովարտակի հիման վրա, որի բովանդակությունը ևս իր կարևոր մասով մեջ է բերված։ Այնպես որ այս մեկ վավերագրի մեջ ընդգրկված են երեք տարբեր տիրակալների կողմից, տարբեր ժամանակներում տրված հրովարտակներ։

Շեյխ-Ուվեյսի հրովարտակից մեջ բերված հատվածում կա արժեքավոր տեղեկություն այն մասին, որ Աղվանից կաթողիկոսները նախօրոք նշանակվում էին Կիլիկիայի հայոց թագավորների կողմից և այդ մասին հատուկ գրություն ներկայացնելուց հետո միայն ստանում էին տեղական իշխանության հրովարտակը։

Հրովարտակում Կիլիկիայի հայոց թագավորների մասին հիշատակելիս նրանց անվանում են «Սսի թագավոր» (تکفور سیس) պահպանելով հայերեն «թագավոր» բառը։ ԺԴ դարի արժեքավոր սկզբնաղբյուրներից Մուհամմադ Նախջևանիի «Դաստուր-ուլ-քյաթիբ» գրքում պահպանվել է Կիլիկիայի թագավորների հետևյալ

լրիվ տիտղոսը, որով Իլխանները դիմում էին նրանց՝ «فاسلیوس اعظم فیلقوس اکرم افتخاردودمان اسکندر ملاذآل مسیح تکفور سیس لازال معظما — Մեծ բասիլևս հարգարժան բարեկամ, Ալեքսանդրյան ընտանիքի փառք, քրիստոնյաների ապաստան, Սսի թագավորին, որի մեծությունը թող հավիտյան լինի» (տես ИВАН, Архив Тизенгаузена В. Г., фонд 52, хр. 15, „Дастур-ул-катиб", стр. 117б.).

Չակերտների մեջ համարյա ամբողջությամբ մեջ բերված Ջհանշահի հրովարտակը չպետք է դիտել որպես անաղարտ բնագիր։ Այնտեղ որոշ հատվածներ վերաշարադրված են Բեգում Խաթունի հրովարտակը գրողի կողմից։ Այդպես է կատարված հենց սկզբի մասում, որից այն տպավորությունն է ստացվում, որ իբր, Շեյխ Ուվեյսի հրովարտակում ասված է եղել, թե Գանձասարի կաթողիկոսության իրավունքը Ուվեյսի օրոք տրված է եղել Մատթեոս կաթողիկոսին։ Սակայն այստեղ այն միտքն է հայտնված, որ ներկայացնելով Շեյխ-Ուվեյսի կողմից իր նախնիներին տրված հրովարտակը, Մատթեոսը ապացուցել է, որ ինքը իրավունք ունի ժառանգելու Գանձասարի կաթողիկոսական աթոռը։

Մատթեոս կաթողիկոսը հաջորդել է Կարապետ կաթողիկոսին 1424 թվականին, իսկ Ջհանշահի հրովարտակը նա պետք է ստացած լինի 1435 թվականից ոչ շուտ, որովհետև այդ թվականին էր, որ Շահռուխը եկավ Արևմուտք և Ադրբեջանի իշխանությունը տվեց նրան։ Մաշիկ Դադյանի ձեռագրերի ցուցակի մի հիշատակարանի մեջ պահպանված Աղվանից կաթողիկոսների ցուցակում ասված է, որ Մատթեոսը իշխել է մինչև 1440 թվականը, որից հետո մեկ տարի կաթողիկոս է եղել Աթանասը, իսկ 1441 թվականից կաթողիկոսական գահը ժառանգել է Հովհաննեսը, որը Ջալալի որդին էր (տես Հ. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Մաշիկ վարդապետ Դադյանի, Ա. մաս, էջ 89)։ Ըստ նույն ցուցակի, որից օգտվել է նաև Հ. Աճառյանը իր «Հայոց անձնանունների բառարան»-ը կազմելիս, Հովհաննես կաթողիկոսը իշխել է մինչև 1454 թվականը, որից հետո նորից ոմն Մատթեոս հաջորդել է նրան։

Սույն հրովարտակը թույլ է տալիս ասելու, որ վերոհիշյալ ցուցակը չի կարելի անառարկելի համարել. կազմված լինելով

ԺԵ դարի երկրորդ կեսում, անտարակույս այնտեղ տեղ են գտել նաև որոշ անճշտություններ:

Շփոթությունը մասամբ առաջացել է նաև նրանից, որ հետագա ուսումնասիրողները ճիշտ չեն հասկացել Ս. Ջալալյանի թարգմանած բնագիրը և այն տպավորությունն են ստացել, թե այս հրովարտակն ստացողը ոչ թե Հովհաննեսն է, այլ Մատթեոսը (տես Ղ. Փիրղալեմյան, Նոտարք Հայոց, էջ 206, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 675—676):

Վավերագիր 4.— Այս հրովարտակը վերաբերում է Ջհանշահի որդի Հասան-Ալիի կարճատև (7—8 ամիս) թագավորության շրջանին: Երբ 1467 թ. նոյեմբերին Ճապաղջուրի մոտ Ջհանշահը պարտություն կրեց Աղ-Կոյունլու Ուզուն-Հասանից և սպանվեց, այդ ժամանակ Հասան-Ալին բանտարկված էր Մակվի բերդում: Նա անմիջապես դուրս եկավ և տենդագին կերպով սկսեց զորք հավաքել և պատրաստվել հակահարված տալու Ուզուն-Հասանին: Ճակատամարտը թշնամի բանակների միջև տեղի ունեցավ 1468 թվականի հուլիսի վերջերին Մարանդի մոտ, ուր Հասան-Ալին պարտություն կրեց ու փախավ Համադանի կողմերը: Այսպիսով, ուրեմն, սույն հրովարտակը գրվել է Հասան-Ալիի իշխանությունից զրկվելուց ընդամենը 4 ամիս առաջ:

Հրովարտակն ստացող Շմավոն վարդապետ Անգեղակոթցու հետ Կարա-Կոյունլու Հասան-Ալիին ներկայացրող Ստեփանոս եպիսկոպոսը Շմավոնի եղբորորդին էր և իր հորեղբոր կենդանության օրոք վարում էր Վաղադնի վանքի վանահայրության պաշտոնը: Նա իր ժամանակի խոշոր եկեղեցական գործիչներից էր, որի անունը Թովմա Մեծոփեցին հիշում է 1441 թ. Էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման հարցին նվիրված ժողովի մասնակիցների շարքում (տես Հիշատակարան, էջ 51): Շմավոնի մահից հետո նա դարձավ Տաթևի վանահայր և գրավեց Սյունյաց եպիսկոպոսության աթոռը: Հավատափոխության առաջարկը չընդունելու համար ենթարկվել է անասելի տանջանքների, որից հետո թեև ազատ է արձակվել, սակայն կտտանքից, ծանր հիվանդ վիճակում, վախճանվել է 1483 թ. (Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, գիտ. հրատ., էջ 313—319):

Վավերագրում հիշված Բեշքենի որդին Սյունյաց իշխան Ամիր Ռուստամ Օրբելյանն է, որը Շմավոն վարդապետի հոգևոր սանն էր: Նա 1451 թ. ու նրանից առաջ, մի շարք գյուղեր վաճառքի անվան տակ, Շմավոն վարդապետի միջոցով նվիրել էր (վակֆ էր արել) Տաթևի վանքին: Այդ գյուղերից մի քանիսի (Սվարանց, Տաշու, Աղանց, Տանձատափ) հնագույն կալվածագրի պարսկերեն բնագիրը այժմ գտնվում է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում (տես թղթապանակ 2ա, վավ. № 3):

Ռուստամ Օրբելյանի քաղաքական գործունեության մասին ավելի մանրամասն տես Հ. Փափազյան «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից», Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հաս. գիտ. սերիա, 1955 թ., № 8:

Հասան-Ալիի այս միակ հրովարտակը, չնայած իր հնության, բավական լավ է պահպանվել: Ուշադրության արժանի են հատկապես հրովարտակի տեքստի տողերի արանքների և լուսանցքների զարդանկարները, որոնք կատարված են ոսկեգույն թանաքով: Այդ նույն թանաքով են գրված նաև սկզբի «Աստված խնամող է ու հոգատար» և լուսանցքում նշված՝ Ջհանշահին վերաբերող «Թող աստված նրա հոգին լուսավորի» խոսքերը, ինչպես նաև Հասան-Ալիի անունը պարունակող թուղրան: Վանքապատկան գյուղերի ցուցակը, չափազանց մանր շիքաստե գրությամբ, գրված է թղթի մի նեղ շերտի վրա և փակցված վեցերորդ և յոթերորդ տողերի արանքում: 6-րդ տողը վերջանում է «ըստ կից ցուցակի» խոսքերով, որին 7-րդ տողի սկզբից, հաջորդում են «ողորմածությամբ շնորհեցինք նրան» խոսքերը: Այնպես որ գյուղերի ցուցակը այդտեղ խանգարում է հրովարտակի ընդհանուր շարադրանքին: Ուստի նպատակահարմար գտանք, ինչպես այստեղ, և առհասարակ նման դեպքերում, վավերագրերում պատահող ցուցակները զետեղել թարգմանության վերջում:

Այս վավերագիրը ևս ռեստավրացիայի է ենթարկված և փակցված ստվար թղթի վրա: Վնասված տեղերը քիչ են և առանձնապես չեն խանգարում բնագրի վերծանմանը:

Վավերագրի մյուս էջում կան 7 մանր կնիքներ, որոնք թղթի մաշված լինելու հետևանքով անընթեռնելի են դարձել:

Վավերագիր 5.— Այս հրովարտակը Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի կամ Մաղարդա վանքի հնագույն պարսկերեն վավերագիրն է, որի միայն թուղրայի շատ չնչին մասն է կտրված, իսկ ամբողջ վավերագիրը չափազանց լավ է պահպանված: Իր ընդհանուր շարադրանքով սա բոլորովին չի տարբերվում նախորդ՝ Կարա-Կոյունլուների շրջանի հրովարտակներից: Իսկ

մյուս էջի մանր մակագրությունները մեծ մասամբ կատարված են այնպիսի գրությամբ, որը չափազանց նման է ուշ շրջանի, Թյուրքիայում և արաբական երկրներում ընդունված, «ռիկ՛ա» գրության։ Սույն հրովարտակի կնիքները ևս, որոնք ավելի պարզ են և ընթեռնելի, իրենց, փորագրական արվեստով գերազանցում են ինչպես նախորդ Կարա-Կոյունլուների, այնպես նաև հետագայում Սեֆյան շահերի կողմից տրված հրովարտակների կնիքներին։

Վավերագիր 6.— Այս հրովարտակը, որը գրված է Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի (1478—1491) թագավորության 8-րդ տարում, նույնպես հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել Սարգիս Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության Բ. հատորի հավելվածային բաժնում (այս մասին տես № 3 վավերագրի ծանոթագրությունը)։

Հրովարտակն ստացող Աղվանից Շմավոն կաթողիկոսը հավանաբար հաջորդել է Հովհաննես կաթողիկոսին, որն իր կաթողիկոսության հաստատման հրովարտակը ստացել էր Բեգում-Խաթունից (տես վավ. 3)։ Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահի այս հրովարտակը նույնպես գրված է Ջհանշահի այն հրամանի հիման վրա, որը համարյա ամբողջությամբ մեջ էր բերված Բեգում-Խաթունի վերոհիշյալ հրովարտակում։

Վավերագրի մյուս էջում կա հետևյալ հայերեն մակագրությունը. «Եաղուբ Բճարուբիճ բաղամճ է մեր Սիմէօն (Շմավոն) կաթուղիկոսին. գոյ ազգաբանութիւն»։ Այս մակագրությունը կատարված է հավանաբար ԺԹ դարում։ Վերջում ավելացված «Գոյ ազգաբանութիւն» խոսքի մասին տես № 18 վավերագրի ծանոթագրության մեջ։

Վավերագիր 7.— Հրովարտակը տրված է Ուզուն-Հասանի թոռ՝ Մակսուդի որդի Ռուստամ փադիշահի (1493—1496) կողմից և ուղղված է Էջմիածնի Սարգիս կաթողիկոսին, որն ըստ Դավրիժեցու 1476—1513 թթ. եղել է Էջմիածնի աթոռակից կաթողիկոսներից մեկը (տես Ա. Դավրիժեցի, էջ 437)։

Հրովարտակի այս խիստ համառոտ բովանդակությունից պետք է եզրակացնել, որ խորը հակասություններ են եղել Էջմիածնի և Մակվի Թադեոս Առաքյալի վանքի միջև, որոնք, ամենայն հավանականությամբ, վերաբերել են այդ վանքերի վիճակներին և նրանցից ստացվող հոգևոր տուրքերին։

Բնագիրը գրված է գորշ թղթի վրա և գտնվում է բավական լավ վիճակում։ Ենթարկված է մասնակի ռեստավրացիայի։

Վավերագիր 8.— Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի այս առաջին հրովարտակներից մեկը, որը մեզ հասածներից թերևս ամենահնագույնն է, գրված է նրա թագավորության երկրորդ տարում։ Բնագիրը մեզ է հասել չափազանց քայքայված վիճակում, բայց բարեբախտաբար գոյություն ունի նաև ավելի ուշ շրջանում (հավանաբար ԺԷ դար) հանված և չարխաթի կողմից հաստատված պատճենը (Թղթապանակ 2ա, վավ. № 11, մեծ. 48×20,5, գիր՝ շիքասթե-նասթալիղ), որի շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել ամբողջ տեքստը։

Բնագրի վերջում նշմարվող կնիքը անընթեռնելի է, իսկ պատճենի վրա, կնիքի տեղում, կարդում ենք «محل مهر نواب مستطاب جنت آرامگاه شاه اسمعیل — Նորին սրբություն դրախտաբնակ Շահ Իսմայիլի կնիքի տեղը»։ Պատճենի մյուս էջում կան իսկականի հետ համեմատված լինելու մասին արված նշումներ.

1. (مهر) قوبل باصل الاشرف الارفع الاعلی — Համեմատված է սրբազնագույն և բարձրագույն իսկականի հետ։ (Կնիք)

2. (مهر) مقابله شد — Համեմատվեց։ (Կնիք)

Պատճենի մյուս էջի վրա է գտնվում նաև հետևյալ հայերեն մակագրությունը. «Շահ Իսմայիլին բաղամիճ սաւատճ է վանքիս խարճ չեղնի և երկիրներ խումս և զաբեղճ վանքիս տան»։

Հրովարտակն ստացողի անունը բնագրում նշված է պարսկերեն «سیامون — Սիամոն» ձևով, որը մենք թարգմանում ենք Սիմեոն։ Սակայն ի նկատի ունենալով, որ Սիմեոն և Շմավոն անունները նույնն են, այն կարելի է կարդալ նաև Շմաւոն։ Այս Շմավոնը հավանաբար նախորդ Ստեփանոս եպիսկոպոսի եղբորորդին է եղել և վերջինիս չարչարանքներից ու մահից հետո հաջորդել է նրան 1483 թվականին։

Անտարակույս այս հրովարտակի հիման վրա է, որ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական»-ի հավելվածում (կազմված ԺԸ դարում) սխալմամբ Անգեղակոթցի Շմավոն վարդապետի մասին ասված է «... Եւ գնացեալ առ Շահն ցուցանելով նմա զմուրհական՝ վերստին սեպհականեալ է սրբոյ տանս գիւղեցեալն զամենայն» (անդ, էջ 525)։

Վավերագիր 9.— *Այս հրովարտակը նույնպես գտնվում է քայքայված վիճակում, հատկապես խիստ վնասված է վավերագրի ամբողջ ձախ եզրը, որի հետևանքով բնագրից մի քանի բառեր հնարավոր չէ վերականգնել: Կնիքի վրա կարդացվում է միայն «*شاه اسمعيل بن حيدر *— Հեյդարի որդի Շահ Իսմայիլ» անունը: Ուղղանկյունաձև է, ներկված և փակցված է սովոր թղթի վրա:*

Վավերագրի մյուս էջում, հավանաբար Սիմեոն կաթողիկոս Երևանցու ձեռքով կատարված է հետևյալ մակագրությունը. «Շահ Իսմայիլի ռաղամն *է, որ* մաղաֆ *անէ զուլը Ամենափրկչի վանքն, զի ամենևին զհարկս և* զխարջն *զիւանական մի առացէ, ոչ ի* մլքէ *և ոչ յայլ իրաց: Թիւն անյայտացեալ էր (!)»:*

Նույն Սիմեոն Երևանցին, իր հանրահայտ «Ջամբռ» աշխատության մեջ, խոսելով Հավուց-թառի Ամենափրկիչ վանքի կալվածների մասին, նշում է, որ այդ վանքում, սկսած դեռևս Բագրատունյաց թագավորության շրջանից ժառանգաբար տիրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու սերունդները: Դրանցից մեկն է եղել նաև Զաքարիա վարդապետը, որը 1440-ական թվականներից սկսած վանքի վանահայրն էր («Ջամբռ», էջ 277): Թովմա Մեծոփեցին նրա մասին գրում է. «Տէր Զաքարէն Հաւուց-թառայ ի յաղատորդեաց» (Թ. Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 52): Սույն Զաքարիա վարդապետը, հիջրեթի 894 թվականին (1489 թ.) 5000 դինար փրկագին վճարելով Աղ-Կոյունլու Յաղուբ փադիշահից, Զանխուր-Սաադում հարքունիս գրավված կալվածների (Բեյթ-ուլ-մալի) տնօրեն Ամիր Քյամալ-էդ-դին Արդին բեկի միջոցով, ետ է ստանում Բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված 9 գյուղեր (Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Հավուց-թառ, Կուտուց վանք, Ավանասար, Թառնիս, Սուրբ Սարգիս և Կոխդ), որոնց կալվածագրի պատճենը այժմ պահվում է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում (տես թղթապանակ 1գ, վավ. № 927, գյուղերի ցուցակը, տես սույն ժողովածուի № 19 վավերագրում):

Ամենափրկիչ վանքը, որը մահմեդականների կողմից անվանվում էր «Կըզըլ վանք» (Կարմիր վանք), մյուս հայկական վանքերի նման ուներ մուաֆության իրավունք, այսինքն՝ ազատ էր արքունական հարկերից: Սակայն այդ իրավունքը ենթակա էր վերահաստատման յուրաքանչյուր նորընծա շահի կողմից: Իսկ այս դեպքում, երբ Աղ-Կոյունլուների բարձման և Սեֆյան դի-

նաստիայի հաստատման հետևանքով իշխանության գլուխ էր անցել Շահ Իսմայիլ Ա-ն, առավել ևս անհրաժեշտ էր վերահաստատել վանքի մուաֆության իրավունքները: Ուստի վանքի վանահայրը շտապել է Շահ Իսմայիլից ձեռք բերել սույն հրովարտակը, որը հատկապես վերաբերում է այդ հարցին:

Հրովարտակն ստացողի անունը վերջնական ճշտման կարոտ է: Բնագրի دانل بده سنان *հատվածը մենք այսպես ենք կարդում և պայմանական կերպով թարգմանում՝ «զարմանահրաշ Գեղարդի Դանիել»: Ըստ Երևույթին ԺԶ դարի սկզբին Հավուց-թառի և Գեղարդա կամ Այրիվանքի վանահայրը նույն անձնավորությունն է եղել, որը նստել է Այրիվանքում:*

Սիմեոն Երևանցին, ձեռքի տակ ունենալով նույն այս հրովարտակը, գրում է, որ Շահ Իսմայիլից հրովարտակ ստացողը եղել է նույն Զաքարիա վարդապետը, սակայն վավերագրի թվականը չի նշում. ուստի և դժվար է դա հավաստի համարել: Անհավանական է թվում, որ հիշյալ Զաքարիա վարդապետը վանքում իշխել է մինչև 1505 թ.: Դեռևս 1443 թ. մասին Օրմանյանը գրում է, որ «Զաքարիա Հավուցթառեցին արդեն եպիսկոպոսներուն երիցագույնը, այլև տկարացած էր տարիքի բերմամբ» (Ազգապատում, հ. 2, էջ 2124): Իսկ եթե իրոք հրովարտակի վնասված մասերում հիշված է եղել Զաքարիա անունը, որը քիչ հավանական է, ապա դա կարող է նախորդի մերձավոր ազգականներից մեկը եղած լինել:

ԺԵ—ԺԶ դարերում վանքի վանահայրության պաշտոնը ժառանգաբար անցնում էր հորեղբորից եղբոր որդուն կամ մերձավոր ազգականներից մեկին, և վերջինս, հոգևոր կարգ ընդունելիս, սովորաբար ձեռնադրվում էր իր նախորդի անունով: Դա արվում էր հատուկ նպատակով, որպեսզի հեշտությամբ հնարավոր լիներ օգտագործել նախորդ վանահոր անունով ստացված հրովարտակներն ու այլ արտոնագրերը: Մանավանդ, ինչպես դժվար չէ նկատել, հրովարտակներում հայ հոգևորականների մասին հիշատակելիս տալիս էին միայն նրանց անձնանունը, կցելով նրան «վարդապետ», «մահրասիա», «քեշիշ» և նման այլ մակդիրներ:

Վավերագիր 10.— *Հրովարտակը պահպանվել է այս միակ պատճենով, որը, հավանաբար, հանված է ԺԷ դարում: Վնասված տեղեր չունի և գտնվում է բարվոք վիճակում: Իր բովանդակությամբ այն շատ քիչ է տարբերվում №. 8 հրովարտակից, որի ստացողի անունը նույնպես Սիմեոն է:*

Անհավանական չէ, որ այս երկու հրովարտակներում հիշատակված Սիմեոն (ավելի ճիշտ՝ Շմավոն) եպիսկոպոսները տարբեր անձնավորություններ եղած լինեն։ Առհասարակ ընդունված էր, որ նոր նշանակվող վանահայրերը շահից ստանում էին հատուկ հրովարտակ, որպեսզի նախորդ վանահորը տրված արտոնություններն ու իրավունքները վերահաստատեին իրենց անունով։ Այս դեպքում, երբ համարյա նույն բովանդակությամբ մի հրովարտակ ստացված էր 1503 թվականին, երեք տարի հետո նույն շահից նոր հրովարտակի ստացումը կարելի է բացատրել այսպես. հավանաբար, նախորդ վանահոր մահվան կամ այլ պատճառներով, վանքի վանահայրության պաշտոնը անցել է մեկ ուրիշի, որին (ինչպես նշել ենք № 9 հրովարտակի ծանոթագրության մեջ), ընդունված սովորության համաձայն, հոգևոր կարգ ընդունելիս տրվել է նախորդ վանահոր անունը։

Նորընծա վանահայրը փորձել է նախորդի ստացած հրովարտակը, որի մեջ ինչպես տեսանք, նույնպես Շմավոն (կամ Սիմեոն) անունն է հիշված, օգտագործել որպես իրեն տրված արտոնագիր, որովհետև արքունիք գնալն ու նոր հրովարտակ ստանալը մեծ դժվարությունների ու խոշոր ծախսերի հետ էր կապված։ Սակայն, ինչպես երևում է, այդ նրան չի հաջողվել, բայց և այնպես նա կարողացել է հրովարտակի վերջում նշել տալ, որ «նախկինում հրապարակված արքայական հրամանագրի տրամադրությունը զանց չառնեն»։

Տաթևի վանքի վանահայրության պաշտոնը, սկսած դեռևս ԺԵ դարի 30-ական թվականներից, ժառանգաբար գտնվել է նույն վանքի վանահայր Անգեղակոթցի Շմավոն վարդապետի եղբորից սերած ժառանգների ձեռքում, որոնք մեծ մասամբ հոգևոր կարգ ընդունելիս ձեռնադրվում էին Շմավոն անունով։ Այդ անունը հրովարտակներում հիշատակվում է նաև «Սիմավոն», «Սիամոն», «Սիմեոն» ձևերով։ Տաթևի վանքում նստած Շմավոն վարդապետների մասին հիշատակությունների հանդիպում ենք մինչև իսկ ԺԷ դարի սկզբների վավերագրերում։

Ուշադրության արժանի է նաև մի այլ փաստ։

Այս և նախորդ № 8 հրովարտակի առաջին հրահանգը վերաբերում է այն հարցին, որ Գյոգչայի վիլայեթը հին ժամանակներից ի վեր եկեղեցական գծով Տաթևին է ենթարկվել, ուստի այսուհետև ևս պետք է ենթարկվի նրան։ Գյոգչայի կամ

Գյոգչա-Դանգիզի վիլայեթ կամ նահիա էին կոչվում պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Գեղարքունյաց և Սոթքի գավառները, որոնք ընդգրկում էին ամբողջ Սևանի ավազանը։ Ըստ Ստեփանոս Օրբելյանի, Սյունյաց 12 գավառներից 4-րդն ու 5-րդը Գեղարքունիքն ու Սոթքն էին և իրենց եկեղեցական տուրքերը վճարում էին Տաթևի վանքին (Օրբելյան, էջ 513—516)։

Սակայն, ինչպես երևում է, հետագայում այդ գավառները դուրս գալով Տաթևի իրավասությունից ենթարկվել են կամ Գանձասարին կամ այդ կողմերում գտնվող մի այլ վանքի և կամ, որ ամենից հավանականն է, Հավուց-Թառի Ամենափրկչի վանքին։

Հատկանշական է, որ Աղ-Կոյունլուների տիրապետության շրջանից Տաթևի վանքին տրված հրովարտակներ չեն պահպանվել, մինչդեռ նույն ժամանակաշրջանում է, որ Ամենափրկչի վանքը սկսում է ուժեղանալ, ընդարձակել իր կալվածներն ու ենթակա վիճակները։ Ինչպես նշված է № 9 վավերագրի ծանոթագրության մեջ, 1489 թվականին էր, որ վանքի վանահայր Զաքարիա վարդապետին հաջողվում է Յաղուբ փադիշահից ետ ստանալ իր ժառանգական կալվածները։ Շատ հավանական է, որ Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի հրովարտակով (վավ. № 2) Տաթևի թեմ հաստատված Գյոգչայի վիլայեթը, Աղ-Կոյունլուների օրոք ենթարկված է եղել Ամենափրկչին։

Շահ Իսմայիլի կողմից տրված, ինչպես սույն № 10, այնպես նաև № 8 հրովարտակներից պետք է եզրակացնել, որ պայքարը Գյոգչայի վիլայեթին վերստին տիրելու համար ավելի սուր բնույթ է ստացել և հանդիպել է հակառակ կողմի ուժեղ դիմադրությանը։ Այնպես որ նույն բովանդակությամբ կրկնակի հրովարտակների ստացումը կարելի է բացատրել նաև այս փաստով։ Սակայն, ինչպես երևում է, այս վերջին հրովարտակը ևս հարցը վերջնականապես չի լուծել և վեճերը շարունակվել են մինչև 1515 թվականը, երբ Գեղարքունիքի մելիքները հավաքվել են Տաթևում և իրենց ստորագրություններով հաստատել, որ իրոք իրենց երկիրը Տաթևի թեմն է և պետք է ենթարկվի նրան (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 241)։

Վավերագիր 11.— Շահ Իսմայիլի այս վերջին հրովարտակը, որ գրված է 1510 թվականին, վերահաստատում է Տաթևին պատկանող այն գյուղերի ցուցակը, որը № 4 հրովարտակով 1468 թվականին հաստատված էր Կարա-Կոյունլու Հասան-Ալիի

կողմից: Այն տարբերությամբ միայն, որ այս ցուցակում Բնունիս և Թաս գյուղերը հիշատակված են որպես առանձին գյուղեր, իսկ նախորդում միասին են հիշված, որպես մեկ միավոր: Հավանաբար այդ երկու գյուղերը այն ժամանակ ընդգրկված են եղել մեկ համայնքի մեջ:

Հրովարտակը ռեստավրացիայի է ենթարկված ԺԹ դարում: Պատռված մասերը ետևի կողմից կարկատվել են մի հայերեն նամակով, որի վրա նշված է 1821 թվականը: Հրովարտակի բովանդակության մասին տրված հայերեն սխալ անոտացիան՝ «Ինգիլզակոթցի Սիմէօն վարդապետին (!) հանած բաղամն է վախմը գեղերեից համար» գտնվում է հենց այդ կարկատաններից մեկի վրա:

Պահպանված են նաև սույն հրովարտակի ԺԷ դարում հանված երկու պատճեններ (Թղթապանակ 2ա, վավ. №№ 12բ, և 12գ), որոնց հակառակ էջերի վրա կան պատճենի հարազատության մասին վկայող հետևյալ նշումները.

1. هو—قوبل باصله الاشرف الارفع المطاع الاعلى—حرر (مهر) — Նա է: Համեմատված է սրբազնագույն, բարձրագույն և հպատակության արժանի իսկականի հետ: Գրեց՝ (կնիք):

2. مقابله شد (مهر) — Համեմատվեց: (կնիք):

3. مقابله شد (مهر) — Համեմատվեց: (կնիք):

№ 12բ պատճենի հակառակ էջին պարսկերեն մակագրություն. «سواد نشان نواب علین آشیان شاه اسمعیل رحمة الله — Երկնաբնակ արքա Շահ Իսմայիլի հրովարտակի պատճենը: Թող աստված ողորմի նրան»:

№ 12գ պատճենի հակառակ էջի անկյունում՝ հայերեն. «Շահ Իսմայիլի հօքմին սաւատն է, սատրին մհրովն»:

Բնագրի վրայի ԺԹ դարում կատարված մակագրությունը նույն ձեռագրով կրկնված է նաև № 12գ պատճենի վրա:

Վավերագիր 12.— Շահ Թահմազ Ա-ից (1524—1576) պահպանված այս ամենահին հրովարտակը, թեև բավական քայքայված է, սակայն հաջող կերպով ռեստավրացիայի է ենթարկված: Ամբողջ բնագիրը ընթեռնելի է, գրված սովորական նասթալիղ գրությամբ, խիստ շեշտված շիքաստեի երանգներով, և հանդիսանում է այս գրությամբ գրված Մատենադարանի ամենահին հրովարտակը:

Վավերագրի մյուս էջում կատարված են երկու հայերեն կիսագրագետ նշումներ.

1. «Շահ Թահմազին հու[ք]մն է».

2. «Մղարնամայն է որ վանքիս թեմն հնազանդ լինին, որ մերն անց կենա: Շահ Թահմազին առաջին հօքմին սավադն է (!) ԾԹ (պետք է լինի ՋԾԱ—Հ. Փ.) թարըղին է գրեալ»:

Շահ Թահմազի թագավորության շրջանից սկսած փոփոխություն է նկատվում նաև հրովարտակների ընդհանուր ձևի մեջ: Եթե Կարա-Կոյունլուների, Աղ-Կոյունլուների, ինչպես նաև Շահ Իսմայիլի հրովարտակներում շահի կնիքը հաճախ դրվում էր հրովարտակի վերջում, ապա այստեղ և այսուհետև սովորաբար դրվում է սկզբում: Կնիքի կենտրոնի փոքր շրջանակի մեջ գրված է «بنده شاه ولایت طهماسب—٩٥٠ — Երկրի թագավորի ծառա՝ Թահմազպ 950 (1543)», «Երկրի թագավոր» ասելով շիաները հասկանում էին Ալիին: շահ Թահմազից սկսած Սեֆյանները իրենց այդպես էին կոչում և կնիքների վրա այդպես էլ փորագրում էին: Կնիքի շուրջը մեծ շրջանակի մեջ սովորաբար գրվում էր շիաների 12 իմամների անունները:

Այս ժամանակից սկսած մեծ տարածում է ստանում նաև հրովարտակների շարադրման այն ձևը, ըստ որի այն սկսվում էր «فرمان همایون شد — Արքայական հրաման եղավ» կամ «حکم جهانمطاع شد — Աշխարհասաստ հրաման եղավ» խոսքերով: Թուղրայի սկզբում նշվող «الحكم الله — Իշխանությունն աստծունն է» խոսքը փոխարինվում է կնիքից անմիջապես վերև գրվող «الملك الله» նույն իմաստը պարունակող խոսքով, որից վեր անպայման գրվում էր «هو — Նա է» (իմա՝ աստված է) արտահայտությունը: Այս բոլորը գրվում էր ոչ թե սովորական սև գույնի թանաքով, այլ ոսկեգույն կամ կարմիր թանաքով:

Հրովարտակների շարադրման այս ձևը, մասնակի փոփոխություններով, տիրապետում էր մինչև ԺԹ դարը: Թեև երբեմն, հին հրովարտակների վերահաստատման ժամանակ, և հատկապես զանազան առանձնաշնորհումների և մուաֆության կամ այլ արտոնությունների շնորհման դեպքում, պահպանվում էր նաև հին ձևը:

Վավերագիր 13.— Այս հրովարտակը իր արտաքինով չափազանց նման է նախորդ՝ № 12 հրովարտակին: Գրված է հա-

մեմատարար ավելի պարզ նասթալիղ գրությամբ, շիքաստեի աննշան էլեմենտներով։ Կնիքը նույն 950 (1543) թվականի կնիքն է, թղթի որակը ևս նույնն է։

Վավերագրի մյուս էջի վրա կատարված է հետևյալ հայերեն համառոտ անոտացիան. «ՃԻԶ (126). Այս այն շահ Թահմազի ռաղամն է, որ սուրբ Էջմիածնայ նվիրակն և իշխանութիւնն տւրէ Թումանն-Նախջուանու, Գեանջայու, Բարդայու, Ջակամներաց, Լոռու, Ախստեւ և այլ մերձակա նահանգներաց»։

Հրովարտակը գտնվում է բավական վիճակում և ենթարկվել է ռեստավրացիայի ԺԸ դարում։ Այս և հետագա դարերի բազմաթիվ այլ հրովարտակներ ԺԸ դարում, մեծ մասամբ Սիմեոն կաթողիկոս Երևանցու կարգադրությամբ, ենթարկվել են վերանորոգման։ Անկախ այն բանից, թե վավերագիրը ծալված է թե ոչ, նրան հետագա փչացումից փրկելու նպատակով աջ, ձախ և ներքևի եզրերին փակցրել են 2—5 սմ լայնությամբ, սովորաբար գունավոր (դեղին, վարդագույն, բաց կամ մուգ կարմիր), բարակ, բայց ամուր թուղթ, իսկ վերևի մասից՝ նույն թղթի մի ավելի մեծ կտոր, որը ծալվելով ծածկում էր ամբողջ հրովարտակի տեքստը և ծառայում էր որպես պահպանակ։

Այս հրովարտակի վերևից փակցրած թղթի վրա գտնվում է Սիմեոն Երևանցու օրոք կատարված հայերեն երկրորդ համառոտ անոտացիան։

«(Ա.) Մեծ Շահ Թահմազի ռաղամն է, զոր տուեալ է Միքայէլ կաթուղիկոսին։ Զի Նախիջևան, Գեղարքունի, Ղափան, Խոյ, Սալմաստ, Գեանճա, Բարտա, Ախստև, Ջակեամներն և Լօռի սրբոյ Էջմիածնի լիցին հնազանդ և նորին կաթուղիկոսացն տացեն գնուիրակութիւն։ Ի թուին տաճկաց ՋԾԵ (955)»։ Այլ ձեռագրով ավելացված է. «Զօրին սաւատն գտցես Ա (1) համարով և ցուցակաւ սոյնոց»։

Պահպանված է նույն հրովարտակի ԺԷ դարում հանված պատճենը (Թղթապանակ 2ա, վավ. № 15, մեծ 47,5×21, գիր՝ շիքասթե), որի մյուս էջի վրա կա պատճենի հարազատության մասին վկայող մակագրություն. «السواد مطابق لاصله الاصيل الاشرف الاقدس الارفع الاعلى—حرر العبد (مهر) — Պատճենը համապատասխան է սրբազնագույն և բարձրագույն իսկականին։ Գրեց ստրուկ՝ (կնիք)»։ Իսկականի վերին մասից փակցրած թղթի վրայի հայերեն անոտացիան կրկնված է նաև պատճենի հակառակ էջի վրա, որի վերջում նույնպես տարբեր ձեռագրով ավե-

լացված է. «Զօրին հեղինակն գիտ Ա (1) համարով և ցուցակուն»։

Հրովարտակի ստացողն է Միքայել Սեբաստացի կաթողիկոսը, որ ըստ Դավրիժեցու 1545—1576 թթ. եղել է Էջմիածնի աթոռակից կաթողիկոսներից մեկը (Ա. Դավրիժեցի, էջ 437—438)։ Ըստ Օրմանյանի իր կաթողիկոսության 31 տարիներից սկզբի 21 տարին, այսինքն մինչև 1567 թվականը. նա եղել է Ստեփանոս Սալմաստեցու աթոռակիցը, իսկ նրա մահից հետո դարձել է աթոռակալ կաթողիկոս, աթոռակիցներ ունենալով Բարսեղ և Գրիգոր Վաղարշապատցիներին և Ստեփանոս Անջեցուն (Ազգապատում, մաս Բ., էջ 2263)։

ԺԶ դարի պատմիչ Հասան բեկ Ռումլուի վկայությամբ, Շահ Թահմազը իր հիջրեթի 955 թվականի ռամազան ամսին բանակով ապաստանում էր Երզնկայի շրջակայքը. նույն ամսի 10-ին (1548 — հոկտ. 13) նա դուրս է գալիս Երզնկայից և շավվալ ամսի սկզբներին (նոյ. 3—6) իջևանում է Էջմիածնում (տես A chronicle of the early Safawis being the Ahsan'ut-tawarikh of Hasan-i-Rumlu, Edited by C. N. Seddon, Baroda, 1931 հ. Ա., պարսկերեն բնագիր, էջ 334)։ Շահը Էջմիածնում մնացել է շուրջ մեկ ամիս, որի ընթացքում նա հյուրընկալվել է Միքայել կաթողիկոսի կողմից, իսկ վերջինս օգտագործել է այս առիթը հատուկ հրովարտակով նորից վերահաստատելու համար Էջմիածնի իրավունքները հրովարտակում հիշված թեմերի վրա։

Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում մի քանի անգամ, անդրադառնալով Էջմիածնի աթոռին ենթարկվող թեմերի հարցին, վկայակոչում է սույն հրովարտակը և վերոհիշյալ պատճենը ու շեշտում, որ Միքայել Սեբաստացու ձեռք բերած հրովարտակը կարևոր նշանակություն է ունեցել Էջմիածնի իրավունքների և ազդեցության ամրապնդման հարցում, որ մինչև այդ Աղվանից կաթողիկոսները սեփականել էին Նախիջևանի, Գեղարքունյաց, Ղափանի, Աղստևի և Լոռվա վիճակները, իսկ Աղթամարի կաթողիկոսները Խոյն ու Սալմաստը («Ջամբռ», էջ 20, 78, 210), և այս հրովարտակով միայն դրանք նորից անցնում են Էջմիածնի տնօրինության տակ։ «Ջամբռ»-ից պարզվում է նմանապես, որ այս հարցի շուրջը սուր հակասություններ են առաջացել և լուրջ պայքար է ծավալվել Էջմիածնի և Գանձասարի ու Աղթամարի կաթողիկոսների միջև։ Նա մեծ կրքով արձանագրում է, որ «Այս Միքայելս նախապէս ճմլեաց զկզակս Աղուանից և Ախթամարու

կաթուղիկոսացն, որք կամէին ստնածել յԱթոռս սուրբ Էջմիածին» (Անդ, էջ 20)։

Վավերագիր 14.— *Պատճենի հարազատության մասին վկայող մակագրության մոտ գրված կնիքի վրա կարդացվում է 1060 (1650) թվականը, որից պարզվում է, որ պատճենը հանված է ԺԷ դարի 50-ական թվականներին։ Վավերագրի մյուս էջի վերին աջ անկյունի պատռված մասում եղել է հայերեն մակագրություն, որից պահպանված մի քանի բառերը առանձին միտք չեն արտահայտում։*

Վավերագիր 15.— *Սույն պատճենը հանված է ԺԷ դարում, վնասված տեղեր չունի և գտնվում է բարվոք վիճակում։ Վավերագրի եզրերից երևում է, որ ժամանակին նորոգված է եղել և շուրջը թղթի երիզ փակցվել։*

Հրովարտակը շարադրված է Շահ Իսմայիլի կողմից 1510 թվականին տրված հրովարտակի հիման վրա (վավերագիր № 11) և փաստորեն կրկնում է նրա բովանդակությունը։ Սակայն, ինչպես այդ մասին նշված է հրովարտակի սկզբում, հարկ է եղել իրողությունը ստուգել դիվանական դաֆթարներից։ Գյուղերի ցուցակը տրված է ճիշտ նույն հերթականությամբ, սակայն հիշված են միայն գյուղերի ու նահիաների անունները, առանց նշելու վիլայեթները (գուցե վերջիններիս սահմանների փոփոխման պատճառով)։

Պահպանվել է նույն հրովարտակի մի այլ պատճեն (թղթ. 2ա, վավ. № 16բ, մեծ. 50×19 սմ, գիր՝ շիքասթե), որը հավանաբար հանված է ԺԷ դարի 70—80-ական թվականներին, որովհետև մյուս էջում պատճենի հարազատությունը հաստատող կնիքների վրա կարդացվում են 1075 (1664—1665), 1076 (1665—1666) և 1089 (1678—1679) թվականները։

Այս պատճենի հակառակ էջի վրա կան հետևյալ մակագրությունները.

1. (مهر) هو—قوبل باصله الارفع المطاع الاعلى — *Համեմատված է բարձրագույն և հպատակության արժանի իսկականի հետ (կնիք)։*

2. (مهر) مقابله شد — *Համեմատվեց։ (Կնիք)։*

3. (مهر) مقابله شد — *Համեմատվեց։ (Կնիք)։*

4. ثبت شد. محل مهر — *Արձանագրվեց։ Կնիքի տեղը։*

Հիշատակության արժանի են նաև տարբեր ժամանակներում կատարված հետևյալ հայերեն մակագրությունները.

1. «*Շահ Թամազի* սաֆտի հուքմի սաւատն է, սատրի մօհրով»։

2. «*Շահ Թամազի* սաւադն է վախմ *գիւզօրէից ադադաւ*»։

Վավերագիր 16.— *Այս պատճենը շարիաթական-նոտարական պատճեն չէ և հնագրական նշաններից պետք է եզրակացնել, որ հանված է ԺԷ դարում։*

Շահ Թահմազ Ա-ից սկսած հաճախ հրովարտակների աջ լուսանցքի վերին մասում Սեֆյան շահերը հիշում էին իրենց հոր, երբեմն նաև պապի անունները։ Այդ անում էին հատկապես այն դեպքում, երբ հրովարտակը տրվում էր ժամանակին նրանց հոր կամ պապի կողմից տրված մի այլ հրովարտակի հիման վրա։ Այս տեսակետից սույն հրովարտակը Մատենադարանում գտնվողներից հնագույնն է, որտեղ Շահ Թահմազը հիշում է իր հորը, քանի որ, ինչպես պարզվում է հրովարտակի սկզբում գրված խոսքերից, այն տրված է «Ջամշիդի փառքն ու Սողոմոնի գիրքն ունեցող արքայի» (իմա՝ Շահ Իսմայիլ Ա-ի) հրովարտակի հիման վրա։

Պահպանվել է նույն հրովարտակի մի այլ պատճեն (թղթ. 4, վավ. № 2, մեծ. 25×14 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ), որը արտաքուստ ավելի հին է երևում, սակայն գրության ձևից ու այլ հնագրական նշաններից երևում է, որ այն ավելի ուշ է հանված։ Այս երկու պատճենների մեջ էական տարբերություն չկա, բացի մի բառից, որի ճիշտ ընթերցվածքը գտնում ենք այս երկրորդ պատճենում։ Հրովարտակի այն հատվածում, ուր ասված է. «Դարալու Շամլղի քյադխուդաներն ու ռայաթները ոչ մի դեպքում այդ հարցերում չմիջամտեն» և այլն, առաջին պատճենի մեջ (թղթապանակ 1ա, վավ. № 13) պարսկերեն دره‌لو شاملق *(Դարաշամբ անվան թուրքերեն ձևը) գրությունը ընթերցված է* درباره شاملق *որ նշանակում է «շամլղի մասին»։ Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, բնագրի իմաստը աղավաղվում է։ Խոսքն այստեղ վերաբերում է այն բանին, որ Կարիդ, Մահլազան և Կորուղ գյուղերը վեճի առարկա են եղել Մակվի Թադեոս առաքյալի և Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի կամ Մաղարդա վանքի միջև։ Իսկ այս հրովարտակով վերջնականապես որոշվում է, որ դրանք մտնում են Թադեոս առաքյալի վանքի (Ղարաքիլիսա) վիճակի մեջ և այդ գյուղերի ռայաթները իրենց եկեղեցական տուրքերը հիշյալ վանքին պետք է հատուցեն։ Ուստի Դարաշամբի հայ համայնքի ռայաթներն ու քյադխուդաները*

իրավունք չունեն այդ գյուղերի բնակիչներին ևս իրենց հետ հաշվել և իրենցից գանձվող տուրքերը նրանց վրա ևս բաշխել:

Ուշադրության արժանի են առաջին պատճենի մյուս էջի վրա կատարված հետևյալ հայերեն մակագրությունները.

1. «Որ հարկ չէ ցոյց տալ. 114»:

2. «Շահ Սէֆու (!) ռաղամի սաւատն է: *Զայս գիր ցոյց մի տար. Արքայունա* սունուրի սաւատն *է»:*

Ինչպես երևում է հետագայում իրադրությունը փոխվել է և հրովարտակում շարադրվածները այլևս օգտակար չեն եղել այն ստացողի համար: Ուստի և մակագրողը խորհուրդ չի տալիս այդ ցույց տալ պետական պաշտոնյաներին:

Վավերագիր 17.— *Պատճենը հանված է ԺԷ դարի 70—80-ական թվականներին: Համապատասխան կնիքների վրա կարդացվում են՝ 1076 (1665—1666), 1077 (1666—1667) և 1089 (1678—1679) թվականները:*

Տաթևի վանքապատկան գյուղերի մասին ԺԶ դարում տրված այս վերջին ցուցակում, նորից Բնունիս և Թաս գյուղերը միասին են նշված, իսկ Տաշու գյուղը հիշատակելիս ավելացված է նաև նույն գյուղի նոր անունը՝ Մալդաշ: Սա անշուշտ հետևանք է այն բանի, որ ինչպես հիշված է սադրի վճռի սկզբում, այն գրելիս նախօրոք աչքի են անցկացվել վանքի ստացած բոլոր հրովարտակներն ու գոյություն ունեցող կալվածագրերը և այլ բազմաթիվ փաստաթղթեր, հատկապես հաշվի են առել նաև տեղում կատարված ստուգումներն ու հավաքած վկայությունները:

Վավերագիրը ռեստավրացիայի է ենթարկված ԺԸ դարում և գտնվում է բարվոք վիճակում:

Վերին մասում կատարված է հետևյալ հայերեն մակագրությունը. «Շահ Թամազի մուսալ ճուքմի սաւատն *է,* սատրի մօճրօվճ»:

Վավերագիր 18.— *Այս հրովարտակը նույնպես թարգմանաբար լույս է տեսել Սարգիս Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» ուղեգրության երկրորդ հատորի հավելվածում: Պատճենը հանված է նույն ձևով, ինչ ձևով որ հանված են №№ 3 և 6 հրովարտակների պատճենները՝ մաքուր սպիտակ թղթի վրա, մուգ սև թանաքով. գտնվում է բարվոք վիճակում: Կնիքների և մյուս մակագրությունների պատճենները ավելի խնամքով են հանված:*

Վավերագրի մյուս էջի ամենավերին մասում կա հետևյալ հայերեն մակագրությունը. «Շահ Թահմազի ըռաղամն *է Գրիգոր կաթուղիկոսին: Գոյ ազգարանութիւն: Տաճկաց ۹۷۷—977. Արցախ»:*

Այս և № 6 հրովարտակի մյուս էջի վրա կատարված հայերեն մակագրությունները գրված են նույն անձնավորության կողմից: Առաջին հայացքից անհասկանալի է այդ մակագրությունների վերջում ավելացրած «Գոյ ազգարանութիւն» խոսքը: Դա, ըստ երևույթին, ասված է այն իմաստով, որ հրովարտակի մեջ կա հիշատակություն Հասան-Ջալալյանների ազգաբանության մասին: Իրոք, այս հրովարտակում բավական մանրամասն տրված է Գանձասարի Աթոռակեաս Բ կաթողիկոսից հետո նրան հաջորդած կաթողիկոսների հաջորդական ցուցակը: Դժբախտաբար չի պահպանվել Աթոռակեաս Բ-ի Շահ Իսմայիլ Ա-ից ստացած հրովարտակը, որը հրապարակված պետք է լիներ 1516 թվականին: Չի պահպանվել նաև Աթոռակեսի եղբորորդու Սարգիս Ա Աշլաղեցու Շահ Թահմազ Ա-ից ստացած հրովարտակը, ուստի և հնարավոր չէ պարզել, թե վերջինս երբ է հաջորդել իր հորեղբորը:

Սարգիս Ա-ն վախճանվել է 1554 թվականին. նրան հաջորդել է իր եղբայր Մեհրաբ բեկի որդի Գրիգորը, որ ինչպես նշված է հրովարտակում, 1555 թվականին ներկայացել է շահին և ստացել է իր կաթողիկոսության հրովարտակը:

Վավերագիր 19.— *Հրովարտակն արտագրված է մի մատյանում, որի մեջ ամփոփված են Էջմիածնի և Երևանի խանության մեջ գտնվող մի շարք այլ վանքերի պատկանող կալվածների, տարբեր ժամանակներում գրված, կալվածագրեր ու պարսկերեն այլևայլ փաստաթղթեր: Մատյանը գրված է ԺԹ դարի երկրորդ կեսից ոչ շուտ: Նրա մեջ արտագրված են նաև այնպիսի վավերագրեր, որոնց բնագրերը այժմ պահպանվում են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում: Սակայն կան նաև զգալի թվով վավերագրեր, այդ թվում նաև սույն № 19 վավերագիրը, որոնց բնագրերը չեն պահպանվել:*

1576 թվականին, երբ Շահ Թահմազ Ա-ի մահից հետո նրան հաջորդեց որդին՝ Իսմայիլ Բ-ն, վերջինիս հրամանով կազմվեց մի արտակարգ հանձնաժողով, որին մասնակցում էին Իսմայիլի եղբայր Միրզա Իբրահիմը, Երևանի բեկլարբեկ Մուհամմադիխան Թոխմախ Ուսթաջլուն և վեզիր Միրզա Շուքրուլլան: Այս

հանձնաժողովին հանձնարարված էր երկու ամսվա ընթացքում քննել բոլոր գանգատներն ու բողոքները և համապատասխան վճիռներ կայացնել: Իսքանդար Մունշու վկայությամբ առանձնապես բարդություններ էին առաջացել հայերից գանձվող ջիզյայի գումարների շուրջ («Թարիխ-ե ալամարա-յե աբբասի» հ. Ա, Մատենադարանի պարսկերեն ձեռագրեր, № 11, էջ 199ա): Շարաֆ-խան Բիթլիսին էլ «Շարաֆնամե»-ում վկայում է այն մասին, որ Շահ Թահմազի թագավորության վերջին տարիներին Ատրպատականի և Անդրկովկասի «խարաջն» ու «ջիզյան» 7 տարի ապառիկ էր մնացել («Շարաֆնամե», հ. Բ, էջ 251—252): Մուհամմադի-խան Թոխմախի մասնակցությունը այս հանձնաժողովին ենթադրել է տալիս, որ վիճելի խնդիրների մեծ մասը վերաբերել է Երևանի բեկլարբեկության ենթակա շրջաններին:

Իսքանդար Մունշու մոտ պահպանված է նաև այդ հանձնաժողովի կողմից տրված վճիռների (امردیوان اشرف) թղթային, կնիքի բովանդակության և այլ տարբերանշանների նկարագրությունը, որը լիովին համապատասխանում է սույն վավերագրին:

Հանձնաժողովի կողմից տրված բազմաթիվ վճիռներից պահպանված այս հետաքրքիր նմուշը գալիս է ապացուցելու, որ իրոք Շահ Թահմազի թագավորության վերջին տարիներին աշխատավոր գյուղացիությունը, օգտվելով երկրում ստեղծված խառն վիճակից, բազմիցս ըմբոստացել է և ինչպես առանձին անհատներով, այնպես նաև ամբողջ համայնքով հրաժարվել է կատարել իր պարտավորությունները կալվածատիրոջ նկատմամբ:

Ի տարբերություն մյուս վանքերի, Հավուց-Թառի Ամենափրկիչ վանքի կալվածները վակֆային սեփականություններ չէին համարվում, և կալվածագրերում արձանագրված էին, որպես Զաքարիա վարդապետի սեփական մուլքեր: Այդ առանձնահատկությունը նկատել է նաև Սիմեոն կաթողիկոս Երևանցին: Խոսելով Զաքարիա վարդապետի մուլքերի մասին, նա գրում է.

«Արդ Զաքարիա վարդապետս գայսասիկ ի յանուն յիւր անունն առնու, և զանուն Ամենափրկչին ոչինչ յիշէ ի գաղալայօջն, և զվախմ անուն ինչ ոչ գրեցուցանէ. որոյ պատճառն է, զի սոքա (Զաքարիայի նախնիները — Հ. Փ.) ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէ-

պէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք, և իւրեանց էր համարեցեալ գեօղն և վանքն առանց խտրութեան: Վասն որոյ և ինքն մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուլքս, թէպէտ յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութենէ» («Ջամբռ», էջ 277):

Վավերագիր 20.— Վավերագրի սկզբի «حکم عالی شد — Բարձր հրամանագիրս հրապարակվեց» խոսքերը և այն փաստը, որ կնիքը դրված է միայն հրամանագրի վերջում, թվականի վրա, իրավամբ ենթադրել է տալիս, որ հրամանագիրը տրված է տվյալ շրջանի բարձրագույն իշխանության կողմից: Որովհետև Ազատ-Ջիրանի մահալը մտնում էր Նախիջևանի խանության սահմանների մեջ, իսկ Նախիջևանի օլքան ԺԶ դարում ուղղակի ենթարկվում էր Թավրիզի բեկլարբեկին կամ ամիր-ուլ-ումարային, ուստի պետք է կարծել, որ հրամանագիրը տրված է վերջինիս կողմից: Կնիքը թեև բավական պարզ է, սակայն հնարավոր չէ ճշտել տիրոջ անունը: Կենտրոնական մասում «بنده شاه ولایت — ٩٨٦ — Երկրի տիրոջ ծառա. 986» գրությունից բացի, կա նաև կնիքի տիրոջ անունը ներկայացնող այսպիսի حماس մի գրություն, որը դժվար է որևէ անձնանունի նմանեցնել: Պարզ չէ նմանապես, թե այդ թվականներին ով էր Ադրբեջանի կամ Թավրիզի բեկլարբեկը:

Ջնայած իր հնության, վավերագիրը լավ է պահպանվել, բնագիրը անվթար է և միանգամայն ընթեռնելի:

Մյուս էջի վրա կա հետևյալ հայերեն մակագրություն. «վանքիս մուլքերին համար է, որ ինչ մուլք որ Ագուլիս կայ մալն ագուլեցիք տան»:

Վավերագիր 21.— Վավերագրի պարսկերեն բնագիրը աղճատված է և գրված է քերականական ու ուղղագրական աղաղակող սխալներով: Այդ պատճառով մենք նպատակահարմար համարեցինք բնագիրը իր տեղում, նախ տալ այնպես ինչ որ կա, իսկ հաջորդաբար՝ տալ նաև մեր կողմից խմբագրված ու սրբագրված տեքստը, պահպանելով լեզվի արտահայտչական և ոճական առանձնահատկությունները:

Մատենադարանում պահպանվում է նաև նույն փաստաթղթի մի այլ պատճեն, գրված նույնպիսի անգրագետ և խառն գրությամբ (թղթ. 1ա, № 1բ): Պարսկերեն բնագիրը կազմելիս

որոշ տեղերում օգտագործել ենք նաև այս պատճենը։ Սակայն բնագրի համար նպատակահարմար գտանք հիմք ընդունել № 1ա-ն, որովհետև նրա վերջում մանրամասն խոսվում է վավերագրի շարադրման ժամանակի ու հանգամանքների մասին. նշված է, թե որտեղ, երբ և ում նախաձեռնությամբ է կազմվել այն և այլն։ Իսկ № 1բ-ն ներկայացնում է միայն «Պայմանագրի» տեքստը. թվականը, վայրը և շարադրման հանգամանքները չեն նշված և կնքված է միայն մի անընթեռնելի կնիքով։ Պետք է ենթադրել, որ իր գրությամբ, թղթի որակով և արտաքին այլ նշաններով № 1ա բնագրին չափազանց նման այս երկրորդ փաստաթուղթը գրի է առնվել նույն ժամանակներում, հավանաբար Վասպուրականում գտնվող մի այլ վանքի համար։ Երկու վավերագրերն էլ փակցված են կանաչ գույնի նուրբ մետաքսյա կտորի վրա։

Սույն վավերագրի մեջ, ինչպես տեսանք, ասված է, որ նրա բովանդակությունը վերցված է «Մուհամմադ մարգարեի գրած պայմանագրից», սակայն մենք այն դնում ենք ԺԶ դարի վավերագրերի շարքում, որովհետև Ոստանի հաքիմ Կարախան բեկի կողմից, նոր իրադրության պայմաններում, Աղթամարի կաթողիկոսարանի շահերին համապատասխան այդ կարծեցյալ «Պայմանագիրը» վերաշարադրված է 1583 թվականին։ Այս տեսակետից էլ, այն կարող է դիտվել նաև որպես այդ ժամանակի հարաբերությունները արձանագրող մի փաստաթուղթ։

Մի կողմ թողած ավելի վաղ շրջանի հայ պատմիչների վկայությունները հայերի և արաբ զորականների միջև կնքված առանձին պայմանագրերի մասին, Սամվել Անեցու հաղորդած տեղեկություններից երևում է, որ դեռևս ԺԲ դարում և ավելի առաջ, արդեն գոյություն են ունեցել նման «պայմանագրեր»։ Սակայն սխալ կլիներ այս վավերագիրը դրանցից որևէ մեկի պարզ պատճենը համարել։ Իրականում, սա մի կոմպիլատիվ բնույթի կեղծ փաստաթուղթ է, որը թեև իր բովանդակությամբ կապվում է նախորդ դարերի այս կարգի «պայմանագրերի» հետ, սակայն հետագայի ընդօրինակող-կազմողները այնքան են շեղվել նախորդ բնագրերից, կատարելով բազմաթիվ հավելումներ, հարմարեցնելով օրվա պահանջներին, որ այս վիճակում չի կարելի սույն վավերագիրը դիտել, որպես ԺԱ—ԺԲ դարերից կամ ավելի վաղ ժամանակներից մեզ հասած փաստաթուղթ։

«Պայմանագրի» մեջ հիշատակություն կա Սահակ կաթողիկոս Ձորափորեցու Աբդ-ուլ-մելիք ամիրայի կողմից Հայաստան արշավող Մուհամմադ ամիրային ընդառաջ գնալու և արշավանքը կանխելու մասին (տես Ղևոնդ, էջ 28—30, հմմտ. Դրասխանակերտցի, էջ 95—97, Գանձակեցի, էջ 60—61 և այլն)։ Ընդ որում Մուհամմադ ամիրան ներկայացված է որպես Մուհամմադ մարգարե։ «Պայմանագրի» կեղծողները ի նկատի են ունեցել նաև Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուավիա իբն-Սեֆյանի միջև 652 թվականին կնքված դաշնագիրը (տես Սեբեոս, էջ 140), ինչպես նաև Սամվել Անեցու անհայտ ժամանակի վերաբերող վկայությունը ոմն Մուհամմադի հետ կնքած պայմանագրի մասին, ըստ որի վերջինս «անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնէութիւն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առնել Դ (4) դրամ և Գ (3) մոթ խորբալ (հացահատիկ) և ձիաւորական մի և պարան մի մազէ և ձեռնարար մի, իսկ ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն» (Սամվել Անեցի, էջ 82)։

ԺԶ դարի առաջին քառորդում, երբ վերջնականապես Արևմտյան Հայաստանը անցավ օսմանյան Թյուրքիայի տիրապետության տակ և քրդական շատ ցեղերի պարագլուխներ ընդարձակ տիրույթներ (օջաքլըք, արփալըք) ստացան, երկրում ծայր առան հայ ռայաթների սանձարձակ հարստահարությունները, հատկապես սյուննի մոլեռանդ շեյխերի և այլ կրոնական առաջնորդների կողմից։ Կոստանդնուպոլսի հայ հոգևորականությունը, ավելի մոտ կանգնած լինելով պետական ղեկավար շրջաններին և արքունիքին, փորձում էր նման փաստաթղթերով սանձահարել նրանց, նորմավորել հայ ռայաթների պարտավորությունները պետության հանդեպ և միաժամանակ ամրապնդել իր արտոնյալ վիճակը։ Նման պայմանագրերի բազմաթիվ պատճեններ ԺԶ դարում ցրված են եղել Արևմտյան Հայաստանում և Օսմանյան պետության այլ հայաշատ կենտրոններում։

Այս կեղծ փաստաթղթերը հաճախ դրական դեր էին խաղում և դրանցով հնարավոր էր լինում մեղմել այս կամ այն իշխանավորի ախորժակները։ Գրիգոր Դարանաղցին գրում է, թե ինչպես մի անգամ Կոստանդնուպոլսի ս. Սարգիս եկեղեցու իրավունքները վերահաստատելու համար ինքը, մի քանի այլ հոգևորականների հետ, խնդրագիր է ներկայացրել կենտրոնական իշ-

խանությանը։ Խնդրագրին կցված է եղել նաև «յալէ մեծ մանշուրն» (عالی منشور)՝ որ իւրեանք ահտնամա (عهدنامه — պայմանագիր) ասեն»։ Այնուհետև նա նկարագրում է, թե ինչպես թյուրք բարձրաստիճան պաշտոնյաները հավատում էին դրան և ընդունում որպես սրբազան փաստաթուղթ. «Գրեալ էաք ի մէջ արզուհալին (խնդրագիր) զօրպիսութիւն նորա, և յորժամ որ ընթերցան զարզուհալն խնդրեցին զմանշուրն, և հանեալ տուաք ի նոսա, և առեալ վերծանեցին և յոյժ սիրով ընդունեցին և համբուրեցին ամենեքեան վազիրնին և ետուն առ մեզ» (Դարանաղցի, էջ 133)։ Մի այլ տեղ Դարանաղցին հիշատակում է այն մասին, որ երբ 1622 թվականին ընդհանուր մանկաժողով էր հայտարարված, Ամիդի մի քանի թյուրք բարձրաստիճան ազնվական անձինք, որոնք լավ էին տրամադրված տեղի հայ բնակչության նկատմամբ, վերցնում են «յալէ գիր»-ը (պայմանագիրը) և տանում ցույց տալիս Սուլթան Մուրադին ու խնդրում նրան ետ վերցնել իր հրամանը (Նույն տեղը, էջ 211)։

Բայց միշտ չէր, որ այդ կեղծիքը ընդունվում էր որպես վավերական փաստաթուղթ։ Ամեն դեպքում դա կախված էր այն բանից, թե տվյալ սուլթանը, փաշան կամ պաշտոնյան անձամբ ինչպես էր տրամադրված հայ ռայաթների նկատմամբ։ Հայտնի է, որ ԺԸ դարի սկզբում Կոստանդնուպոլսի Ալեքսիք պատրիարքը նույնպես Շեյխ-ուլ-իսլամին ցույց է տվել հիշյալ «պայմանագրի» ոսկեգիր պատճենը, նշելով, որ դրա իսկականը գտնվում է Երուսաղեմում, սակայն դրանից շոշափելի արդյունք չի ստացել (Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 120)։

Արևելյան Հայաստանում ևս գոյություն են ունեցել նման կեղծ «պայմանագրերի» պատճեններ, որոնց մասին «Ջամբռ»-ում և այլ աղբյուրներում թեև հիշատակությունների չենք հանդիպել, սակայն Մատենադարանում կան 18-րդ դարի 60-ական թվականներին Աստրախանում պարսկերեն լեզվով գրված մի «պայմանագրի» 4 պատճեններ, որոնք իրր թարգմանված են քուֆի գրությամբ գրված արաբերեն բնագրից։ Այստեղ արդեն «պայմանագիրը» վերաբերում է ոչ թե մահմեդականների մարգարե Մուհամմադին, այլ շիաների առաջնորդ Ալիին։ Այս պատճեններից երեքի վրա գրված է, որ այն արտագրված է Պետերբուրգում գտնվող պատճենից։ «Պայմանագրի» այս պարսկական վարիանտը գրված է ավելի գրագետ լեզվով, սակայն նկատվում է, որ իրոք այն թարգմանված է արաբերենից. շատ տեղերում պահպանված է նախադասությունների արաբերենին հատուկ շարադասությունը։ Գրության սկզբում ասված է, որ «Սա այն պայմանագրի թարգմանությունն է, որ կնքել է Հիշամ իբն-Աբդ իբն-Վակկասը Ալի իբն-Աբիթալիբի հանձնարարությամբ հիջրեթի 40 թվականի սաֆար ամսին) (660 թ. հունիս-հուլիս), (տես Մատենադարանի անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 80դ, վավ. № 38։ Այս մասին տես նաև Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 121)։

«Պատմութիւն Նոր Ջուղայու» աշխատության հեղինակ Հ. Տեր-Հովհանյանը ձեռքի տակ ունեցել է նման մի «պայմանագրի» բավական ընդարձակ և հետաքրքիր օրինակ, որի հայերեն թարգմանությունը հետևյալ վերնագրով զետեղել է իր գրքի 2-րդ հատորում. «Վավերացեալ օրինակ պայմանագրոյ մարգարէին Արաբացւոց, տուեալ առ Ազգն Քրիստոնէից կամ Հայոց ի չորրորդում ամի հիջրեթի, որոյ այս է թարգմանութիւն» (անդ, էջ 147—153)։

Պարսկերեն վավերագրերի ֆոնդում, խիստ քայքայված վիճակում, կա նաև նույն «Պայմանագրի» արաբերեն մի ավելի համառոտ պատճեն (թղթապանակ 1ա, վավ. № 1գ, մեծ. 77×22, գիր՝ նասխ), որի տեքստը մեծապես ճմռված է, սկզբի և վերջի մասերը պատռված են, իսկ գրությունը շատ տեղերում ջնջված։ Սրա ժամանակը նույնպես անորոշ է։

Վավերագիր 22.— *Սույն հրովարտակը Սեֆյան Սուլթան Մուհամմադ Խուդաբանդայի (1578—1587) Մատենադարանում պահպանվող միակ հրովարտակն է, որի միայն վերևի մասից մոտ 3 սմ կտրված է։ Բուն տեքստը դրանից չի տուժել. հավանաբար այդ մասում եղել է «الملك لله — Իշխանությունն աստծունն է» խոսքը։ Սակայն մյուս էջի մակագրության սկզբից պակասում է մոտ երեք բառ։*

Հրովարտակի տեքստը գրված է պարզ շիքասթե գրությամբ և ամբողջությամբ վերծանելի է։ Սակայն մյուս էջի հարկային հաշիվների մասին կատարված մակագրությունը գրված է բաց գույնի թանաքով, նույնպես շիքասթե, բայց չափազանց բարդ և անընթեռնելի գրությամբ։ Գրությունը տեղ-տեղ ջնջված է և հազիվ նշմարվում են բառերի հետքերը։ Հարկային գումարները արտահայտված են «սայաղ»-ով և ընթերցվում են մեծ դժվարությամբ։ Չնայած դրան մեզ հաջողվեց վերականգնել այս հա-

վերագրության ամբողջ տեքստը, որը կարևոր է իր ժամանակի հարկային սիստեմի ուսումնասիրության համար:

Հրովարտակի սկզբում գրված շահի կնիքի վրա մեծ գրչությամբ կարդացվում է «Սուլթան Մուհամմադ» անունը, իսկ մյուս էջի կնիքները թղթի մաշվածության հետևանքով անընթեռնելի են դարձել:

Վավերագիրը ռեստավրացիայի է ենթարկված և գտնվում է բարվոք վիճակում:

Վավերագիր 23.— Այս հրովարտակը տրված է Քարթլի Սիմեոն Ա. Թագավորի (1558—1600) կողմից: Նրա մուսուլմանական անունը Մահմուդ միրզա էր, դրա համար էլ թուղրայի վրա այսպես է գրված:

Քարթլի թագավորները պարսիկների կողմից կոչվում էին «Վալի-յե Գուրջիստան», այսինքն՝ Վրաստանի վալիներ: Վալիների կողմից տրված հրովարտակները սովորաբար գրված են լինում երկու լեզվով, թղթի երկու էջի վրա, մի էջում պարսկերեն, իսկ մյուսում՝ վրացերեն:

Սիմեոն Ա. Թագավորից Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում այս միակ հրովարտակն է պահպանված, որը արժեքավոր է հատկապես իր բազմաթիվ հարկային և վարչական տերմիններով: Գրության ձևով և ոճով չափազանց նման է դարասկզբին հրապարակված Շահ Իսմայիլի հրովարտակներին: Վավերագիրը ԺԷ դարում նույն գույնի թղթով ռեստավրացիայի է ենթարկված: Պարսկերեն և վրացերեն բնագրերը անվթար են և միանգամայն ընթեռնելի:

Վավերագրի առաջին էջի վերին մասում կա ԺԹ դարում կատարված մակագրություն. «44. Վրաց Սիմէօն թագաւորից ազատութեան թուղթ քահանաներին»:

Նույն հրովարտակը ժամանակին սիրով տրամադրել ենք հարգելի ընկեր Վ. Ս. Փութուրիձեին զետեղելու համար իր կազմած «Վրացա-պարսկական պատմական վավերագրեր» ժողովածուի մեջ, որը լույս տեսավ 1955 թ.: Հրովարտակի վրացերեն բնագիրը և պարսկերեն մասի վրացերեն թարգմանությունը տես (ქართულ-სპარსული ისტორიული საბუთები, Թբիլիսի 1955, էջ 458—460):

ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

Աբվաբ-ե ջամ՝ — ابواب جمع (արաբ.)— Բառացի նշանակում է «հանրագումարային գործեր»: Այսպես կամ միայն «ջամ՝— جمع» էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրում, թե տվյալ օբյեկտը ընդհանուր գումարով որքա՞ն հարկ պետք է վճարի և դրանից որքանը ո՞ր հարկի հաշվից:

Ազդար — ازدر (պարսկ.)— Այս հարկային տերմինը հանդիպում է միայն Շահ Իսմայիլ Ա-ի 1505 թ. հրովարտակում (№ 9): Գրությունը այլ կերպ չի վերծանվում, իսկ այսպես նշանակում է «արժանի»: Ըստ երևույթին պետք է հասկանալ պետական պաշտոնյաներին և այլ բարձրաստիճան անձանց, նրանց դիրքին և աստիճանին «արժանի» պարտադիր կարգով հատուցվող «նվերը» կամ նվիրաբերությունը:

Ազնաուր — ازناور (վրաց.) — Վրացի ազնվական-ֆեոդալ

Ալաֆե — علفه — տես ալաֆե և ուլուֆե:

Ալաֆե և ուլուֆե — علفه و علوفه (արաբ.) — Տերմինը բաղկացած է «ալաֆ—علف» (խոտ) բառի եզակի և հոգնակի ձևերից: Ինչպես բառն ինքը ցույց է տալիս, դա այն տուրքն էր, որ ռայաթները պարտավոր էին հատուցել երթևեկող պետական պաշտոնյաներին, որպես նրանց ձիերի և գրաստների կեր: Այս տուրքը ինչպես նախապես հատուցվել է բնամթերքով (խոտ, գարման, գարի և այլն), սակայն հետագայում շատ դեպքերում այն փոխարինվել է դրամական տուրքով: «Ուլուֆե» տերմինը առանձին վերցրած հասկացվում էր նաև ընդհանրապես «կեր»-ի, զինվորականության տրվող ռոճիկի իմաստով:

Ահալի-Ե Շար' — اهالی شرع (արաբ.)— Մուսուլմանական բարձրագույն կրոնական դատական-օրենսդրական ատյանի՝ Շար'ի անդամներ:

Աղչե — آقچه (թուրք.) — Արծաթ դրամի միավոր, ինչպես ասված է № 20 վավերագրում 4 աղչեն կշռել է 1 մսխալ (մոտ 4,5 գրամ), ուրեմն մեկ աղչեն կշռում էր մոտավորապես 1.10 գր. արծաթ:

Աման — أمان (արաբ.) — Բառացի նշանակում է «ապահովություն»: Համաձայն մահմեդական օրենքների արաբական նվաճումների շրջանում, երբ իսլամական բանակը որևէ երկիր կամ քաղաք էր գրավում, այդ տեղի բնակչությունը, եթե նա մահմեդականություն չէր ընդունում, ենթակա էր կոտորածի, ավարի և գերեվարության: Իսկ եթե նրանք համաձայնվում էին փրկագին վճարել և դառնալ հարկատու, ապա նրանց «աման» էր շնորհվում, որից հետո նրանք կարող էին դավանել իրենց նախկին կրոնը:

Հետագա դարերում արդեն՝ «աման»-ի օրենքը կիրառվում էր առհասարակ բոլոր պատերազմների ժամանակ և հատկապես դիմադրություն ցույց տվող բերդերի բնակչության նկատմամբ, անկախ նրանց դավանանքից: Երբ պաշարվածները դադարում էին դիմադրություն ցույց տալ և համաձայնում էին որոշ փրկագին վճարել, ապա քաղաքը գրավող զինվորները իրավունք չունեին կողոպտելու և գերելու տվյալ քաղաքի կամ բերդի բնակչությանը:

Ամիլ — عامل (արաբ.) — «ամալ — عمل» (գործ) բառի ենթակայական ձևն է, որ նշանակում է «գործ կատարող», «գործադրող»: Հոգնակի ձևն է «ումմալ — عمال»: Դրանք այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքսերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի: Այս տերմինը թերևս համապատասխանում է Ժ—ԺԲ դդ. հայկական «ձեռնավոր» տերմինին: Նույն պաշտոնի համար գործածվում է նաև «ամալդար — عملدار» տերմինը:

Ամիր — أمير (արաբ.) — Բարձրաստիճան զորահրամանատար, քոչվորական ռազմական միավորումների առաջնորդ:

Ամիրթուման — امیر تومان (արաբ.-մոնղոլ.) — Իլխանության տիրապետության շրջանում ամբողջ երկրում կատարված էր նոր վարչական բաժանում, ըստ որի կազմվել էին առանձին նահանգներ, որոնք կոչվում էին «թուման», որ նշանակում է «տաս հազար»: Նահանգները այդպես էին կոչվում, որովհետև նրանցից յուրաքանչյուրի զինվորական նահանգապետը կամ «ամիրթումանը» պարտավոր էր պահանջված դեպքում 10 հազար զինվոր տալ: Ըստ երևույթին ԺԵ դարում ևս պահպանվել էին որոշ թումաններ, որոնց գլխավորող ամիրները շարունակում էին կոչվել «ամիրթուման»:

Ամրոցի իխրաջար — اخراجات قلعه «իխրաջաթ-ե կալ'ե» (արաբ.) — Տուրքեր, որոնք գանձվում էին մոտակա բերդերի և այնտեղ հաստատված բերդապահ կայազորների ծախսերը հոգալու համար:

Ավարիզ — عوارض — տես ավարիզաթ:

Ավարիզաթ — عوارضات (արաբ.) — «արիզե — عارضه» (պատահար) բառի կրկնակի հոգնակի ձևն է (عوارض—عوارضات): Այս տերմինի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով:

Արբաբ — ارباب (արաբ.) — «ռաբբ — رب» (տեր) բառի հոգնակի ձևն է, որ նույնպես օգտագործվում է «տեր» իմաստով: Այդպես էին կոչվում խոշոր կալվածատերերն ու գյուղատերերը: Այս տերմինը ավելի լայն տարածում ստացավ ԺԸ—ԺԹ դարերում և մինչև օրս էլ Իրանում խոշոր կալվածատերերը «արբաբ» են կոչվում: Համանիշներ՝ «մալիք», «մալլաք», «մուլքադար»:

Բահադուր — بهادر (մոնղոլ.) — Մոնղոլական արշավանքների շրջանում այսպես էին կոչվում նրանց ռազմական առաջնորդները՝ զորապետները: ԺԵ դարում այս էպիտետը տրվում էր միայն Կարա-Կոյունլու և հատկապես Աղ-Կոյունլու թագավորներին: Աղ-Կոյունլուների դինաստիան կոչվում էր նաև «բահադուրի» կամ «բայանդուրյան», որը գրվում էր նաև հրովարտակի սկզբում գրվող ու թագավորի անունը արտահայտող մոնոգրամի կամ «թուղրայի» մեջ, որպես թագավորի քաջության մասին

խոսող էպիտետ։ Այդ տրադիցիան շարունակվեց նաև Շահ Իսմայիլ Ա-ի ժամանակ, իսկ այնուհետև այս էպիտետն օգտագործվում էր շատ հազվադեպ և համարյա դադարեց գործածվելուց։

Բահրաչե — بهرچه (պարսկ.) — Այսպես էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից կալվածատիրոջն ու պետությանը վճարվող հողային ռենտան։ Տերմինի վերջում ավելացված «չե—چه» փոքրացուցիչ մասնիկը նրա բովանդակության մեջ փոփոխություն չի մտցնում և հանդիսանում է զուտ լեզվական երևույթ. ինչպես օրինակ «ղաբալչե — قبالچه» (կալվածագիր), «փարվանչե — پروانچه» (հրովարտակ), «վաքֆնամչե—وقفنامچه» (կտակագիր) և այլ բառերում։ Հողային ռենտայի պետությանը վճարվող մասը կոչվում էր «բահրաչե-յե դիվանի — بهرچهٔ دیوانی» (դիվանական բահրաչե), իսկ կալվածատիրոջը հասնող մասը «բահրաչե-յե մալիքանե — بهرچهٔ مالکانه» (կալվածատիրական բահրաչե)։

Բեկ — بیك (թուրք.) — Տեր, պարոն։ Տիտղոս, որ տրվում էր ավելի կրտսեր զինվորականներին և հատկապես քրդական և կըզըլբաշ ցեղերի (այմաղների) առաջնորդներին։

Բեկլարբեկ — بیکلربیک (թուրք.) — Սեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկներ»։ Այս անվան արաբերեն համանիշն է «ամիր-ուլ ումարա — امیر الامرا», պարսկական արտահայտությամբ՝ «միր-ե միրան — میر میران»։ Սահմանամերձ կուսակալությունները, որոնք անվանվում էին բեկլարբեկություններ (بیکلربیکی) չափազանց նման էին Արշակունյաց Հայաստանի բդեշխություններին և կոչված էին վտանգի դեպքում միավորելու մերձակա մյուս խանությունների զինական ուժերը, իսկ վերջիններս իրենց հերթին պարտավոր էին ենթարկվել բեկլարբեկին, որպես գլխավոր զինվորական հրամանատարի։

Իրանում ԺԶ—ԺԷ դարերում կային 13 բեկլարբեկություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնըվում Ադրբեջանի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխուր-Սաադի կամ Երևանի բեկլարբեկությունները։

Բեյթ-ուլ-մալ — بيت المال (արաբ.) — Բառացի՝ «գանձատուն» (իմա՝ «պետական գանձարան»)։ Այս տերմինը գործածության մեջ է եղել խալիֆաթի տիրապետության շրջանից, երբ արքունի գանձարանը կոչվում էր «Բեյթ-ուլ-մալ-և մուսլիմին — بيت المال مسلمين»։ Այնուհետև այս տերմինի տակ հասկացվում էին նաև պետական հարկերը, իսկ ավելի ուշ հարքունիս գրավվող և պետական սեփականություն դարձվող ամեն ինչ։ ԺԴ—ԺԵ դարերում և այնուհետև էլ կենտրոնական իշխանության կողմից երկրի տարբեր նահանգներում նշանակվում էին «Բեյթ-ուլ-մալի» հատուկ գործակալներ («ամիլ կամ ղազի-յե Բեյթ-ուլ-մալ — عامل یا قاضی بيت المال»), որոնք գանձում էին որոշ հոգևոր տուրքեր և զբաղվում էին անժառանգ մեռած քաղաքացիների ունեցվածքի և կալվածների հայտնաբերման, բռնագրավման և նրանցից ստացվող եկամուտների տնօրինման գործերով։

Բիգար — بیکار (պարսկ.) — Հողագործ գյուղացիության կամ ռայաթների պարտադիր անվճար աշխատանքը ամրությունների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ։

Բիթիկչի — بیتکچی (մոնղոլ.) — Իլխանության շրջանում այսպես էին կոչվում դիվաններում ֆինանսական-հարկային գործերով զբաղվող քարտուղարներն ու դպիրները։

Բհաթուր — տես բահադուր։

Բոլուք — بلوك (թուրք.) — «բոլմաք — بلمك» (բաժանել) բայից, որ նշանակում է «բաժանմունք», «ստորաբաժանում». օգտագործվում էր գավառի կամ շրջանի իմաստով։ Ժամանակակից պարսկերենում նշանակում է նաև «գյուղաքաղաք», «ոչ մեծ վարչական կենտրոն»։

Դաստանդազ — دست انداز (պարսկ.) — Տերմինը կազմված է «դաստ — دست» (ձեռք) գոյականից և «անդախթան — انداختن» (նետել) բայից և բառացի նշանակում է «ձեռք նետող», «ձեռք ձգող»։ Տուրքը վերաբերում է պետական պաշտոնյաների կողմից զանազան պատրվակներով ռայաթներից գանձվող տուրքերին, երբ նրանք, այսպես ասած, «ձեռք էին երկարում» ռայաթների ինչքին և ունեցվածքին և փորձում էին դրամ կամ այլ արժեքավոր իրեր շորթել նրանցից։

Դարուղա — داروغه (մոնղոլ.) — Գլխավոր ոստիկանապետ և հարկահան։

Դաֆթար — دفتر (արաբ.) — Տետր, մատյան։ Գլխավորաբար օգտագործվում էր հարկային մատյանների իմաստով. «Դաֆթար» կամ «Դաֆթարխանե» էր կոչվում նաև այն հիմնարկությունը, որտեղ պահվում էին հարկային մատյանները։

Դինար — دينار (արաբ.) — Արծաթ դրամի միավոր։ ԺԷ դարում 200 դինարը, որ կոչվում էր մեկ «աբասի», կշռում էր մոտ 7—9 գրամ մաքուր արծաթ։ 10,000 դինարը հավասար էր մեկ «թումանի»։

Դիվան — ديوان (արաբ.) — Պետական գործերի ատյան կամ գրասենյակ։ Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով։ Երբ ասում էին «դիվանական պարտավորություններ» («Թաքալիֆ-ե դիվանի — تكاليف ديوانى», «Հուկուկ-ե դիվանի — حقوق ديوانى» կամ «ավարիզ-ե դիվանի — عوارض ديوانى») հասկացվում էր ռայաթների հարկային պարտավորությունները պետության նկատմամբ, իսկ «դիվանի հողեր» («արազի-յե դիվանի — اراضى ديوانى») էին կոչվում այն հողերը, որոնք պատկանում էին պետությանը, և որոնց եկամուտները անմիջապես մտնում էին պետության գանձարանը կամ ռոճիկի դիմաց տրվում էին պետական պաշտոնյաներին ու զինվորականությանը։

Դիվան-ալ սադարաթ — ديوان الصدارت (արաբ.) — Կրոնական բարձրագույն առաջնորդի՝ սադրի ատյանը։

Դիվանական ավարիզ — عوارض ديوانى «ավարիզ-ե դիվանի» (արաբ.) — տես դիվան։

Զաքեդ — ճիշտը՝ զաքյաթ — زكوة (արաբ.) — Եկամուտի 1/40-ի չափով եկեղեցուն կամ մզկիթին վճարվող տուրք. հայերեն՝ «քառասնիկ»։

Զիմմի — ذمى (արաբ.) — Բառացի նշանակում է «պաշտպանյալ»։ Այդպես էին կոչվում քրիստոնյա և հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու։

Էթեմադ-ուդ-դովլե — اعتماد الدوله (արաբ.) — Բառացի նշանակում է «պետության վստահություն»։ Այդպես էր կոչվում առաջին վեզիրը, որը փաստորեն վարում էր պալատական մինիստրի պաշտոնը։

Էյդի — عيدى (արաբ.) — Ֆեոդալին, կամ տեղի պետական բարձրաստիճան պաշտոնյաներին մուսուլմանական մեծ տոներին (էյդ-ե ֆեթր, էյդ-ե ղադիր, էյդ-ե ղորբան) նվերների անվան տակ տրվող պարտադիր տուրք։

Ըռաղամ — տես՝ ռաղամ։

Թարըղ, ճիշտը՝ թարիխ — تاريخ (արաբ.) — Թվական. նաև պատմություն, ժամանակագրություն։

Թարխան — ترخان (մոնղոլ.) — Իլխանության շրջանից պահպանված տերմիններից է, որ նշանակում է «հարկային իմունիտետ վայելող». համանիշ է արաբերեն «մուաֆ» և «մուսալլամ» տերմիններին (տես)։

Թարհ — طرح (արաբ.) — Այսպես էր կոչվում պետական պաշտոնյաների կողմից բնակչության նկատմամբ կիրառվող այն հարկադրանքը, երբ ռայաթներին ստիպում էին որևէ ապրանք չնչին գնով զիջել իրենց և կամ, ընդհակառակը, որևէ ապրանք բարձր գներով գնել իրենցից։

Թաֆավութ-ե ջիզյա — تفاوت جزيه (արաբ.) — Բառացի՝ «ջիզյայի տարբերություն»։ Հայերից գանձվող գլխահարկի կամ «ջիզյայի» վրա ժամանակի ընթացքում բարդված գումարներ, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին առանձին և դիտվում էին որպես առանձին պարտավորություն։

Թիուլդար — تيولدار (թուրք.-պարսկ.) — Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան զինվորականներն ու պետական պաշտոնյաներն ու ամիրները, որոնք ռոճիկի դիմաց ստանում էին շրջանից, գյուղերից կամ առանձին գյուղից գանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի գանձման իրավունքը, որպես «թիուլ»։

Խոշոր թիուլդարներն իրենց տրված օբյեկտների բնակչության նկատմամբ, թիուլդարության ժամանակաշրջանում հաճախ ունենում էին նաև վարչական ու դատական իրավունք։

Թոբբե — توبره (պարսկ.) — Տոպրակ, հացահատիկի կամ ընդեղենի պարկ։

Թուղրա — طغرا (արաբ.) — Հրովարտակների սկզբում գըրվող և թագավորի, կրոնապետի կամ այլ բարձրաստիճան անձնավորության անունը պարունակող մոնոգրամ, որը գրվում էր իրար մեջ հյուսված, բարդ և դժվարընթեռնելի գրությամբ:

Թուման — تومان (մոնղոլ.) — 10.000 դինար (տես).

Իխրաջաթ — اخراجات (արաբ.) — Բառացի նշանակում է «ծախսեր»: Այդպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով ռայաթները պարտավոր էին հատուցել պետությանը կամ նրա պաշտոնյաներին:

Իթլաղ — اطلاق (արաբ.) — Բառացի՝ «հեռացում», «ուղարկում»: Տերմինը վերաբերում է պետական պաշտոնյաներին այս կամ այն հարկատու օբյեկտն ուղարկելուն, պաշտոնյաներ, որոնք իրենց ռոճիկները ստանում էին տվյալ օբյեկտից գանձվող հարկերի հաշվից: Այս առիթով նրանց ձեռքը տրվող հանձնարարական գրությունները կոչվում էին նաև «հավալե» (տես):

Իմամ — امام (արաբ.) — Մուսուլման, հոգևորական — առաջնորդ, կրոնապետ:

Խան — خان (մոնղոլ.) — «Ղան» (տեր, իշխան) տիտղոսն է, որով մեծարվում էին բարձրաստիճան զինվորականության ներկայացուցիչները: Պարսիկները այդպես էին կոչում նաև վրաց թագավորներին՝ «վալիներին»: Ավելի ուշ այս տիտղոսը դարձավ հատկապես խոշոր ֆեոդալ-նահանգապետների սեփականություն:

Խասսե-յե շարիֆե — خاصهٔ شریفه (արաբ.) — Այսպես էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած: Դրանք բոլորն ունեին հատուկ գործերի կառավարչություն, որ կոչվում էր «Սարքար-ե խասսե-յե շարիֆե» (سرکار خاصهٔ شریفه):

Խարաջ — خرج (արաբ.) — Արաբական տիրապետության շըրջանում այսպես էր կոչվում գլխավոր հողային հարկը: ԺԶ—ԺԸ դդ. այս տերմինը քիչ գործածական էր և հասկացվում էր բնակչությունից գանձվող մի շարք պետական հարկերի իմաստով (բացի գլխահարկից), որպես հավաքական հարկային տերմին:

Խարճ — տես խարաջ:

Խարջ — տես խարաջ:

Խոջա, ճիշտը՝ խաջե — خواجه (պարսկ.) — Այսպես էին կոչվում մեծահարուստ վաճառականներն ու դրամատերերը: Այն խոջաները, որոնք առևտրի բնագավառում ձեռք բերած հաջողությամբ սկսում էին թանկագին կալվածներ կամ «մուլքեր» գնել՝ հաճախ ազդեցիկ դիրք էին գրավում արքունիքում, զբաղեցնելով նույնիսկ ֆինանսների մինիստրի՝ «սահիբ դիվան»-ի (صاحب دیوان) պաշտոնը:

Խումս — خمس (արաբ.) — Բառացի՝ «հնգորդ», եկեղեցական տուրք:

Կոնալղա — قنلغه (թուրք.) — Ջաղաթայի լեզվով նշանակում է «օթևան»: Այսպես է կոչվել պետական պաշտոնյաներին, արքունի սուրհանդակներին (չափար — چاپار) և պաշտոնական գործերով երթևեկող այլ բարձրաստիճան անձանց հյուրընկալելու պարտավորությունը:

Հակկաբե — حقّابه (արաբ.-պարսկ.) — Տերմինը կազմված է արաբերեն «հակկ — حق» (իրավունք) և պարսկերեն «աբ — آب» (ջուր) բառերից և նշանակում է «ջրի իրավունք»: Այսպես էր կոչվում ջրի այն բաժինը, որ հատկացվում էր տվյալ հողամասի, հանդի, այգու և, առհասարակ, որևէ մշակելի տարածության ոռոգման համար:

Հասիլ — حاصل (արաբ.) — Հասույթ, բերք, որևէ կալվածից ստացված օգուտ, եկամուտ:

Հավալե — حواله (արաբ.) — Հանձնարարական գրություն, որը ստանում էին պետական պաշտոնյաներն ու զինվորականները Դիվանից և ներկայացնում էին այս կամ այն գյուղական համայքին կամ ստորին հարկային տեսուչներին, իրենց ռոճիկի դիմաց գրության մեջ նշված քանակությամբ կանխիկ դրամ կամ մթերք ստանալու համար:

Հաքիմ — حاکم (արաբ.) — Գավառապետ, քաղաքացիական դատավոր:

Հոկուկ-ե դիվանի — حقوق دیوانی (արաբ.) տես դիվան:

Հոքմ — حکم (արաբ.) — Հրամանագիր, բարձր կարգադրություն:

Հուքմ — տես հոքմ:

Ղաբալաթ — قبالات (արաբ.) — Կալվածագրեր, եզակի՝ «ղաբալե — قبالة»: Աղբյուրներում ավելի հաճախ պատահում է նույնպես հոգն. «ղաբալեջաթ — قبالجات» ձևով:

Ղալլե — غلة (արաբ.) — Հացահատիկ: Շահ Իսմայիլ Ա-ի 1506 թ. հրովարտակում (№ 10) գործ է ածված գյուղացիությունից գանձվող հողային ռենտայի իմաստով, որպես «բահրաչեհ»-ին (տես) համանիշ տերմին: Այս տերմինին հանդիպում ենք միայն հիշյալ եզակի վավերագրում: Հատկանշական է, որ ԺԹ դարի վերջերին և Ի դարի սկզբներին Հարավային Ադրբեջանում (Իրան) գյուղացիներից գանձվող պետական ռենտա-հարկը կոչվում էր «ղալլե» և հատուցվում էր բնամթերքով, իսկ կանխիկ դրամով գանձվող հարկը կոչվում էր «մալիյաթ», որը անշուշտ ծագում է նախորդ դարերի «մալ» կամ «մալօջհաթ» (տես) հարկային տերմինից:

Մադախիլ — مداخل (արաբ.) — Եկամուտ:

Մադրասե — مدرسة (արաբ.) — Մուսուլմանական հոգևոր դպրոց:

Մալ — مال (արաբ.) — Գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարելահողերից, ջրաղացներից, ձիթահանքերից, գութաններից, տներից, խանութներից և այլն: Մալը գանձվում էր ինչպես բնամթերքով, այնպես և կանխիկ դրամով: ԺԵ դարից սկսած «մալ» հարկի հետ միատեղ հիշվում է նաև «ջհաթ»-ը (տես «մալօջհաթ»):

Մալիք — مالك (արաբ.) — Սեփականատեր, մուլք ունեցող կալվածատեր: ԺԸ—ԺԹ դդ. այդպիսիք կոչվում էին նաև «մուլքադար — ملكدار»: Համանիշներ՝ «մալլաք», «արբաբ»:

Մալիքանե — مالكانه (արաբ.-պարսկ.) — Կալվածատիրոջ կամ մալիքին վճարվող հողային ռենտա: Համանիշներ՝ «բահրաչեհ», «ուջրաթ-ուլ-մասալ», «մուլք»:

Մալօջահաթ — مالوجهات (արաբ.) — Տերմինը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջհաթ» (կողմեր, վայրեր վարելահողեր) բառերից: «Մալ»-ը սեփականության հարկն էր, իսկ «ջհաթ»-ը գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալօջհաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և մի անգամ որոշված անխախտ չափերով գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ, շատ հաճախ, այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը, այս դեպքում «մալօջհաթ» տերմինը դիտվում էր որպես հավաքական հարկային տերմին:

Մակթա՛ — مقطع (արաբ.) — Կտրված, որոշված, վերջնական: Մթերքի մի որոշակի քանակ, կամ հաստատուն գումար, որ ամեն տարի սիստեմատիկ կերպով, անկախ հարկատու օբյեկտի տվյալ տարվա բերքից, պետք է հատուցվեր կալվածատիրոջը կամ պետությանը որպես ռենտա:

Մահալ — محال (արաբ.) — «Մահալլ — مَحَلّ» (վայր) բառի հոգնակի ձևն է, որ բառացի նշանակում է «վայրեր», բայց այս տերմինը հաճախ գործ էր ածվում արդի «շրջան»-ի իմաստով և համանիշ էր «նահիա»-ին (տես):

Մաղաֆ — տես մուաֆ:

Ման — من (պարսկ.) — Ծանրության չափ, որ հավասար էր մոտ 4,5 կիլոգրամի:

Մավզու՛ — موضوع (արաբ.) — Զեղչված, վերացված, ջնջված. հարկային մատյաններից ջնջված, հանված հողեր կամ այլ հարկատու օբյեկտներ:

Մարֆու՛-ուլ-կալամ — مرفوع القلم (արաբ.) — Բառացի նշանակում է «գրչից մերժված» իմա՝ ցուցակագրության չենթարկվող:

Մելիք — ملك (արաբ.) — Իր նախնական իմաստով նշանակում է «թագավոր», «տեր», «արքա»: Սակայն ԺԵ—ԺԸ դդ. մելիքներ էին կոչվում գյուղական կամ քաղաքային ավագները, որոնք ընտրվում էին համայնքի ավագների խորհրդի կողմից և ներկայացնում էին տվյալ համայնքը պետության և նրա պաշտոնյաների առաջ և պետական հարկերի ու այլ պարտավորությունների իրացման գործում կրում էին գլխավոր պատասխանատվությունը: Արցախում և Սյունիքում մելիքությունը փոխանցվում էր ժառանգաբար և ստացել էր հատուկ բովանդակություն: Այստեղ մելիքները փաստորեն վերածվել էին մանր

ֆեոդալ-իշխանների, որոնք մեծ մասամբ ունեին նման ծագում։ Սրանք հատուկ արտոնություններ էին վայելում և ունեին դատական և զինվորական իրավունք։

Միսալ — مثال *(արաբ.)* — Բառացի՝ «օրինակ»։ Այդպես էին կոչվում մուսուլմանական հոգևոր ատյանների (Շար՛ի) վճիռները։ Սովորաբար դրանք կոչվում էին «միսալ-և լազիմ-ուլ-իմթիսալ — مثال لازم الامتثال» (օրինակելի օրինակ), այսինքն՝ գործադրության և իրագործման արժանի վճիռ։

Մղարնամայ, ճիշտը՝ **մուաֆնամե** — معافنامه *(արաբ.-պարսկ.)* — Հարկերից և այլ պարտավորություններից ազատվելու, հարկային իմունիտետ շնորհելու փաստաթուղթ-արտոնագիր։

Մող — مل կամ **մոք** *(հուն.)* — Հացահատիկի չափ, մոտավորապես 25 լիտր տարողությամբ։

Մոհր — مهر *(արաբ.)* — Կնիք։

Մսխալ — مثقال *(արաբ.)* — Ծանրության չափ, մասնավորապես թանկարժեք մետաղների. հավասար է 4,5 գրամի։

Մուաֆ — معاف *(արաբ.)* — Հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն նաև միայն որոշ հարկերից և պարտավորություններից։ Համանիշ՝ «մուսալլամ», «թարխան» (տես)։

Մուբաշիր — مباشر *(արաբ.)* — Հարկահավաք, վերակացու, ձեռնավոր։ Այսպես էին կոչվում հատկապես այն պաշտոնյաները, որոնք չափում էին կալերում կուտակված բերքը և առանձնացնում էին կալվածատիրոջն ու պետությանը տրվող ռենտա-հարկը։ Համանիշ՝ «թահսիլդար — تحصیلدار»։

Մուդառիս — مدرّس *(արաբ.)* — Մուսուլմանական հոգևոր դպրոցի դասախոս։

Մութասադդի — متصدّی *(արաբ.)* — Վերակացու։ Այսպես էին կոչվում հատկապես դիվանական հարկային գործերի վերակացուները՝ «մութասադդիան-և ումուր-և դիվանի — متصدیان امور دیوانی»։

Մութասարրիֆ — متصرف *(արաբ.)* — Ֆինանսական պաշտոնյա, պետական նահանգային եկամուտների տնօրեն։

Մութավաջջեհաթ — متوجهات *(արաբ.)* — տես վջուհաթ։

Մութավաքքիլ — متوكّل *(արաբ.)* — Պետական, դիվանական հարկային գործերով զբաղվող լիազորներ՝ «վաքիլներ» (տես)։

Մուլք — ملك *(արաբ.)* — Սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված։ Վավերագրերում ժառանգաբար ստացած կալվածները անվանվում են «մուլք-և մովրուսի — ملك موروثی», իսկ գանձագին կալվածները՝ «մուլք-և զարխարիդ — ملك زرخرید»։

«Մուլք» էր անվանվում նաև հողային ռենտայի այն մասը, որ վճարվում էր կալվածատիրոջ (տես «մալիքանե», «բահրաչե», «ուջրաթ-ուլ-մասալ»)։

Մուկադդամ — مقدّم *(արաբ.)* — Առաջնորդ, գործ է ածվում ինչպես գյուղական ավագների, այնպես նաև հոգևորական առաջնորդների իմաստով։

Մուհդիս — محدث *(արաբ.)* — Բառացի նշանակում է «ըստեղծող», «առաջացնող», «որևէ պատահարի պատճառ դարձող»։ Այս տերմինը ավելի ուշ օգտագործվում էր վերացական գոյականի ձևով՝ «էհդաս — احداث»։ Երբ դարուղաները, թիուլդարները կամ տվյալ վայրի պետական հարկերի կապալառուները զբաղվում էին ռայաթների միջև ծագած վեճերի և հատկապես «էհդաս-և արբաե — احداث اربعه» («Չորս դիպվածներ» — սպանություն, բռնաբարություն, ատամ ջարդել և կուրացնել) կոչվող հանցանքների քննությամբ, դրա համար կողմերից գանձում էին հատուկ տուրք, որ կոչվում էր «մուհդիս»-ի կամ «էհդաս»-ի տուրք («ռասմ-և մուհդիս — رسم محدث», «ռասմ-և էհդաս — رسم احداث»)։ ԺԶ—ԺԷ դդ. գյուղերից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ որոշ գումար նախօրոք նախատեսվում էր «էհդաս»-ի տուրքի դիմաց, և համայնքը պարտավոր էր վճարել, անկախ այն բանից թե տվյալ տարվա ընթացքում վեճեր կամ տարաձայնություններ կլինե՞ն, թե ոչ։

Մուհթասիբ — محتسب *(արաբ.)* — Ֆինանսական հարկային պաշտոնյա, որ ճշտում էր հարկերն ու տուրքերը և հսկում շուկայի չափերն ու կշիռն։

Մումայյիզ — مميّز *(արաբ.)* — Բառացի «որոշող», «ճշտող»։ Այսպես էին կոչվում այն պաշտոնյաները, որոնք ստուգման

նպատակով չափում էին ցանքատարածությունները, այգիները, բանջարանոցներն ու այլ ստացվածքները, նշում, թե ինչքան եկամուտ կարող է ստացվել դրանցից և ըստ այնմ որոշում, թե որքան հարկ պետք է գանձվի:

Մուսալ — տե՛ս միսալ

Մուսալլամ — مسلم (արաբ.) — Հարկերից ազատված, հարկային իմունիտետ վայելող. գործածված է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ: Համանիշ «թարխան», «մուաֆ» (տե՛ս):

Յաթաղ — يتاق (թուրք.) — Հատկապես մանր եղջերավոր անասունների մակաղատեղ՝ նստելու, հանգստանալու կայան բաց դաշտում:

Յառլիղ — يرليغ (մոնղոլ.) — Հրովարտակ, արքայական հրամանագիր:

Յարղուչի — يرغوچى (մոնղոլ.) — Իլխանության շրջանում այսպես էին կոչվում պետության կողմից նշանակված դատավորները, որոնք առաջնորդվում էին մոնղոլական սովորույթային իրավունքի՝ «Յասա»-ի նորմերով:

Նազր — نذر (արաբ.) — Այն տուրքը, որ հավատացյալները ուխտում էին սիստեմատիկաբար հատուցել եկեղեցուն կամ մզկիթին:

Նահիա — ناحيه (արաբ.) — Գավառ, շրջան: Համանիշ՝ «մահալ» (տե՛ս):

Նամորդար — نامردار (պարսկ.) — Հանդիպում է միայն մեկ անգամ № 9 հրովարտակում: Այս բառը ըստ երևույթին կազմըված է «նա» ժխտական մասնիկից և «մորդար» (պիղծ) բառից: Ամենայն հավանականությամբ հայ ռայաթներից հավելյալ մի բան շորթելու միջոց էր մշակվել, նրանց տանը իջևանող պաշտոնյաների կողմից: Պատճառաբանելով, որ իրենք, շփվելով հայերի հետ և ննջելով նրանց տանը, ըստ մուսուլմանական հասկացողության, պղծվում էին, ուստի և իրավունք էին վերապահում իրենց այդ «վնասի» դիմաց որոշ դրամական հատուցում պահանջելու:

Նովրուզի — نوروزى (պարսկ.) — Նոր տարվա առաջին օրը՝ գարնանամուտին, ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին վճարվող պարտադիր նվեր-տուրքը:

Շահնա — شحنه (արաբ.) — Քաղաքի զինվորականության պետ, պարետ, որը վերահսկում էր նաև բնակչությունից գանձվող հարկերի իրացմանը: Վավերագրերում հաճախ հանդիպում է հոգն. «շահանի — شحانی» ձևով:

Շանակիսաթ — شناقصات (արաբ.) شنقصه բառի կրկնակի հոգնակի ձևն է (شناقصات—شناقص), որ նշանակում է ապօրինի պահանջմունքներ, շահատակություններ, հարստահարություններ:

Շար՚ — شرع (արաբ.) — Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները:

Շար՚ի — شرعى (արաբ.) — Օրինական, համաձայն «Շա՚ր»-ի օրենքների:

Շարիաթ — شريعت (արաբ.) — Մուսուլմանական կրոնական օրենքներ: Այսպես էր կոչվում նաև հոգևորականների խորհուրդը՝ «Շար»-ը (տե՛ս):

Շարիաթական — տե՛ս շար՚ի:

Շարի՚յյե — شرعيّه (արաբ.) — տե՛ս շար՚ի:

